

ՄԵՐ ԱՆԿԻՆԵՆ

Սերժ Սարգսեանի Խոստովանութիւնը Եւ Թիկունքէն Հարուածը՝ Ընդդիմութեան

2015-ին, այդ ժամանակուայ նախագահ Սերժ Սարգսեան հրապարակ դրաւ նոր սահմանադրութեան իր նախագիծը, որով կ'առաջարկուէր անցում կատարել նախագահական կառավարումէն դեպի վարչապետական համակարգ: Այդ օրերուն քաղաքական շրջանակներու եւ ժողովուրդի մօտ տիրող կարծիքը այն էր թէ, այդ փոփոխութեամբ Սարգսեան կը փորձէ երկարաձգել իր իշխանութիւնը, նկատի առնելով որ նախկին սահմանադրութեամբ իրաւունք չունէր վերընտրուելու: Այդ օրերուն Սերժ Սարգսեան վստահեցուց բոլորին, թէ ինք նպատակ չունի շարունակել մնալ իշխանութեան վրայ: Բաւական լայնածաւալ կեղծիքներու օգտագործմամբ սահմանադրական հանրաքուէն յայտարարուեցաւ անցած:

2018-ի Ապրիլին, դրժելով իր նախկին խոստումը Սերժ Սարգսեան նստեցաւ վարչապետ աթոռին, արդարանալով թէ ընդունած է այդ պաշտօնը՝ երիտասարդ ղեկավարներու սերունդ պատրաստելու համար: Կարճ ժամանակ ետք ծայր առաւ համաժողովրդային շարժումը, որու ալիքը եկաւ տապալելու Սարգսեանի գլխաւորած Հանրապետականներու իշխանութիւնը:

Այժմ Սերժ Սարգսեան լրիւ այլ կերպով կը բացատրէ իշխանութեան վրայ մնալու իր ձգտումը: «Արմնիզ» հեռատեսիլի ընկերութեան տուած հարցազրոյցի ընթացքին ան յայտարարած է որ, վարչապետի պաշտօնին մնացած է, որպէսզի իրագործէ դարաբաղեան հարցի կարգաւորման «լաւորովեան» տարբերակը, որու համաձայն Ատրպէյճանին կը վերադարձուէին 5 շրջանները, իսկ միւս երկուքի՝ Լաչինի ու Քելբաջարի վերադարձը, ըստ Սերժ Սարգսեանի, սերտօրէն կապուած պիտի ըլլար հանրաքուէի կատարման ժամկէտներուն հետ: «Ես ոչ միայն պատրաստ էի ստորագրել, այլ ես բացառապէս համաձայնել եմ մնալ ՀՀ վարչապետ, որ իրականացնեմ այդ տարբերակը: Եւ ես այն ոչ թէ պէտք է գաղտնի ստորագրէի, այլ բնականաբար, երբ հասնէինք նրան, ինչին ձգտում էինք, ապա այդ տարբերակը, ես չեմ ասում՝ հանրաքուէի կը դնե-

Հայաստանի ԱԳ Նախարարուծինը Կը Հակադարձէ Նոյեմբեր 9-ի Յայտարարութեան Սէջ Որեւէ Միջանցքի Մասին Խօսք Չկայ

Հայաստանի վարչապետի, Ռուսաստանի եւ Ատրպէյճանի նախագահներու՝ 2020 թուականի Նոյեմբեր 9-ի յայտարարութեան 9-րդ կէտը որեւէ միջանցքի ստեղծման մասին դրոյթներ չի պարունակեր: Հայաստանի տարածքով անցնող իւրաքանչիւր ճանապարհ կամ հաղորդակցութեան ուղի կայ եւ պիտի մնայ բացառապէս Հայաստանի ինքնիշխանութեան եւ իրաւագորութեան ներքոյ:

Այս մասին յայտարարած է ՀՀ Արտաքին Գործոց Նախարարութեան մամլոյ խօսնակ՝ Աննա Նաղդալեան՝ պատասխանելով «Արմէնիքէս» լրատուական գործակալութեան հարցին, թէ Ատրպէյճանի նախագահ՝ Իլհամ Ալիեւ յայտարարած է, որ «Նոյեմբեր 10-ին ստորագրուած համաձայնագրութեան մէջ առկայ է յատուկ դրոյթ Նախիջեւանի միջանցքի ստեղծման մասին, եւ ինչպէ՞ս կը մեկնաբանէ այդ:

«Նոյեմբերի 9-ի եռակողմ յայտարարութեան 9-րդ կէտում նշուած է «տարածաշրջանում բոլոր տնտեսական եւ փոխադրային կապերի ապաշրջափակման» մասին, եւ հենց այս մօտեցմամբ է Հայաստանը հանդէս գալիս տարածաշրջանում



Արտաքին Գործոց
Նախարարութեան մամլոյ
խօսնակ՝ Աննա Նաղդալեան

կայունութիւն հաստատելու եւ համագործակցութեան հեռանկարների հարցերում: Վերոնշեալ կէտը չի պարունակում որեւէ միջանցքի ստեղծման դրոյթներ: Հայաստանի տարածքով անցնող իւրաքանչիւր ճանապարհ կամ հաղորդակցութեան ուղի կայ եւ լինելու է բացառապէս Հայաստանի ինքնիշխանութեան եւ իրաւագորութեան ներքոյ», պատասխանած է Նաղդալեան:

Ամերիկացի 54 Ծերակուտականներ Պայտընին Յորդորած Են Ծնշումներ Գործադրել Թուրքիոյ Վրայ



ԱՄՆ նախագահ՝ Ջո Դայտըն

Ամերիկացի 54 ծերակուտականներ, թէ՛ Դեմոկրատական, թէ՛ Հանրապետական կուսակցութիւններու անդամներ նամակ յղած են նախագահ՝ Ջո Դայտընին՝ յորդորելով ճնշումներ գործադրել թուրքիոյ վրայ մարդու իրաւունքներու խախտումներու ինչպէս նաեւ արտաքին «ուզմատենչ եւ մարտական» քաղաքականութեան համար:

Ծերակուտականները յիշատակած են նաեւ դարաբաղեան պատերազմին թուրքիոյ դերակատարու-

թիւնը՝ պնդելով, որ թուրքիան խրախուսած է Ատրպէյճանը բռնութիւններու դիմելով լուծել տարածքային վէճը Հայաստանի հետ: Անոնք մեղադրած են էրտողանը թուրքիոյ մէջ քննադատական լրատուամիջոցները լուցնելու, լրագրողները բանտարկելու եւ անկախ դատաւորներէն ազատելու մէջ:

«Նախագահ էրտողան երկիրը կը տանի աճող մենակատարութեան ուղիով: Ան կանոնաւոր կեր-

Արցախի Նախագահը Առաջին Անգամ Ըլլալով Հանդիպած է Ատրպէյճանի Պաշտօնական Ներկայացուցչին Հետ

Արցախի նախագահը Փետրուար 12-ին առաջին անգամ ըլլալով հանդիպած է Ատրպէյճանի պաշտօնական ներկայացուցչին հետ: Հանդիպման ընթացքին քննարկուած են գերիններու վերադարձին, անյայտ կորածներու որոնման առնչուող եւ մարդասիրական հարցեր: Ներկայ եղած են նաեւ Հայաստանի Ազգային Անվտանգութեան Ծառայութեան տնօրէն՝ Արմէն Աբազեանը եւ Արցախի մէջ Ռուսաստանի խաղաղապահ զօրակազմի հրամանատար՝ Ռուստամ Մուրատովը:

«Աւելին ասել չեմ կարող: Հանդիպումը տեղի է ունեցել այն տարածքում, որը այս պահին ուսական խաղաղապահների վերահսկողութեան տակ է», - «Ազատութիւն»-ի հետ զրոյցի ընթացքին ըսած է Արցախի նախագահի մամլոյ խօսնակը: Հարցին, թէ Ատրպէյճանական կողմէն ով մասնակցած է հանդիպման, Լուսինէ Աւանեսեան արձագանգած է. - «Այդ տեղեկութիւնը հրապարակելու իրաւասութիւնը արդէն ատրպէյճանական կողմինն է, մենք հրապարակել ենք, թէ ով է եղել մեր կողմից»:

Քառակողմ հանդիպման ընթացքին քննարկուած են նաեւ Արցախեան առաջին պատերազմի ընթացքին անհետ կորած համարուող Ատրպէյճանի քաղաքացիներու ճակատագիրը պարզելուն վերաբերող հարցեր:

Ինչ կը վերաբերի հանդիպման ձեռք բերուած պայմանաւորուածութիւններուն, Լուսինէ Աւանեսեան մանրամասնութիւններ չ'ներկայացուց:

Ամերիկայէն Հայաստան Դրամական Փոխանցումները Աճած Են

2020 թուականին ԱՄՆ-էն Հայաստան փոխանցուած միջոցները: Այսպէս, 2020 թուականին ԱՄՆ-էն ֆիզիքական անձերու կողմէ դրամատուններու միջոցով Հայաստան փոխանցումները կազմած են 458 միլիոն 720 հազար տոլար՝ 2019 թուականի 280 միլիոն 911 հազարի փոխարէն:

ՀՀ-էն ֆիզիքական անձերու կողմէ ԱՄՆ փոխանցուած է 162 միլիոն 326 հազար տոլար: Նշենք, որ 2019-ին փոխանցուած էր 274 միլիոն 974 հազար տոլար:

Ընդ որում, ԱՄՆ-էն Հայաստան փոխանցումներուն թիւը 2020-ին ամէնէն մեծն է՝ սկսած 2004 թուականէն:

ՎԱՅԱՍԱՆԵԱՆ ՄԱՍԻՍ

Հայկական Բանակի Հզորացումը Կարող է Կանխել Տարածաշրջանի Թրթացումը

ԼՈՒՄԻՆԵ ՄԽԻԹԱՐԵԱՆ

Կարս քաղաքում աւարտուեցին Փետրուարի 1-ից սկսուած «Ձմեռ 2021» թուրք-ատրպէյճաանական համատեղ զորավարժութիւնները: Դրանցում ներգրաւուած էին տանկային եւ հրէտանային ստորաբաժանումներ, դիպուկահարներ խմբեր, յատուկ ջոկատայիններ եւ օդուժ: «Ռազմինֆո» կայքի վերլուծաբան Սոնա Խաչատրեանը «Հայաստանի Հանրապետութիւն» օրաթերթի հետ զրոյցում նշեց, որ թէեւ թուրքական կողմը յայտարարել էր, թէ զորավարժութիւններն ամենամասշտաբայինն են վերջին տարիների ընթացքում, սակայն նման պնդում անելու համար բաւարար հիմքեր չկան:

Թուրքական աղբիւրները նշում են, որ զորավարժութիւններին մասնակցել են 1268 զինուորական, որից 66-ը՝ Ատրպէյճանից: Վարժանքներին ներառուած էին 190 միաւոր զինտեխնիկայ, եւ տարբեր տեսակի ու տրամաչափի 218 զինատեսակ: Ներգրաւուած է եղել նաեւ Նախիջևեանի առանձին համագործակցութեան ջոկատայինները: Նրանց հետ 4 միաւոր S-90 տանկ, իւրաքանչիւր տանկի անձնակազմը՝ երեք հոգի, այսինքն՝ 12-ը տանկիստ էին, իսկ միւսները՝ յատուկ ջոկատայիններ: Թուրքական բանակի կողմից մասնակցել են հարուածային ATAK ուղղաթիւներ, հրէտանային միջոցներ, Մ-60 տանկեր: Թուրքական կողմը յայտարարել էր, որ այս զորավարժութիւնների ընթացքում փորձարկուելու են ինչպէս նոր, դեռեւս բանակի սպառազինութեան մէջ չներգրաւուած, այնպէս էլ՝ նոր զինտեխնիկա: «Տեղեկութիւններն այդ մասով շատ չեն: Կարողացել ենք պարզել, որ խօսքը հիմնականում վերաբերում էր գրահամեքենաներին, մասնաւորապէս՝ թուրքական կողմից կիրառուելու են 2020 թուականին ՁՈՒ-ին մատակարարուած գրահամեքենաներ, Քիրփի 2 եւ -4K ականի վրայ տեղաշարժուելու համար նախատեսուած մեքենաներ», - ասաց Խաչատրեանը:

Այն, որ զորավարժութիւնները խաղարկուած էին Կարսի «Աքբաբա» զորավարժարանում, որը սահմանակից է ՀՀ-ին եւ յատկապէս Գիւմրու ուսումնական ռազմաբազային, յատակ ուղերձներ ունէին զորավարժութիւնների հիմնական թիրախների մասով:

Փետրուարի 11-ին թուրքիայի պաշտպանութեան նախարար Հուլուսի Աքարի հրաւերով զորավարժութիւնների ցուցադրական հատուածին ներկայ գտնուելու համար թուրքիա էր մեկնել Ատրպէյճանի պաշտպանութեան նախարար, գեներալ-գնդապետ Ջաբիր Հասանովը: Թուրքական լրատուամիջոցները նշում են, որ համատեղ զորավարժութիւնների շրջանակներում մշակուել են տանկային եւ հրէտանային ստորաբաժանումների հմտութիւնները՝ ճշգրտորէն խոցելով նմանակուած թշնամութիրախները: Մշակուած սցենարի համաձայն՝ ինդիւր է դրուած եղել նաեւ անօդաչու թռչող սարքերի միջոցով պարզել պայմանական հակաակորդի շտաբի դիրքերը, որից

յետոյ ուղղաթիւներին տուեալ գոտում վայրէջք պէտք է կատարէին թուրքիայի ու Ատրպէյճանի զինուած ուժերի յատուկ նշանակութեան ջոկատները: Իսկ հրամանատարական կազմը վերացնելուց յետոյ ATAK ուղղաթիւներից գրոհ էր իրականացուած հակաակորդի դիրքերի դէմ, ոչնչացուած են փախուստի ուղիները, ներառեալ կամուրջները:

Կարող ենք նկատել, որ «անսպում» պատերազմի մոտելը, որը փորձարկուեց արցախեան 44-օրեայ պատերազմում, կիրառուել է նաեւ համատեղ զորավարժութիւնների ընթացքում: Սոնա Խաչատրեանը նշեց, որ օգտագործուել են հարուածային եւ անօդաչու թռչող սարքեր. խաղարկուել է «Բայրաքթար» անօդաչու թռչող սարքը, ինչպէս նաեւ թուրքական ATAK եւ ամերիկեան ուղղաթիւներ:

Ռազմական փորձագէտ Արթուր Եղիազարեանի խօսքերով՝ այս զորավարժութիւնների առանձնայատկութիւնն այն էր, որ յատակ նշում էր նոր զինտեխնիկայի փորձարկումների մասին, ինչպէս նաեւ այնպիսի ստորաբաժանումների՝ դիւերսիոն խմբերի ներգրաւման մասին, որոնք լեռնային պայմաններում պէտք է յայտնաբերէին հակաակորդի ականանետային միջոցները եւ ոչնչացնէին: «Այս զորավարժութիւնների անցկացման պայմաններն իրենց բնոյթով շատ նման էին հենց Հայաստանի տարածքում գործելուն: Սա, փաստօրէն, պանթուրքական՝ միացեալ թուրքական բանակի ստեղծմանն ուղղուած քայլերից մէկն էր, որն այս պահին ընդգրկում է ատրպէյճանաթուրքական զորամիաւորումները: Այս զորավարժութիւնները ուղերձ էին մեզ վախեցնելու առումով, բայց միւս կողմից՝ պէտք է անտեսել, որ նրանք իսկապէս նախապատրաստուած են պատերազմի՝ մարտունակ պահելով բանակը», - մանրամասնեց Եղիազարեանը: Թուրքական հեռուորաբանութիւնը նոյնպէս յստակ ցոյց է տալիս թուրքիայի հեռահար նպատակները, մասնաւորապէս Կարաբեքի, էնվեր փաշայի նկարների շրջառումը ազդակներ էին, որ թիրախը Հայաստանն է: «Այս վերջին օրերին, յատկապէս ոչ պաշտօնական, բայց իշխանամէտ լրատուամիջոցներով՝ թէ հեռուստատեսային եւ թէ մամուլով, անընդհատ խօսում են թուրքական ծրագրերի մասին: Բացայայտ նշում են այն երկրները, որոնք մինչեւ 2050 թուականը նախատեսում են ընդգրկել իրենց պետութեան սահմաններում: Դրանցից մէկը Հայաստանն է», - ընդգծեց զրուցակիցս:

Այսօրուայ դրութեամբ, տեսնելով թուրքիայի կոնկրետ քայլերը եւ յայտարարութիւնները, միանշանակ է, որ տարածաշրջանում պէտք է ակնկալել խաղաղութեան հաստատում: Եղիազարեանը, սակայն, վստահ է, որ խաղաղութեան միակ երաշխիքը կարող են դառնալ մեր արագ ինքնակազմակեր-

Սերժ Սարգսեանի Նուրբ Խոստովանութիւնը

ՅԱԿՈԲ ԲԱՂԱԵԱՆ

Ինձ դրել էին ցուզուանգի առաջ, իր բացառիկ հարցազրոյցում յայտարարում է Հայաստանի երրորդ նախագահ Սերժ Սարգսեանը՝ խօսելով 2018-ի իրադարձութիւնների մասին: Ովքեր ծանօթ են շախմատին, պատկերացնում են, թէ ինչ է նշանակում ցուզուանգ: Դա ըստ հուլիանի իրավիճակ է, երբ կատարուելիք քայլերը հենց սկզբից նկատելիօրէն վատն են, սակայն չկայ անելու այլ բան:

Ու թէեւ Սարգսեանը խօսում է 2018-ի մասին, այդուհանդերձ կան հիմքեր՝ կարծելու, որ տողատակում նրա խօսքը կամ գնահատականը վերաբերում է 2018-ի ինդիւր ընդհանրապէս, ոչ թէ լոկ թաւշեայ յեղափոխութեան իրադարձութիւններին, ուժ կիրառելի կիրառուելուն:

Սերժ Սարգսեանը ցուզուանգում էր թերեւս աւելի վաղ՝ հենց 2018-ի վարչապետի պաշտօնի առումով որոշման շրջանում, եւ նա թերեւս ակնարկում է, որ վարչապետի պաշտօնին գնալու որոշումն էր ցուզուանգի հետեւանք, երբ էր կարող կայացնել չգնալու որոշում, այսինքն՝ չունէր չգնալու որոշման դէպքում այլ տարբերակ: Խօսքը, հասկանալի է, ոչ թէ մեխանիկական, այլ քաղաքական գործուն բովանդակութեամբ տարբերակների մասին է, որոնք չէին առաջացնի բարդութիւններ: Ի վերջոյ, ակնառու է, որ վարչապետի պաշտօնին չառաջադրուելու դէպքում Հայաստանում ուղղակի բացառուելու էր յեղափոխական զարգացումը, կամ դրա հաւանականութիւնը լինելու էր թերեւս մէկ տոկոսից էլ պակաս:

Ուրեմն ինչո՞ւ Սարգսեանը գնաց առաջադրման: Դա պարզունակ իշխանատենչութիւն էր. հազիւ թէ: Հայաստանի իշխանութեան հարցը մի շարք ներքին ու

պումն ու բանակի հզորացումը: Սոնա Խաչատրեանի խօսքերով՝ իւրաքանչիւր զորավարժութիւն ուժի ցուցադրում է, նաեւ մարտական ոգու եւ կարողութիւնների բարձրացման միջոց: Այս ամէնը հաշուի առնելով՝ նա նոյնպէս կարեւորում է մեր բանակի մարտունակութեան բարձրացումն ու հզորացումը, որպէսզի հնարաւոր լինի տարածաշրջանում խաղաղութիւն ապահովել: Ինչ վերաբերում է թուրքիայի մինչեւ 2023 եւ յետագայ՝ մինչեւ 2050 թուականների ծրագրերին, ապա զրուցակիցս շեշտում է դրանց ծաւալապաշտական բնոյթը: Այդ մասին ակնյայտ է դառնում հեռուորաբանութիւնից եւ թուրքիայի զինման տեմպերից: «Թուրքիայի զինուած ուժերի ներուժը բաւական մեծ է, բայց դա չի նշանակում, որ ինչոր մի պահ հնարաւոր չի լինի հակազդել, օրինակ՝ համատեղ ուժերով: Չմոռանանք, որ թուրքիան ինդիւրներ ունի իր բոլոր հարեւանների հետ», - ասաց նա:

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԻՒՆ»

արտաքին գործօնների, այդ թւում՝ արցախեան հարցի աշխարհաքաղաքական նշանակութեան բերումով ուղղակի չէր կարող մնալ որեւէ մէկի պարզունակ իշխանատենչութեան «յոյսին»: Այդ հարցը չափազանց բարդ ու նշանակալի հարց է՝ չափազանց պարզունակ գործօններով հանգուցալուծուելու համար:

Ըստ այդմ՝ Սերժ Սարգսեանի որոշումը քաղաքական էր եւ բխում էր իրավիճակից, որն էլ նա տողատակում անվանում է ցուզուանգ: Ի վերջոյ, նա այսօր, աւելի շուտ, կարող է ասել, որ ցուզուանգ էր հրաժարականի որոշումը, ոչ թէ վարչապետութեան գնալու: Որովհետեւ վարչապետութեան պարագայում նա պէտք է խօսի այն մասին, թէ ինչո՞ւ էր ցուզուանգ, ինչո՞ւ նա չընտրեց իշխող համակարգից որեւէ այլ վարչապետի թեկնածու, ինչո՞ւ 2016-ին բերեց Կարէն Կարապետեանին, բայց չառաջադրեց նրան 2018-ի համար, ինչո՞ւ 2017 թուականին ՌԴ նախագահ Պուտինը, խորհրդարանի ընտրութիւնից օրեր առաջ ընդունելով Սերժ Սարգսեանին, Մոսկուայում յայտարարեց, թէ յոյս ունի, որ Հայաստանը Սարգսեանի գլխաւորութեամբ կ'անցնի անցումային շրջանը՝ նախագահականից խորհրդարանական կառավարման մոտել: Դա յո՞յս էր, թէ՞ զգուշացում Սերժ Սարգսեանին, որ Ռուսաստանը չի ընդունի վարչապետի այլ թեկնածու, ինչն էլ ստեղծում էր ցուզուանգը:

«ԱՌԱՋԻՆ ԼՐԱՏՈՒԱԿԱՆ»



ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԵՐԹ

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԵՐԹ

ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ՝
ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ԴՆԱՄԿԵԱՆ
ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
Արեւմտեան Ամերիկայի Շրջանի

ԽՄԲԱԳԻՐ
ԳՐԻԳՈՐ ԽՈՏԱՆԵԱՆ

ՎԱՐԻՉ ՏՆՕՐԵՆ
ՎԱՐԷ ԱՋԱՊԱՐԵԱՆ

MASSIS Weekly
Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104
Phone: (626) 797-7680
Fax: (626) 797-6863
E-Mail: massis2@earthlink.net
http://www.massisweekly.com

(USPS 667-310) (ISSN 0744-334X)
Published Weekly
Except Two Weeks in August

ANNUAL SUBSCRIPTION RATES:
USA \$50.00, \$100.00 (First Class)
Canada \$125.00 (Air Mail)
Overseas \$250.00 (Air Mail).
All payments must be made in US funds & Drawn on US banks.

Periodicals Postage Paid
at Pasadena CA.
Please Send Address Change To
MASSIS WEEKLY

Հրատարակելով հայաստանեան մամուլին մեջ լոյս տեսնող տարբեր յօդուածներ «ՄԱՍԻՍ» անպայմանօրէն չի բաժնէր հոն արտայայտուող բոլոր միտքերը

ԼՈՒՐԵՐ

Վազգէն Մանուկեան Կոչ Կ'ընէ «Բակերում Ջոկատներ Կազմելու»

«Հայրենիքի Փրկութեան Շարժման» միասնական թեկնածու Վազգէն Մանուկեանը Ազատութեան հրապարակում հրաւիրուած հաւաք-քննարկման ընթացքում նշեց, որ Նիկոլ Փաշինեանը ինքնակամ չի հեռանալու իշխանութիւնից: «Մենք պէտք է կոտորենք իր ոտքերը, իր յենարանները»:

Ըստ Մանուկեանի՝ իրական յենարանը Ազգային ժողովի «Իմ Քայլը» խմբակցութիւնն է: «Բոլորի վրայ պէտք է աշխատել»:

Մանուկեանը առաջարկեց Ազատութեան հրապարակը դարձնել իրենց շարժման կենտրոնը: «Մեզ պէտք է, որ ամէն թաղում, ամէն կոլեկտիվում, ամէն բնակավայրում ստեղծենք կոմիտէներ, ինքնակամ կազմակերպէք այդ կոմիտէները: Բոլոր թաղերում, հարեւաններին հետ, վիճէք, հաւաքէք խմբեր, շոկատներ կազմէք, եւ մեր կենտրոնը այստեղ կը լինի: Մի խումբը կը գոյ, կը գնայ մի պատգամաւորի ետեւից, միւս խումբը կը գնայ մի ոստիկանի ետեւից, բաց սա կը լինի մեր կենտրոնը»:

Արմաւիրի քաղաքապետ Դաւիթ Խոզդարեանը ֆեյսբուքեան գրառմամբ անդրադարձած է Վազգէն Մանուկեանի այս յայտարար-



«Հայրենիքի Փրկութեան Շարժման» միասնական թեկնածու Վազգէն Մանուկեան

րութեանը:

«Վազգէն Մանուկեանին ասէք խելք հաւաքի: Հայաստանում ոչ մի շոկատ չի կազմուի ներհայաստանյեան ինչ-որ հարցեր լուծելու համար, Հայաստանում բարիկաղներ չեն կառուցուի, եթէ հզոտարիքում գոնէ սա չի հասկացել, ուրեմն հեչ լաւ չի», - այսպէս արձագանքած է Արմաւիրի քաղաքապետը:

Ջարուհի Փոստանջեանի Նկատմամբ Յարուցուած Է Քրէական Գործ՝ Սուտ Մատուցելու Կատարելու Համար

«Երկիր Ծիրանի» կուսակցութեան նախագահ՝ Ջարուհի Փոստանջեան վարչապետի եւ իր տիկնոջ վերաբերեալ կատարած յայտարարութիւններուն առթիւ, Յատուկ Բննչական Ծառայութիւն հրաւիրուած է նիւթերու նախապատրաստման ծիրէն ներս յանցագործութեան մասին հաղորդում ներկայացնելու եւ բացատրութիւններ տալու:

Փոստանջեան աւելի վաղ յայտարարած էր, որ Նիկոլ Փաշինեան եւ իր կինը երազած են յանձնել հողերը, վերջիններս այդ մասին 2008 թուականին գրած են, հաւաքագրուած են անոր ներքոյ եւ գործարքը ընելու վերաբերեալ գումարներ ստացած են:

Ջարուհի Փոստանջեան, ներկայանալով վարոյթը կատարող մարմին, ըստ ՅՔԾ-ի, շարունակած է պնդումներ կատարել վարչապետի եւ իր կնոջ կողմէ յանցանք կատարելու վերաբերեալ՝ հրաժարելով, սակայն, յանցագործութեան մասին գրաւոր հաղորդում եւ բացատրութիւններ ներկայացնելէ:

Իրականպէս կառուցը հաղորդած է, որ նկատի ունենալով, որ Ջարուհի Փոստանջեանի արարքին մէջ առերեւոյթ առկայ են սուտ մատուցութեան յատկանիշներ, որ գուցորդուած է առանձ-



«Երկիր Ծիրանի» կուսակցութեան նախագահ՝ Ջարուհի Փոստանջեան

նապէս ծանր յանցագործութեան մէջ մեղադրելով, նոյն օրը Յատուկ Բննչական Ծառայութեան քննիչի որոշմամբ քրէական օրէնսգրքի 333-րդ յօդուածի 2-րդ մասի 1-ին կէտով (սուտ մատուցելու, որ գուցորդուած է ծանր կամ առանձնապէս ծանր յանցագործութեան մէջ մեղադրելով) յարուցուած է քրէական գործ, որ ուղարկուած է գլխաւոր դատախազութիւն՝ քննչական ենթակայութեան հարցը որոշելու նպատակով:

Նախագահ Արմէն Սարգսեան Վերադարձած Է Երեւան

Հայաստանի նախագահ՝ Արմէն Սարգսեան անցեալ շաբթուայ վերջին վերադարձած է Երեւան, տեղեկացուցած է նախագահի գրասենեակը:

Ըստ հաղորդագրութեան, բժիշկներու յորդորով նախագահը բուժումը կը շարունակէ նաեւ Երեւան:

Յունուար 3-ին Արմէն Սարգսեան Լոնտոնի մէջ ենթարկուած էր ոտքի վիրահատութեան: Օրեր անց նախագահի գրասենեակը հաղորդած էր, որ Արմէն Սարգսեան վարակուած է «Քորոնա» ժահրով:

Փաշինեանի Գլխաւորութեամբ Տեղի Ունեցած Է Հակաքորուփցիոն Քաղաքականութեան Խորհուրդի Նիստ

Վարչապետ Նիկոլ Փաշինեանի գլխաւորութեամբ կառավարութենէն ներս տեղի ունեցած է Հակաքորուփցիոն քաղաքականութեան Խորհուրդի նիստ:

Վարչապետը կարեւորած է հակաքորուփցիոն միջոցառումներու հասցէականութիւնը եւ հետաքրքրուած է անոնց գործնական արդիւնաւէտութեամբ: Նիկոլ Փաշինեան, մասնաւորապէս, կարեւորած է քաղաքական քորուփցիայի դրսեւորումներու կանխարգելման ուղղութեամբ հետեւողական աշխատանքը: Այս ծիրէն ներս Քորուփցիայի կանխարգելման յանձնաժողովի նախագահ Հայկուհի Յարութիւնեան նշած է, որ Յանձնաժողովը շարունակական ուսումնասիրութիւններ կ'իրականացնէ պետական պաշտօն գբաղցնող եւ միաժամանակ ձեռնարկատիրական գործունէութիւն իրականացնող անձանց նկատմամբ, եւ որոշ պաշտօնեաներու վերաբերեալ ստուգումներու արդիւնքները, եզրակացութիւնները ուղարկուած են իրաւապահ մարմիններուն: Կան յարուց-

ուած քրէական գործեր, որոնք կը գտնուին նախաքննութեան փուլի մէջ:

Յարութիւնեան նշած է, որ հաշուետու ժամանակահատուածին մէջ կատարուած է պետական պաշտօններուն նշանակման ենթակայ 47 անձի, այդ շարքին՝ դատախազի թեկնածուներու, դատաւորներու յաւակնորդի թեկնածուներու, Սահմանադրական դատարանի դատաւորի թեկնածուներու, Բարձրագոյն դատական խորհուրդի անդամներու թեկնածուներու բարեվարքութեան ստուգում, որմէ 26-ը՝ դրական, 16-ը՝ դրական վերապահումով, 4-ը՝ բացասական, 1-ի առնչութեամբ եզրակացութիւն չէ ներկայացուած:

Օրակարգի հարցերու շրջագիծէն ներս Արդարադատութեան նախարարը ներկայացուցած է Հակաքորուփցիոն կոմիտէի եւ Հակաքորուփցիոն դատարաններու ստեղծմանն ուղղուած օրէնսդրական փաթեթներու եւ անոնց գործունէութեան ապահովման նպատակով կատարուող քայլերը:

Մասնագէտները Կը Պնդեն, Թէ Իշխող Ուժը Կը Փորձէ Սահմանափակել Մամլոյ Ազատութիւնը

Հայաստանի մէջ լրատուամիջոցներու ազատութիւնը լուրջ մարտահրաւէրներու առաջ է, համոզուած է Երեւանի Մամլոյ Ակումբի նախագահը: Պորիս Նաւասարդեան իշխող ուժի ոլորտին առնչուող օրէնսդրական նախաձեռնութիւնները որակում է որպէս ճնշում մամուլի ազատութեան վրայ:

«Արդէն իսկ հոգեբանական ճնշում է լրատուամիջոցների վրայ, դա ահնջատ է, եւ կարծում եմ՝ այն ունի շատ յստակ նպատակ՝ աւելի բարենպաստ դարձնել տեղեկատուական միջավայրը Հայաստանի իշխող քաղաքական ուժի համար: Եւ բնականաբար, դա չի կարող ընդունելի համարուել, մանաւանդ որ շատ լուրջ հակասութիւնների մէջ են մտնում եւ միջազգային համաձայնագրի, եւ կարծում եմ նաեւ Հայաստանի Սահմանադրութեան հետ», - ըսած է Նաւասարդեան:

Իշխանական պատգամաւորներու մեծ աղմուկ բարձրացուցած օրինագիծերէն մէկով կ'առաջարկուի խստացնել վիրահարանքի ու գրապարտութեան համար սահմանուած փոխհատուցման չափը, միւսով ալ՝ արգիլել լրատուամիջոցները, հրապարակումներով անանուն աղբիւրներուն յղում տալը: Վիճալարոյց ձեւակերպումը, սակայն, քննադատութիւններէն յետոյ պիտի փոխուի: Օրինագիծի հեղինակներէն, իշխող ուժի պատգամաւոր՝ Արթուր Յովհաննիսեան «Ազատութիւն»ի հետ գրոյցի ընթացքին ըսած է, որ նոր փոփոխութեամբ կ'առաջարկուի արգիլել արդէն անյայտ ծագմամբ աղբիւրներուն յղում տալը: Պատգամաւորը ընդհանրապէս իշխող ուժին ուղղուած քննադատութիւնը անհիմն կը համարէ. «Որեւէ մի մասնագէտ, ով հանրային հնչեցրել է քննադատութիւն» մի խումբ պատգամաւորների կողմից ֆինանսական թափանցիկութեան, նոյնականացման տուեալների եւ անյայտ ծագում ունեցող աղբիւրնե-



Երեւանի Մամլոյ Ակումբի նախագահ Պորիս Նաւասարդեան

րի մասին նախագիծի կամ իմ գործընկեր Ալեն Սիմոնեանի նախագիծի վերաբերեալ, չի բերել յստակ հիմնաւորում»:

Խօսքի եւ մամուլի ազատութիւնը սահմանափակելու որեւէ միտում չկայ իշխող ուժի նախաձեռնութիւններուն մէջ, վստահեցուցած է Արթուր Յովհաննիսեան:

Ոլորտի փորձագէտներն ու լրագրողները խնդրալարոյց կը համարեն նաեւ պատերազմէն յետոյ Ատրպէյճանին սահմանակից դարձած Սիւնիքի մէջ լրատուամիջոցներու աշխատանքը սահմանափակող որոշումը: Իշխանական պատգամաւորը այստեղ եւս խնդիր չի տեսներ, վստահ է, որ սահմանափակումները անվտանգութեան համար են, ներառեալ՝ լրատուամիջոցներու:

Օրերս Հայկական միասնական տեղեկատուական կեդրոնը տեղեկացուց, որ Սիւնիքի մէջ լուսաբանումներ կատարելու համար լրագրողները պէտք է գրաւոր հարցում ուղարկեն Ազգային անվտանգութեան ծառայութիւն: Կեդրոնէն պատգամաբերած են, թէ սահմանափակումները պայմանաւորուած են ստեղծուած անմիջական իրավիճակով եւ անվտանգութեան նկատուածներով:

ԼՈՒՐԵՐ

Մարտին Կը Սկսի Գործել ՅՅ-ԵՄ Գործընկերութեան Համաձայնագիրը



Եւրոպական Միութիւնը փետրուար 11-ին, ծանուցած է Հայաստանին՝ ԵՄ եւ ԵՄ անդամ երկիրներու կողմէ ՀՀ-ԵՄ Համապարփակ եւ ընդլայնուած գործընկերութեան համաձայնագրի (ՀԸԳՀ) վաւերացման գործընթացքի աւարտի մասին: Համաձայնագիրը լիարժեքօրէն ուժի մէջ կը մտնէ Մարտ 1-ին:

Արտաքին Գործոց Նախարարութեան յայտարարութեան համաձայն՝ համաձայնագիրը, որ ստորագրուած է 2017 թուականի Նոյեմբեր 24-ին Պրիւքսելի մէջ կայացած Արեւելեան գործընկերութեան զագաթնաժողովի ծիրէն ներս, նոր՝ գործընկերային մակարդակի կը բարձրացնէ Հայաստանի եւ Եւրոպական Միութեան երկկողմանի յարաբերութիւնները եւ կը կանոնակարգէ երկխօսութիւնը քաղաքական եւ տնտեսական բնագաւառներէն ներս, ինչպէս նաեւ ոլորտային համագործակցութիւնը եւ առեւտրային յարաբերութիւնները:

«Համաձայնագրի արդիւնաւէտ կիրարկումը շոշափելի արդիւնքներ կը բերի մեր քաղաքացիներին՝ լայնածաւալ բարեփոխումների միջոցով խթանելով ժողովրդավարութեան, քաղաքական, տնտեսական եւ ընկերային կայունութեան ամրապնդումը եւ ժամանակի ընթացքում իր ազդեցութիւնը կ'ունենայ մեր քաղաքացիների բարեկեցութեան եւ կենսակերպի վրայ:»

Հարկ է ընդգծել, որ ՀԸԳՀ-ն անդրադառնում է Լեւոնային Ղարաբաղի հակամարտութեան խաղաղ կարգաւորման հարցին՝ վերահաստատելով ԵՄ յայտարարուած յանձնառութիւնը՝ «Չկայ ԵՄ-ի կողմից համաձայնագրի ջանքերին ու մօտեցումներին, որոնք ուղղուած են Լեւոնային Ղարաբաղի հակամարտութեան հանգուցալուծմանը, մասնաւորապէս՝ ժողովուրդների իրաւահաստատութեան եւ ինքնորոշման իրաւունքի հիման վրայ», - շեշտած է արտաքին քաղաքական գերատեսչութիւնը:

ԵՄ-Ը Ու ԱՅԿ-Ը Պատուաստներու Հարցով Կ'աջակցին Հայաստանին

Եւրոպական Միութիւնն ու Առողջապահութեան Համաշխարհային կազմակերպութիւնը (ԱՀԿ) համատեղ ջանքերով կ'աջակցին շարք մը երկիրներու՝ անոնց կարգին Հայաստանին, բնակչութեան COVID-19-ի դէմ պատուաստելու հարցով: Այս մասին յայտնած է Reuters լրատուական գործակալութիւնը:

Եւրոպական Միութիւնն ու ԱՀԿ-ն մասնաւորապէս յայտարարած են, որ 40 միլիոն եւրօ պիտի յատկացնեն երեք տարուայ ընթացքին Արեւելեան Գործընկերութեան անդամ երկիրներուն՝ Հայաստանին, Վրաստանին, Ատրպէյճանին, Պելառուսիոյ, Ուքրանիոյ եւ Մոլդովիոյ, «Քորոնա» ժահրի դէմ պատուաստներու հասանելիութիւն ապահովելու համար:

«Սկզբնական փուլին, միջոցները կ'ուղղուին նախապատրաստական աշխատանքներուն՝ ինչպիսին են ծրագրաւորելը, սարքաւորումներն ու նիւթերը, որմէ յետոյ կը մեկնարկեն պատուաստումը եւ ուսումնասիրութիւնները», - յայտարարած է ԱՀԿ-ն:

Անցեալ ամիս Հայաստանի առողջապահութեան նախարարը յայտարարած է, որ Covax Facility միջազգային նախաձեռնութեան ծիրէն ներս փետրուարի սկիզբին, երկիր կը ներկրուի պատուաստներու խմբաքանակ, որով նախ կը պատուաստուին վտանգի ենթակայ խումբերուն մէջ գտնուող քաղաքացիները՝ տարեցները, քրոնիկ հիւանդութիւն ունեցողները: Ըստ գերատեսչութեան՝ կառավարութիւնը բնակչութիւններ կը վարէ ինչպէս «Սփուլիք V», աչպէս ալ միւս՝ Pfizer-BioNTech, Moderna պատուաստները ձեռք բերելու շուրջ:



«Սկզբնական փուլին, միջոցները կ'ուղղուին նախապատրաստական աշխատանքներուն՝ ինչպիսին են ծրագրաւորելը, սարքաւորումներն ու նիւթերը, որմէ յետոյ կը մեկնարկեն պատուաստումը եւ ուսումնասիրութիւնները», - յայտարարած է ԱՀԿ-ն:

Սերժ Սարգսեան Յայտարարած Է՝ Վարչապետի Պաշտօնին Մնացած Է Կարգաւորման «Լաւրովեան» Տարբերակը Իրագործելու Համար

2018-ին ժողովրդական ճնշմամբ հրաժարական տուած Սերժ Սարգսեան յայտարարած է, որ 10 տարուայ նախագահութենէն յետոյ վարչապետի պաշտօնին մնացած է, որ իրագործէ զարբաղեան հարցի կարգաւորման «լաւրովեան» տարբերակը, ինչ որ, անոր գնահատմամբ, մերժած են այս իշխանութիւնները:

«Արմենիա» հեռուստաընկերութեան տուած հարցազրոյցի ընթացքին Սարգսեան մանրամասնած է, թէ Լաւրովեան փաստաթուղթը «Մատրիտեան սկզբունքներու» բարեփոխուած տարբերակն էր, որ Ռուսաստանի Դաշնութեան արտաքին գործոց նախարարը առաջարկած էր համաձայնագրահերու անունով՝ Ատրպէյճանը կը ճանչնար, որ Լեւոնային Ղարաբաղի վերջնական կարգավիճակը պէտք էր որոշել Ղարաբաղի բնակչութիւնը՝ առանց հանրաքուէի յստակ ժամկէտի եւ Ատրպէյճանին կը վերադարձուէին 5 շրջանները: Միւս երկուքի՝ Լաւրովի ու Քելբաջարի վերադարձը, ըստ Սերժ Սարգսեանին, սերտօրէն կ'ապուած պիտի ըլլար հանրաքուէի կատարման ժամկէտներուն հետ:

«Ես ոչ միայն պատրաստ էի ստորագրել, այլ ես բացառապէս համաձայնել եմ մնալ ՀՀ վարչապետ, որ իրականացնեմ այդ տարբերակը: Եւ ես այն ոչ թէ պէտք է գաղտնի ստորագրէի, այլ բնականաբար, երբ հասնէինք նրան, ինչին ձգտում էինք, ապա այդ տարբերակը, ես չեմ ասում՝ հանրաքուէի կը դնէինք եւ այլն, բաց շատ մեծ եւ բուռն քննարկման առարկայ կը դարձնէինք հասարակութիւնում: Ես վստահ չէի, որ հասարակութեան մեծ մասը դրան



Նախկին նախագահ Սերժ Սարգսեան

կարող էր սատարել», - նշած է Հայաստանի երրորդ նախագահը:

Իր հարցազրոյցի ընթացքին, Սարգսեան հերքած է Փաշինեանի «վատ ժառանգութիւն ստանալու» մասին յայտարարութիւնները, թէ բանակցային գործընթացքը ժառանգած է մէկ կէտի մէջ, երբ առաջնահերթութիւն եղած է տարածքներու յանձնումը՝ առանց Ղարաբաղի կարգավիճակի ճշգրտման: «Ինձ կարող են չհաւատալ, արդեօք որեւէ հիմք կայ չհաւատալու Փոփովին», - Միւսքի խումբի ռուսաստանցի համաձայնագրի յայտարարութիւններուն յղում ընելով՝ Սարգսեան յայտարարած է, եւ ան պայթեցուցած է այդ փուլիկը:

«Բանակցութիւնները այս մարդկանց համար տալու կամ չտալու խնդիր էր, ինչը անհեթեթութիւն է: Մեր կարմիր գիծն այն էր, որ Լեւոնային Ղարաբաղը երբեք չլինէր Ատրպէյճանի կազմում, երբեք, եւ մենք այդ գիծը պաշտպանել ենք մինչեւ 18 թուականի Ապրիլի 23-ը», - նշած է Սարգսեան:

Թուրքիոյ Մէջ Հայ Իրաւապաշտպանին Դէմ Հետաքննութիւն Սկսած Է Երտողանը Վիրաւորելու Համար

Թրքական իշխանութիւններուն հասցէագրուած սուր քննադատութիւններով յայտնի հայ իրաւապաշտպան՝ Արլէթ Նաթալի Աւագեանի դէմ հետաքննութիւն սկսած է, Թուրքիոյ նախագահի Ռէճէպ Թայյպ Էրտողանի հասցէին վիրաւորական հրապարակումներ ընելու համար, գրած է Ermenihaber.am-ը:

Այս մասին Աւագեան գրառում կատարած է Twitter-ով, հրապարակելով նաեւ իրեն ուղղարկուած հետաքննութիւն սկսելու մասին որոշման փաստաթղթերը:

Նշուած է, որ 2014-2018 թուականներու ընթացքին, Աւագեան Twitter-ով նախագահի հասցէին վիրաւորական 8 հրապարակում կատարած է, որոնք յանցակազմ պարունակող արարք որակուած են:

Յիշեցնենք, որ ասիկա Աւագեանի դէմ հետաքննութիւն սկսելու առաջին դէպքը չէ: Չայն նաեւ քանիցս բերման ենթարկած են Թուրքիոյ պաշտօնատար անձերու հասցէին սուր քննադատութիւններ հնչեցնելու համար:

Իրաւապաշտպանը 2019-ի Հոկտեմբերին, Twitter-ի վրայ գրա-



Հայ իրաւապաշտպան Արլէթ Նաթալի Աւագեան

ռում կատարած էր Թուրքիոյ արտաքին գործոց նախարար՝ Մելլուլ Չաոււշօղլուի մասին: Ան տեղադրած էր արտաքին գործոց նախարարի ընտանիքի 1998-ի լուսանկարը եւ գրած. «Անոնք Անթալիոյ հարաւային շրջանին մէջ յայտնի եղած են որպէս «քրտական գողեր»»:

Նշենք, որ Արլէթ Նաթալի Աւագեանի Twitter-ին կը հետեւի 175.000 օգտատէր:

Շուտով Կը Սկսի «Ճարտարագիտական Քաղաքի» Կառուցումը



«Ինժեներական (ճարտարագիտական) քաղաքի» յատակագիծն արդէն հաստատուել է, շուտով կը յայտարարուի նաեւ շինարարական ընկերութեան մրցոյթը եւ կը սկսուի քաղաքի կառուցումը: Ինչպէս կը տեղեկացնէ «Արմէնփրէս»-ը, դիմատետրի իր էջին վրայ գրած է փոխվարչապետ՝ Տիգրան Աւինեան:

«Ինժեներական քաղաքի» ծրագիրը մտած է աշխուժ փուլ: Այն Համաշխարհային դրամատան հետ համագործակցութեամբ իրականացուող «Առեւտրի խթանում եւ որակի ենթակառուցում քննարկ»

ծրագրի շրջանակում ֆինանսաւորուող նախագծերից է:

Հայաստանում ապագայի քաղաքի յատակագիծն արդէն հաստատուել է, շուտով կը յայտարարուի նաեւ շինարարական ընկերութեան մրցոյթը եւ կը սկսուի քաղաքի կառուցումը», - գրած է Աւինեան:

Փոխվարչապետը աւելցուցած է, որ «Ինժեներական քաղաքը» բաղկացած պիտի ըլլայ 22 ճարտարագիտական ընկերութիւններու շինութիւններէ, տարրալուծարանէ, ինքնաշարժներու կայաններէ, այգիէ եւ ճարտարագիտական ենթակառուցներէ:

Արցախի Սէջ Սկսած է Տեղահանուածներու Համար Նոր Բնակավայրի Կառուցումը



Արցախի մէջ կառուցուող բնակավայրը

Արցախի Ասկերանի շրջանի Աստղաշէն եւ Պատարա գիւղերու միջեւ ինկած տարածքին ներս մեկնարկած են նոր բնակավայրի կառուցման աշխատանքները: Այս մասին «Արմէնփրէս»-ի հետ գրոյցին տեղեկացուց Արցախի քաղաքաշինութեան նախարարութեան մամուլ քարտուղար՝ Մարտա Դանիէլեան:

«Ասկերանի Զրադացներ, Մոշխմհատ, Մաղաթաշէն եւ Սղնախ գիւղերից տեղահանուած մեր քաղաքացիներին համար նախատեսուած նոր բնակավայրը կ'ունենայ աւելի քան 644 հազար քառակուսի մետր ընդհանուր մակերես: Նա-

խատեսուող 116 առանձնատներից՝ առաջինները պատրաստ կը լինեն առաջիկայ մի քանի ամսուայ ընթացքում. բնակավայրի շինարարութիւնն ամբողջութեամբ աւարտին կը հասցուի մինչեւ 2022 թուականի Դեկտեմբեր: Առանձնատները, որոնց նախագծի համար օրինակ է ծառայել Քաշաթաղի Աղաւնոն, կը լինեն 2-4 սենեականոց: Իւրաքանչիւր առանձնատանը կը յատկացուի 1500 քառակուսի մետր տնամերձ հողատարածք: Գլխաւոր ճանապարհի հարեւանութեամբ կը կառուցուի նաեւ շուկայ», - մանրամասնեց Դանիէլեան:

IT Ոլորտի Շուետական Խոշոր Ընկերութիւնը Կը Պատրաստուի Ստեղծել 1000-էն Աւելի Աշխատատեղի

«Մի շարք եւրոպական եւ ամերիկեան ընկերութիւններ Հայաստանում ներդրումներ անելու գործընթացի մէջ են»: Այս մասին ըսաւ ՀՀ Տնտեսութեան նախարար՝ Վահան Քերոբեան՝ անդրադառնալով յետպատերազմական շրջանին ներդրումներու ներգրաւման թեմային:

Նախարարը նախ կարեւորեց տարբերակել հայ կամ հայաստանեան ներդրողներուն եւ օտարերկրեայ կամ միջազգային ներդրողներուն: «Առաջին խմբի ներդրողները, երբ տեսնում են, որ պատերազմ է, եւ իրենց հայրենիքը վտանգուած է, այլ մղումներով են ներդրումներ անելու ցանկութիւն ունենում: Սա այն դէպքում, երբ սովորական պայմաններում միգրացիային հիմնականում միգրանտներն են, որ առաջ վերականգնել հայրենիքի տնտեսական հզօրութիւնը, եւ բոլոր ներդրողները, որոնք, բացի ներդրող լինելուց, նաեւ հայրենասէր են, շտապում են ներդրումներ անել, փորձում են օր առաջ իրենց լուծման ներդրել՝ հայրենիքի վերականգնման գործում: Նրանք, ի ուրախութիւն մեզ, շատ-շատ են», - ըսաւ Քերոբեան:

Ինչ կը վերաբերի միջազգային ներդրողներուն՝ նախարարը նշեց, որ կը տեսնէ փաստացի շարք մը եւրոպական եւ ամերիկեան ընկերութիւններ, որոնք հիմա ներդրումներ ընելու գործընթացի մէջ են: «Օրինակ՝ կարող եմ բերել մի շուետական ընկերու-

թիւն, որը Հայաստանում 1000-ից աւելի աշխատատեղ է ծրագրաւորում բացել այս տարի: Դա IT ոլորտի ընկերութիւն է, 20-22 միլիոն տոլար դրամազուխով ընկերութիւն է: Աշխարհի ամենախոշորներից է իր ոլորտում: Ընկերութիւնը գրասենեակներ ունի Վրաստանում եւ մի շարք երկրներում, հիմա պատրաստում է Հայաստանում բացել», - ըսաւ Քերոբեանն ու վստահեցուց, որ այդպիսի շատ ընկերութիւններ կան եւ ղեկավարը մէկ օրինակ բերած է:

Նախարարը տնտեսութեան վիճակը մէկ բառով բնութագրեց որպէս ճգնաժամային: Ան այդ բացատրեց անով, որ անցեալ տարի Հայաստանի տնտեսութիւնը անցած է կրկնակի արհաւիրքի միջով՝ համավարակ եւ պատերազմ:

Անդրադառնալով հարցին՝ եթէ 2021-ին Հայաստանը վերադառնայ 2019-ի տնտեսական արդիւնքներուն, ինչպէ՞ս կը գնահատէ, Քերոբեան ըսաւ, որ այդ կ'ըլլայ այն երկնիշ տնտեսական աճը, որու մասին ինք արդէն խօսած է: «Ես դա կը համարեմ նորմալ արդիւնք, ի հարկէ պէտք է ձգտել աւելիին: Արդէն դա կը լինի լաւ արդիւնք, այն այսօր համարուած է չափից աւելի լաւատեսական կանխատեսում: Ի հարկէ, մենք ունենք մեր գործիքակազմը, թէ՛ ոնց պէտք է լուծենք այդ խնդիրը», - նշեց նախարարն ու շեշտեց, որ կ'իրագործեն եւ ամէն օր իրենց միտքերը կը դառնան իրականութիւն:

6-7 Աստիճան Ուժգնութեամբ Երկրաշարժ Երեւանէն 8 Քմ Հարաւ-Արեւելք Երկրաշարժէն Ետք Յետցնցումներ



Փետրուար 13-ին տեղի ունեցած երկրաշարժէն յետոյ, 110 յետցնցում գրանցուած է, բոլորն ալ թոյլ: Փետրուար 15-ին ժամը 18:21-ին, երկրաշարժ գրանցուած է Երեւանէն 17 քմ հարաւ:

Շաբաթ օր տեղական ժամանակով ժամը 15:29-ին երկրաշարժ տեղի ունեցած է Հայաստան, մակակեղրոն՝ Երեւանէն 8 քմ հարաւ-արեւելք, ստացուած են ահազանգեր աւերածութիւններու վերաբերեալ, հաղորդած է Արտակարգ իրավիճակներու նախարարութիւնը (ԱԻՆ):

Հաղորդագրութեան համաձայն՝ երկրաշարժային պաշտպանութեան տարած քայլին ծառայութեան երկրաշարժագիտական ցանցի կողմէ 4.7 մակնիթուտով երկ-

րաշարժը գրանցուած է հիւսիսային լայնութեան 40.11 աստիճան եւ արեւելեան երկայնութեան 44.54 աստիճան աշխարհագրական չափագրումներով, օճախի 10 քմ խորութեամբ: Մակակեղրոնային գոտիին վրայ ստորգետնեայ ցնցման ուժգնութիւնը կազմած է 6-7 աստիճան:

Երկրաշարժը զգացուած է Երեւան քաղաքին մէջ՝ 5-6 աստիճան ուժգնութեամբ, Արագածոտնի, Արարատի, Շիրակի, Արմաւիրի, Վայոց Ձորի մարզերուն մէջ՝ 3-4 աստիճան ուժգնութեամբ:

Ստացուած են ահազանգեր Այլավազովակիի եւ Սմբատ Զօրավառի փողոցներուն վրայ՝ տեղի ունեցած երկրաշարժի հետեւանքով աւերածութիւններու վերաբերեալ, հաղորդած է ԱԻՆ-ը:

ՎԱՐՁՈՒ ՄՐԱՇ
ՓԱՍՏԻՆԱՅԻ ՄԷՋ (200 ԸՈԳԻ ԸԱՄԱՐ)
ԱՄԵՆ ՏԵՍԱԿ ԱՌԻԹՆԵՐՈՒ ԸԱՄԱՐ
1060 N. ALLEN AVE. PASADENA CA 91104
(626) 797-7680

Հայաստանի Քաղաքացիներուն Մուտքը Դեպի Արցախ Ազատ է. Փոփոխութիւնները Օտարերկրացիներուն Համար են

Վերջին օրերուն ընկերային ցանցերուն վրայ տարածուող լուրերը, թէ Արցախ այցելելն անվտանգ է, իրականութեան չի համապատասխանիր: Մուտք գործելու կարգը որոշ փոփոխութիւններու ենթարկուած է՝ քաղաքացիներուն անվտանգութիւնը ապահովելու համար:

«Կը ցանկամ ուղղակի անգամ մը եւս շեշտել, որ ատիկա թիւր տեղեկութիւն է: Հաճեցէ՛ք հետեւիլ միայն պաշտօնական տեղեկատուութեան», - ըսաւ Հայաստանի մէջ Արցախի մշտական ներկայացուցչութեան հիւպատոսական բաժնի պետի պաշտօնակատար Լուսինէ Ստեփանեանը:

Մուտք գործելու կարգն էապէս չէ փոխուած: Փոփոխութիւնները կը վերաբերին օտարերկրացի պետութիւններու քաղաքացիներուն եւ այն սփիւռքահայերուն, որոնք Հայաստանի քաղաքացի չեն: Արցախ այցելելու համար անոնք նախապէս պէտք է դիմեն Արցախի Արտաքին գործոց նախարարութիւն՝ մուտք գործելու թույլտուութիւն ստանալու համար:

«Թույլտուութիւնը, միանշանակ, ինչպէս նախկինին, այնպէս ալ այժմ, կու տայ Արցախի Արտաքին գործոց նախարարութիւնը, այցազիրները կը տրամադրենք»:



մենք՝ ներկայացուցչութիւնը Երեւանի մէջ: Արցախի Արտաքին գործոց նախարարութիւնը պարզապէս կը տեղեկացնէ ռուս խաղաղապահները՝ այցելել ցանկացող քաղաքացիներուն մասին», - ընդգծեց Լուսինէ Ստեփանեանը:

Հայաստանի քաղաքացիութիւն չունեցող սփիւռքահայերուն եւ օտարերկրացիներուն համար կը գործէ այցազրի կարգ: Այցազրիները պիտի տրամադրուին 3-4 օրուան մէջ: Ռուսիոյ քաղաքացիներուն համար այցազրի կարգ չկայ, Արցախ այցելելու համար անոնք կը տրամադրուի գրանցման թերթիկ: Հայաստանի քաղաքացիներուն համար մուտքը ազատ է:

Սերժ Սարգսեանի Խոստովանութիւնը

Շարունակուած էջ 1-էն

ինք եւ այլն, բայց շատ մեծ եւ բուռն քննարկման առարկայ կը դարձնէինք հասարակութիւնում», - ըսած է երրորդ նախագահը:

Անկախ պաշտօնի վրայ մնալու պատճառներուն մասին ժամանակի հետ իր զարգացող միտքերուն, Սարգսեանի կ'ընդունի, որ պատրաստ եղած է «ծախելու» Արցախը, սակայն չէ կարողացած, քանի որ 2018-ին տեղի ունեցած է իշխանափոխութիւն:

Հայաստանի Անվտանգութեան Խորհուրդի Քարտուղար՝ Արմէն Գրիգորեան անդրադառնալով նախկին նախագահի հարցազրոյցին յայտնած է որ, 2016 թուականի Ապրիլեան քառօրեայ պատերազմի ընթացքին Ալիեւին խոստացուած է վերադարձնել եօթը շրջանները եւ այդ պատճառաւ է որ, Ատրպէյճան համաձայնած է զինադադարին, այն պահուն երբ ռազմադաշտի վրայ ունէր առաւելութիւն եւ կարողացած էր գրաւել Լեյլէ Թեփեան եւ Թալիշ գիւղին յարող դիրքերը:

Սերժ Սարգսեանի այս խոստովանութիւններէն առաջ եւ ետք իրականութիւնը կը մնայ նոյնը: 1998 թուականին, երբ առաջին նախագահ Լեւոն Տէր Պետրոսեան խօսեցաւ Ատրպէյճանի հետ խաղաղութիւն հաստատելու մասին, ան «պալատական յեղաշրջմամբ» հեռացուեցաւ պաշտօնէն, որմէ

ետք քսան տարի Ռոպրո Քոչարեան եւ Սերժ Սարգսեան միասնաբար կառավարելով երկիրը ոչ մէկ քայլ առին Հայկական բանակը արդիական գէնքերով օժտելու եւ թշնամին հետ քայլ պահելու ուղիով: Նոյնիսկ Ապրիլեան պատերազմէն ետք, երբ բացայայտ դարձաւ Ատրպէյճանի ունեցած օդային առաւելութիւնը, իրավիճակը բարելաւելու եւ ռազմական առումով հաւասարակշռութիւն հաստատելու ծրագիրներու մշակումը եւ իրականացումը մնացին թերի:

Եօթը շրջաններու վերադարձնելու պատրաստակամութեան մասին իր այս յայտարարութեամբ Սերժ Սարգսեան եկաւ բացայայտելու այն իրականութիւնը, որ տարիներու ընթացքին Ատրպէյճանին տրուած են խոստումներ, որոնք հետագային որպէս ժառանգ ձգուած են Փաշինեանին: Սարգսեան նաեւ թիկունքէն հարուածեց իր դաշնակիցներուն, որոնք կը շարունակեն պահանջել վարչապետի հրաժարականը՝ «դաւաճանութեան» ու «հողեր յանձնելու» մեղադրանքով: Չորս ամսուայ փողոցային ապարդիւն պայքարէն ետք, ընդդիմութեան կը մնայ մէկ ճանապարհ՝ իրենց համար ընտրել նոր օրակարգ եւ նոր կարգախօս, այլապէս պիտի շարունակեն մնալ լուսանցքի վրայ՝ մերժուած ժողովուրդին կողմէ:

«ՄԱՍԻՍ»

Հայկ Մարութեան Դատապարտած Է Ցեղասպանութեան Եւ Հոլոքոսթի Յուշարձանի Պղծումը



Որեւէ յուշարձանի նկատմամբ ոտնձգութիւնը միանգամայն անընդունելի եւ դատապարտելի արարք է, գոր պէտք է բացառել քաղաքէն, դիմատետրի իր էջին վրայ գրած է Երեւանի քաղաքապետ Հայկ Մարութեան՝ նշելով, որ այսօր առաւօտեան տեղեկացած է, որ «անյայտ շարագործները պղծել են Երեւանի Օղակաձեւ զբօսայգում գտնուող՝ հայ եւ հրեայ ժողովուրդների եղեռնի զոհերի յուշարձանը»:

«Երեւանում տարբեր ազգութիւնների ներկայացուցիչներ հարկւրամեակներ շարունակ ապրել են կողք կողքի՝ իրենց ազգային պատկանելութեան հետ միասին հպարտութեամբ կրելով նաեւ երեւանցի լինելու պատուաբեր կոչումը, եւ որեւէ դրդապատճառ չի կարող խաթարել այդ համերաշխութիւնը», - գրած է Մարութեան, յոյս յայտնելով, որ իրաւապահները արագ եւ համարժէք արձագանգ կու տան:

Ամերիկացի 54 Ծերակուտականներ

Շարունակուած էջ 1-էն

պով լուսանցքայնացուցած է ընդդիմութիւնը, լուեցուցած քննադատական լրատուամիջոցները, մաքրած անկախ դատաւորները եւ զանոնք փոխարինած կուսակցութեան հաւատարիմ մարդոցով, բանտարկած բազմաթիւ լրագրողներ», - գրած են ծերակուտականները՝ չիշեցնելով, որ ըստ «Լրագրողներու Պաշտպանութեան կոմիտէի» գեկոյցին՝ բանտարկուած լրագրողներու թիւով Թուրքիան ետ կը մնայ միայն Չինաստանէն: Freedom house-ը 2020-ի գեկոյցով Թուրքիան դասած է անազատ երկիրներու շարքին: Պետական բաժանմունքի մարդու իրաւունքներու 2019-ի գեկոյցին մէջ նշուած է, որ Թուրքիան հակահաճաքեկչական լայն օրէնսդրութեամբ սահմանափակած է հիմնարար ազատութիւններն ու սպառնալիքի տակ դրած օրէնքի գերակայութիւնը:

Թուրքիոյ վարած արտաքին քաղաքականութեան վերաբերեալ ԱՄՆ-ի նախագահին յղուած նամակին մէջ ծերակուտականները գրած են. «Նախագահ իրտողանի արտաքին քաղաքականութիւնը ժամանակի ընթացքին աւելի ռազմատենչ ու մարտական դարձած է: Վերջին տարիներուն իրտողան լիտիաբար յարձակած է Սուրիոյ մէջ ԱՄՆ-ի աջակցութիւնը վայելող քիւրտերու վրայ, որոնք կը պայքարէին «Իսլամական պետութեան» դէմ, ան ձեռք բերաւ ռուսական հակաօդային պաշտպանութեան համակարգեր, չնայած զգուշացումներուն, որ անոնք անհամատեղելի են ամերիկեան սարքաւորումներուն հետ: Ան խրախուսեց Ատրպէյճանը՝ բռնութիւններ գործադրել Հայաստանի հետ տարածքային վէճը լուծելու համար»:

Ծերակուտականները նաեւ նշած են, որ նախագահ իրտողան փորձած է ճնշումներ գործադրել ԱՄՆ-ի եւ այլ երկիրներուն վրայ՝

Թուրքիոյ արտաքին ծերակուտականները, որոնց ան կը մեղադրէ 2016-ի ձախողած յեղաշրջման փորձին մասնակցելու մէջ. «Էրտողանի կառավարութիւնը փորձած է քննադատողները լուեցնել նաեւ ԱՄՆ-ի մէջ, ինչպիսին է NBA-ի խաղացող եւ իրաւապաշտպան Էնես Քանթեքըր՝ ինթրփոլով հետախուզում յայտարարելով անոր հանդէպ»:

Ծերակուտականները նշած են, որ Թուրքիան կը մնայ կարեւոր գործընկեր աշխարհի այդ մասի նշանակալից տարածաշրջանէն ներս եւ ընդգծած, որ անոր համար ալ կը դիմեն ԱՄՆ-ի նախագահին: «Մենք կը կարծենք, որ Միացեալ Նահանգները դաշնակիցներէն պէտք է պահանջէ բարձր չափանիշներ եւ անկեղծօրէն անոնց հետ խօսի մարդու իրաւունքներու ու ժողովրդավարութեան նահանջի խնդիրներու մասին», - գրած են ծերակուտականները՝ ձօ Պաշտընին կոչ ընելով նախագահ իրտողանի եւ անոր վարչակազմի ուղղորդութիւնը հրաւիրել, որ պէտք է անյայտ դադրեցնեն այլախոհութեան վրայ ճնշումները տան մէջ, թէ դուրսը, ազատ արձակեան քաղաքական բանտարկեալները ու խղճի բանտարկեալները եւ ամբողջովին փոխեն իրենց մենակատարութիւնը:

Ծերակուտականները նամակի վերջաւորութեան նշած են, որ Ամերիկացի մէջ երկկուսակցական աւանդոյթ կայ՝ աջակցիլ մարդու իրաւունքներու ու ժողովրդավարութեան հիմնարար արժէքներուն, եւ պատրաստակամութիւն յայտնած են Պաշտընի աշխատակազմին օգնել այդ կարեւոր հարցով:

54 ծերակուտականներու կողմէն ստորագրուած նամակի թեքսթը տեղադրուած է Ծերակուտակապաշտօնական կայքը, ստորագրողներու մէջն են յայտնի ծերակուտականներ՝ Մերալոյտի մեծամասնութեան ղեկավար՝ դեմոկրատ Չաք Շումըր, Էմիլ Քլայուշըր, հանրապետականներ՝ Միթ Ռոմնին եւ Մարքօ Ռուպին:

ՀԱՍ-ի Եւ «Կայծի» Կազմակերպած Արիւնարշաւը



Ամերիկայի Կարմիր Խաչին հետ գործակցաբար, Կիրակի, Փետրուար 14, 2021-ին, Վէլլընթալի Օրոուան առթիւ տեղի ունեցաւ Արիւնարշաւ՝ կազմակերպութեամբ Հայ Ամերիկեան Խորհուրդի եւ Կայծ Երիտ. Միութեան, ՀԿԲՄ-ի Փաստօրինայի կեդրոնէն ներս:

Ինչպէս բոլորս գիտենք, արիւնարշաւները այսօր հարիւրաւոր կեանքեր կը փրկեն եւ կենսական ու նուիրական արարքներ են՝ արիւն

Հէրի Ունէլ, շնորհակալութիւն յայտնելով արիւն նուիրողներուն: «Վալընթալի օրը Սիրոյ տօն ըլլալով, ամէնայարմար առիթն էր ցոյց տալու մէր սէրը՝ մեր համայնքին եւ շրջապատին հանդէպ: Գորոնա համաճարակի պատճառով մենք կը դիմագրաւենք ծանր պայմաններ եւ արիւնարշաւներու մեծ պանաշք կայ այժմ: Մեր պատասխանատուութիւնն էր կազմակերպել այս տեսակի միջոցառում մը՝



նուիրողներու կողմէ: «Ներկայիս Լոս Անճէլոս քաղաքէն ներս արեան մեծ պակաս կայ՝ հիւանդանոցներէն եւ բժշկական կեդրոններէն ներս: Մեր պարտականութիւնն է օգնել բոլոր մեր միջոցներով, մանաւանդ Գորոնա համաճարակի ստեղծած ծանր պայմաններու լոյսին տակ: Այս կարեւոր միջոցառումը առիթ մը հանդիսացաւ միասնաբար ցոյց տալու մեր սէրն ու հոգատարութիւնը մեր համայնքին եւ մարդկութեան», ըսաւ ՀԱՍ-ի վարչութեան անդամ՝

Ի սէր մեր համայնքին եւ մարդկութեան», իր կարգին ըսաւ «Կայծի» փոխ Ատենապետուհի՝ Ալիսա Ղաֆարի: Իսկապէս հիանալի պատգամ մը եւ Սիրոյ Օրուայ առթիւ կայացած հիանալի միջոցառում մը կը նկատենք ՀԱՍ-ի, «Կայծի» եւ Կարմիր Խաչի կազմակերպած սոյն արիւնարշաւը, այս դժուար օրերուն: Շնորհակալ ենք որ կեանքեր կը փրկէք: «ՄԱՍԻՍ»

Արցախեան 44-օրեայ Պատերազմէն Յետոյ «Հայաստան» Հիմնադրամին Սփիւռքի Կողմէն Հանգանակուած Է 27 Միլիոն Տոլար

Արցախեան պատերազմէն յետոյ եւս «Հայաստան» համահայկական հիմնադրամին սփիւռքի կողմէն հանգանակուած է հսկայական գումար՝ մօտ 27 միլիոն տոլար: Այս մասին «Արմէնփրէս»-ի հետ զրոյցի ընթացքին տեղեկացուց «Հայաստան» համահայկական հիմնադրամի հասարակայնութեան հետ կապերու պատասխանատու Աշոտ Բարսեղեան: «Այդ գումարը հաւաքուել է մասնավորապէս՝ ԱՄՆ-ի, Գանատայի, Հոլանտայի, Պելճիքայի, Արժանթինի եւ մի շարք այլ երկրների հայ համայնքների ուժերով», մանրամասնեց Բարսեղեան: Անդրադառնալով համահայկական

հիմնադրամի կողմէն յետպատերազմեան շրջանին Արցախին ցուցաբերուող աջակցութեան ծրագիրներուն՝ ան նշեց, որ իրագործուած են 1000-էն աւելի վնասուած բնակարաններու եւ առանձնատուներու վերանորոգման ու ապակիներու, պատուհաններու տեղադրման աշխատանքներ: «Կառավարութիւն փոխանցուած միջոցներով՝ 300 հազար եւ 68000+15000 դրամի չափով, ֆինանսական աջակցութիւն են ստացել տասնեակ հազարաւոր մեր հայրենակիցներ: Բացի այդ՝ Արցախ է հասել հսկայական քանակի մարդասիրական օգնութիւն՝ հոսանքի հզոր ելեկտրածին գործիքներ, մեքենաներ եւ բազմապիսի այլ օգնութիւն», ըսաւ Աշոտ Բարսեղեան: «Հայաստան» համահայկական հիմնադրամի միջոցներով իրագործուող ծրագիրներու առաջնահերթութիւններու շարքին են մասնավորապէս՝ վիրաւորուած զինծառայողներու վերականգնողական բուժում, տեղահանուածներու բնակարանային հարցերու լուծում, աջակցութիւն՝ առողջապահական համակարգին, ժամանակակից կացարաններու տրամադրում տեղահանուածներուն, կամ կացարաններու պայմաններու բարելաւում, ինչ-

Հայաստանից ԱՄՆ Ոգելից Եւ Ոչ Ոգելից Խմիչքների Ներկրմանը Նուիրուած Գործարար Սեմինար



Փետրուարի 10-ին տեղի ունեցաւ Հայաստանից ԱՄՆ ոգելից եւ ոչ ոգելից խմիչքների ներկրման խթանմանը նուիրուած հեռավար գործարար սեմինար: Սեմինարը կազմակերպել էր Լոս Անջելեսում ՀՀ գլխավոր հիւպատոսութիւնը՝ տեղական Հայ-ամերիկեան գործարար խորհրդի աջակցութեամբ: Այն ազդարարում է Լոս Անջելեսում ՀՀ գլխավոր հիւպատոսութեան կողմից կազմակերպուող գործարար սեմինարների սկիզբը, որոնք նուիրուած կը լինեն Հայաստանից տարբեր տեսակի ապրանքների արտահանման խթանմանը դէպի ԱՄՆ եւ ՀՀ-ում արտադրութեան ծաւալմանը:

Կլոնոմիկայի նախարարութեան Եւրասիական տնտեսական միութեան եւ արտաքին առևտրի վարչութեան պետ Նաիրա Կարապետեանը, ՀՀ Կլոնոմիկայի նախարարութեան միջազգային յարաբերութիւնների վարչութեան աշխատակից Յասմին Սարգսեանը, Լոս Անջելեսում գործող Հայ-ամերիկեան գործարար խորհրդի նախագահ Արմէն Յարութիւնեանը, խորհրդի անդամներ Սեւադա Հեմելյանը եւ Արմէն Վարդանեանը, Հայաստանում ամերիկեան առևտրի պալատի գործադիր տնօրէն Կարինէ Սարկիսեանը, ՀՀ-ում արտադրուած ոգելից /գինի, կոնեակ, մրգային օղի, վիսկի/ եւ ոչ ոգելից խմիչքների/ հիւթեր, լիմոնադներ, շուր, հանքային շուր/ ԱՄՆ ներմուծողներ եւ Կալիֆորնիայում ոգելից խմիչքի մեծածախ մատակարարներ, ինչպիսիք են LAC, Fat & Happy Beverages, WinesofArmenia, Mistral, America, Voskevaz Winery, ArmAs Winery, Prowood USA, Jermuk Group USA, Apollo International, T&T import-export Inc., Export Armenia, IDW, Mr. Martin Inc., Noahs Orchards Distilling Co., եւ American Global Group ընկերութիւնները:

Գործարար սեմինարը վարեց Լոս Անջելեսում ՀՀ գլխավոր հիւպատոս, դեսպան Արմէն Բայբուրդեանը: Ողջունելով մասնակիցներին՝ դեսպան Բայբուրդեան ընդգծեց միջոցառման կարեւորութիւնը՝ իբրեւ հայկալիֆորնիական յարաբերութիւնները գործարար դաշտում առաւելակտիւսներու գործնական քայլ, որը կոչուած է աջակցելու Հայաստանի տնտեսութեան զարգացմանը: Գլխավոր հիւպատոսը նշեց, որ միջոցառումը ունենալու է իր շարունակութիւնը եւ ՀՀ գլխավոր հիւպատոսութիւնը հետամուտ կը լինի առաջարկութիւնների յետագայ իրագործման ընթացքին: Դեսպան Բայբուրդեանը նշեց նաեւ, որ ՀՀ գլխավոր հիւպատոսութիւնը համապարակի նահանջից յետոյ կը կազմակերպի միջոցառումներ, որոնք կոչուած կը լինեն դիւրացնելու ամերիկեան շուկայ հայկական խմիչքների մուտքը: Գործարար սեմինարին մասնակցեցին ՀՀ գլխավոր հիւպատոսութեան խորհրդական Վարազդատ Պահլաւունին, ՀՀ

Քննարկուեցին պետութիւն-ձեռնբէր փոխգործակցութեան կապը ավելի արդիւնաւէտ դարձնելու եւ Հայաստանից ԱՄՆ արտահանուող ապրանքների քանակը ավելացնելուն միտուած հարցեր: ՀՀ գլխավոր հիւպատոսութիւնը հետամուտ կը լինի քննարկումների ժամանակ ներկայացուած առաջարկները ՀՀ համապատասխան նախարարութիւններին եւ գերատեսչութիւններին ներկայացնելու եւ գործարարներին հնարաւոր աջակցութիւն ցուցաբերելու գործին:

ներ, մեքենաներ եւ բազմապիսի այլ օգնութիւն», ըսաւ Աշոտ Բարսեղեան: «Հայաստան» համահայկական հիմնադրամի միջոցներով իրագործուող ծրագիրներու առաջնահերթութիւններու շարքին են մասնավորապէս՝ վիրաւորուած զինծառայողներու վերականգնողական բուժում, տեղահանուածներու բնակարանային հարցերու լուծում, աջակցութիւն՝ առողջապահական համակարգին, ժամանակակից կացարաններու տրամադրում տեղահանուածներուն, կամ կացարաններու պայմաններու բարելաւում, ինչ-

պէս նաեւ անունդի կազմակերպում կարիքաւորներուն: «Մենք աջակցում ենք Հայրենիքի պաշտպանի վերականգնողական կեդրոնին եւ մարդասիրական աջակցութիւն ենք տրամադրում բազմաթիւ բուժօգնականութիւնների: Առաջիկայում ամբողջ ընթացքը կը ներկայացնենք», ըսաւ Բարսեղեան: Ինչ կը վերաբերի Արցախի մէջ հիմնադրամին միջոցներով նախատեսուող բնակարանային խնդրներին, ապա ըստ Բարսեղեանին՝ այդ ծրագիրները մեծ գումարներ կ'ենթադրեն եւ դեռ քննարկումներու փուլն են:

Փաշինեանի Հրատարականը Պահանջողներուն

ՍԵՐ ՊԱՐԳԵՒ ԴԱԻԹԵԱՆ

Պատերազմի աւարտէն ետք, Հայաստանի եւ Սփիւռքի մէջ գահաձայն ղերքերու վրայ գտնուող մարդիկ պահանջեցին եւ տակաւին կը պահանջէն վարչապետ Փաշինեանի հրատարականը: «Հայրենիքի Փրկութեան Շարժում» կոչուող հոսանքը, որուն ըմբոստութեան առաջին քայլը եղաւ գրաւել եւ նսեմացնել Ազգային ժողովը՝ Տանըլտ Թրամփի խուլիգան հետեւորդներուն օրինակ ծառայելով, կը շարունակէ ապարդիւն ձեւերով աղմուկ ստեղծել՝ Փաշինեանը մեղադրելով, անոր հեռանալը պահանջելով եւ փրկութեան ոչ իսկ մէկ ծրագիր ներկայացնելով:

Երկու կաթողիկոսներէն եւ Հայաստանի նախկին երեք նախագահներէն ետք, Փաշինեանի հրատարականը պահանջողներէն ամէնէն բանիմաց եւ համոզիչ պատճառաբանութիւնը վերջերս տրուեցաւ Հայց Առաքելական Եկեղեցւոյ Ֆրանսայի նախկին առաջնորդ Նորվան արք. Զաքարեանի կողմէ, որուն «ՀԱՅԱՍՏԱՆԸ՝ ՆՈՅՆՄԲԵՐ 9-ԷՆ ԵՏՔ» յօդուածը լոյս տեսաւ Պոսթըն եւ Փարիզ հրատարակուող «Հայրենիք» եւ «Նոր Յառաջ» թերթերու փետրուար 6-ի թիւերուն մէջ, որ իրաւական փաստարկներու (legal arguments) համագոր բացատրականով եւ պատճառաբանութիւններով կը պահանջէ այդ հրատարականը: Յիշեցնենք, որ Նորվան սրբազանը էջմիածնի Գարեգին Բ. աթոռակալին մագիլներուն կեր դարձաւ տարիներ առաջ՝ այդ աթոռակալին գործընկեր ոճրագործ քահանայ մը չպաշտպանելու «մեղքը» գործած ըլլալուն համար:

Նման բանիմաց եւ համոզիչ չէր այն բացատրութիւնը, որ տրուեցաւ ամենայն հայց կաթողիկոս Գարեգին Բ-ի կողմէ յունուար 28-ին անոր Եռաբլուր կատարած այցելութեան ընթացքին, ուր վերստին պահանջելով Փաշինեանի հրատարականը եւ ի պատասխան թղթակցի մը հարցումին, թէ ինչո՞ւ ան երբեք ձայն չէր բարձրացուցած ընդդէմ նախկին իշխանութիւններուն՝ կ'ըսէր. «Եկեղեցին ինքն է որոշում, թէ ինչպիսի պարագաներում, ինչպիսի իրավիճակներում իր ձայնը բարձրացնի, իր ձայնը հնչեցնի»: Արդեօք աւելի ճիշդ պիտի չըլլա՞ր, եթէ ան ունենար յանդուրձանութիւնը ըսելով, թէ Եկեղեցին ՅԱՃԱԿ եւ ՄԻՇՏ ժողովուրդը կեղեքող եւ շահագործող իր գործակիցներուն ու լծակիցներուն կողմէ եղած թելադրութիւններուն կը հետեւի Հայաստանի եւ Սփիւռքի մէջ...:

Վերագրուելով Նորվան սրբազանի յօդուածին՝ ան արդարացիօրէն կ'ըսէ հետեւեալը. «Աւաղ, թաւշեայ յեղափոխութեան հերոս Նիկոլ Փաշինեանի անունին կցուեցաւ «դաւաճան» պիտակը: Ծանր է կրել այդ մակդիրը, մանաւանդ ենթական երբ համոզուած է, որ հազարաւոր քաղաքացիներու եւ գինուորներու կեանքը խնայելու սիրոյն դիմած է այդ քայլին», եւ կը շարունակէ՝ ըսելով. «Պէտք է ընդունել, որ ո՛վ որ ալ ըլլար յանդգնողը ստորագրելու որեւէ փաստաթուղթ, ուր նշուած ըլլար վերագրանքներ Ազգային ժողովին դարբարդեան ազատագրեալ հինգ առաւել երկու շրջանները, թէկուզ Միւսքի խաղաղ բանակցային ճամբով, նո՛յն է, ենթակայ պիտի ըլլար «դաւաճան»-ի անբաժանելի արդեօք վերոնշեալ հոդերը վերագրանքներուն մը համար խուսափելու համար: Այսպէս է աշխարհի կարգը: Արարքի մը պատիւը կամ անպատուութիւնը դերակատարին կը վիճակի: 2018-ի թաւշեայ յեղափոխութեան լուսաւոր պատիւը վիճակեցաւ իրեն, դերակատարն էր: Ներկայիս ալ նոյնքեր 9-ի տխուր համբաւը իրեն կը վիճակի, քանի որ ասոր ալ դերակատարն է»:

Համոզիչ եւ տեղին խօսք է սրբազանին տուած բացատրութիւնը, ըսելիք չկայ:


Սրբազանը սակայն բացատրութիւն չի տար, թէ որո՞ւ պէտք է յանձնել Հայաստանի ու անոր ժողովուրդին առաջնորդութիւնը, երբ բեմի վրայ կ'երեւան դերակատարներ, որոնց անցեալը փրկութեան որեւէ յոյսով չի լեցնէր մարդոց սիրտերը...: Սրբազանը Փաշինեանի հրատարականը պահանջելով, կամայ թէ ակամայ, մասնակից կը դառնայ «ազնուականներու» («էլիտար»-ներու՝ ինչպէս պիտի ըսէին Հայաստանցիները) խումբին, որոնք ալան-թալանի ենթակեցին Հայաստանի գոյքն ու հարստութիւնը ամբողջ 30 տարի՝ Փաշինեանով փրկուած եւ յուսադրուած մեր ժողովուրդը թշուառացնելով:

Որպէս պատասխան՝ հոս կ'ուզեմ յիշել Փարիզի «Նոր Յառաջ» թերթի փետրուար 2-ի թիւին մէջ գրուած ուրիշ մէկ սքանչելի յօդուած մը Ստեփան Պողոսեանի գրչով՝ «ԱՅՍ ԱՆՏԱՆԵԼԻ ԲԵՌԸ՝ ՍԵՓԱԿԱՆ ՊԵՏՈՒԹԻՒՆ ՈՒՆԵՆԱԼ» վերնագրով, որուն մէջ հեղինակը ցաւատանջ կը գրէ. «70 տարի ամբողջ արիւն քրտինքով, գրկանքներով ձեռք բերուած հանրային գոյքի, հարստութեան արանթալանը որուն սկզբնաւորութեան միայն ականատես եղած էր վարդգէս Պետրոսեանը գրեց իր յօդուածը «ԱՅՍ ԱՆՏԱՆԵԼԻ ԲԵՌԸ՝ ՍԵՓԱԿԱՆ ՊԵՏՈՒԹԻՒՆ ՈՒՆԵՆԱԼ»:

Սրտցաւ հայու, անկեղծ մտաւորականի խօսքն ու գիրը չմարսեցին ոմանք եւ օր մը անանուն գնդակ մը եկաւ եւ շատ մը ուրիշներու կարգին գինք ալ տապալեց: Սպանութեան պարագաներն ալ չբացայայտուեցան, ոչ ալ ոճրագործը, ոչ ալ պատուիրատուն կամ պատուիրատուները գտնուեցան»:

Երկու կաթողիկոսներուն, երեք նախկին նախագահներուն, Նորվան սրբազանին եւ շատ ուրիշներուն, որոնք կը պահանջէն Փաշինեանի հրատարականը, վարդգէս Պետրոսեանի տանջահար ոգին կ'աղաղակէ՝ ըսելով. ՆԱԽԿԻՆ ԻՇԽԱՆԱՒՈՐՆԵՐՈՒՆ (որոնք մէջ վարչապետացու Վազգէն Մանուկեան) ՎԵՐԱԴԱՐՁԸ ԱՆՏԱՆԵԼԻ ԲԵՌԸ Է ՀԱՅՈՒԹԵԱՆ ՈՒՍԵՐՈՒՆ ՎՐԱՅ: ՄԻ՝ ՎՍՏԱՀԻՔ ԱՆՈՆՑ:

Թուրքիոյ Ուժանիւթի Տագնապը Եւ Արտաքին Քաղաքականութեան Զեւաւորումը



ՎԱՐՈՒԹ ԹԵՆՊԵԼԵԱՆ

Հրապարակուած տուեալներու համաձայն, քարիւղի (նաւթի) եւ բնական կազի առումով, Թուրքիա ինքնաբաւ երկիր մը չէ եւ ստիպուած է գանոնք այլ երկիրներէ ներածել՝ բաւարարելու համար իր ուժանիւթի աճող պահանջը: Թուրքիա իր ուժանիւթի ազգային պահանջին միայն մէկ չորրորդը կը բաւարարէ ներքին միջոցներով: 2019-ին, հանածոյ վառելիանիւթի (նաւթ, կազ, հանքածուխ) առումով, գրեթէ 40% համեմատութեամբ կախեալ էր Ռուսիայէն, իսկ ընդհանրապէս կը ներածէր իր բնական կազին 99 տոկոսը եւ իր օգտագործած նաւթին՝ 93% -ը: Այդ պատճառով, յատկապէս վերջին երեք տասնամեակներուն, անիկա նոր թափ տուած է իր տարածաշրջանային աշխարհաքաղաքական դերակատարութեան: Անշուշտ ուժանիւթի ապահովման իր ռազմավարութիւնը ձեւաւորելու ատեն, Թուրքիա առաջին հերթին ի մտի ունի իր երկրին ուժանիւթի ապահովութիւնն ու անվտանգութիւնը:

2018-ին Թուրքիա շուրջ 43 միլիառ տոլար ծախսած է ուժանիւթի ներածման համար, 2019-ին՝ 43,3 միլիառ տոլար, իսկ 2022-ին կը նախատեսուի որ այդ գումարը հասնի 45,7 միլիառի, եթէ անշուշտ քարիւղի գիները չաւելնան:

Թուրքիոյ տնտեսութիւնը հիմնականօրէն հաստատուած էր գիւղատնտեսութեան վրայ մինչեւ 1982, երբ յատկապէս քաղաքներու զարգացումով ու ծաւալումով, արագօրէն սկսաւ զարգանալ նաեւ ճարտարարուեստական արդիւնաբերութիւնը: 1983-էն ի վեր, Թուրքիոյ ազգային համախառն արտադրութիւնը (GDP) աճած է միջին հաշուով տարեկան 5% համեմատութեամբ՝ գրաւելով ՏՀԶԿ-ի (Տնտեսական համագործակցութեան եւ զարգացման կազմակերպութեան-OECD) երկիրներու առաջին դիրքը: Վերջին տարիներու տնտեսական այս աճը կապուած է պետական ձեռնարկութիւններու սեփականաշնորհման հետ, եւ հետեւաբար Թուրքիոյ ուժանիւթի պահանջը արագօրէն աճած է ընկերային եւ տնտեսական զարգացման գուղահեռ:

Երկրին ուժանիւթի սպառումը զգալիօրէն աճած է 1980-ականներու սկիզբէն սկսեալ: Ելեկտրականութեան արտադրութեան մէջ Թուրքիոյ ինքնաբաւութեան մակարդակը 1980-ի 77%-էն 2014-ին իջած է 37%-ի: 2020-ի գնահատումով, Թուրքիոյ ուժանիւթի պահանջը աճած է տարեկան շուրջ 7%

համեմատութեամբ, մինչ կազի սպառումը, բաղադատած նախորդ տարուան, աճած է 9,2%-ով:

Ինչ կը վերաբերի ներածումի աղբիւրներուն, Թուրքիա հետամուտ է անոնց այլազանութեան, ինչպէս նաեւ՝ փոխադրութեան ուղիներու արդիւնաւէտութեան? այն ակնկալութեամբ, որ կը վերածուի քարիւղատարներու եւ կազատարներու տարանցման երկրի մը եւ ուժանիւթի կեդրոն մը, հանգոյց մը՝ արեւելքի արտադրող երկիրներուն եւ արեւմուտքի սպառող երկիրներուն միջեւ:

Այս շրջագիծէն ներս, Ռուսիան, Իրանը եւ Ատրպէյճանը Թուրքիոյ համար կը նկատուին կարեւոր գործընկերներ: Ուժանիւթի հարցերը կարեւոր դեր կը խաղան այս երկիրներուն հետ Թուրքիոյ յարաբերութեան մէջ, որոնց հետ գործակցութիւնը Թուրքիա կը փորձէ պատշաճեցնել Արեւելքի եւ Արեւմուտքի, Հիւսիսի եւ Հարաւի միջեւ ուժանիւթի կամուրջ մը եւ հանգոյց մը դառնալու իր նպատակին:

Թուրքիա իր քարիւղը հիմնականօրէն կը ներածէ Ռուսիայէն (25,21%), Իրանէն (18,37%), Իրաքէն (17,08%) եւ Հնդկաստանէն (11,12%): Իսկ կազի պարագային, վերջին չորս տասնամեակներուն, Թուրքիա հիմնականօրէն եղած է կախեալ ռուսական, իրանական եւ, վերջերս՝ ատրպէյճանական կազէն: Ինչ կը վերաբերի կազին, որոշ ժամանակէ ի վեր, Թուրքիոյ ներածման գլխաւոր աղբիւրը եղած է Ռուսիան, բայց ցուցանիշները սկսած են փոխուիլ ի նպաստ Ատրպէյճանի: Մինչեւ 2018, Իրան կը գրաւէր երկրորդ դիրքը, իսկ Ատրպէյճանը՝ երրորդը: Իրանի պարագային, 2019-ին, Թուրքիոյ ներածած կազի քանակը եղած է 7,74 միլիառ խորանարդ մեթր՝ 2 միլիառ խորանարդ մեթրով ետ մնալով Ատրպէյճանէն: 2020-ի առաջին 10 ամիսներուն, այդ քանակը իջած է 3,83 խորանարդ մեթրի? Ռուսիոյ 10,42 միլիառին եւ Ատրպէյճանի 9,24 միլիառին դիմաց: Բնականաբար, Թուրքիա բնական կազ եւ հեղուկացուած բնական կազ (LNG) կը ներածէ նաեւ Քաթարէն, Ալճերիայէն, Նիճերիայէն, Քամեւրունէն եւ Եգիպտոսէն, ինչպէս նաեւ LNG՝ Միացեալ Նահանգներէն:

Միւս կողմէ, արեւմտեան ծովափնեայ վիճելի շրջաններուն մէջ կազ հետախուզելու Թուրքիոյ քայլը լարուածութիւն ստեղծած է Յունաստանի եւ Եւրոպայի հետ: Արեւելեան Միջերկրական ծովուն կա-

Massis Weekly

Volume 41, No. 6

Saturday, February 20, 2021

Armenian MFA- November 9 Statement Does Not Provide for Establishment of Any Corridor

YEREVAN (Armradio) -- The November 9, 2020 statement of the Prime Minister of Armenia, the Presidents of Russia and Azerbaijan does not contain any provisions on the establishment of any corridor, Spokesperson for the Ministry of Foreign Affairs Anna Naghdalyan told Armenpress.

The comments come after the President of Azerbaijan Ilham Aliyev stated that “a joint statement contains a special provision on the establishment of the Nakhichevan corridor.”

“Paragraph 9 of the November 9 trilateral statement mentions the unblocking of all economic and transport ties in the region,” the Spokesperson said, adding that this is the approach Armenia pursues on issues of establishing regional stability, as well as the prospects of cooperation in the region.

“The above paragraph does not



contain any provisions for the establishment of a corridor. Any road or communication route passing through the territory of Armenia will be exclusively under the jurisdiction of the sovereignty of Armenia,” Naghdalyan said.

54 Senators Send Bipartisan Letter to Biden Criticizing Human Rights in Turkey



WASHINGTON, DC — A bipartisan coalition of 54 Senators addressed a letter to President Joe Biden, expressing their concern over a deteriorating human rights record in Turkey. The letter cited Turkey’s recent trends towards authoritarianism, in particular the jailing of journalists that oppose the government and its military involvement in Syria and Armenia.

The United States has increasingly condemned Turkey in recent years under President Recep Tayyip Erdogan. According to the Senate letter, since the failed coup against him in 2016, Erdogan has been cracked down on domestic opposition, by systematically “[silencing] or [coopting] critical media outlets, [purging] independent judges and [replacing] them with party loyalists and [jailing] scores of journalists.” However, the letter fails to mention the domestic crackdown on Christianity, by which the government has systematically deported Christians from Turkey. International Christian Concern (ICC) published a report last Fall

on Turkey that outlines this persecution in greater detail.

Nevertheless, the Senators do specifically mention Turkish involvement in Azerbaijan’s aggressions against Armenia in the recent war over Nagorno-Karabakh. This war is just one piece of Turkey’s broader geopolitical goals in the region. Turkey and Azerbaijan are closely allied, in part due to their shared ethnic histories as Islamic Turkic nations. Armenia is the oldest Christian nation in the world, and sits directly in between Turkey and Azerbaijan, hindering the unification of the two Turkic nations. As displayed by the war crimes committed against Armenian civilians and the continued Turkish denial of the 20th century Armenian genocide, this conflict has much broader implications.

ICC published a report on the war, entitled The Anatomy of Genocide: Karabakh’s Forty-Four Day War, and is currently running a petition call-

Continued on page 2

EU-Armenia Accord Set to Take Effect on March 1

YEREVAN — European Union member states have completed the ratification of the EU’s Comprehensive and Enhanced Partnership Agreement (CEPA) with Armenia which was signed more than three years ago.

The Armenian Foreign Ministry said the EU notified Yerevan about the “completion of the ratification process” on Wednesday.

“The Agreement will fully enter into force on March 1, 2021,” the ministry announced in a statement.

The 350-page agreement commits the Armenian authorities to carrying out political reforms that will democratize the country’s political system and boost human rights protection. They must also gradually “approximate” Armenian economic laws and regulations to those of the EU.

The CEPA was signed in November 2017 as a less ambitious substitute for an Association Agreement which Armenian and EU negotiators nearly finalized in 2013. Then Armenian President Serzh Sarkisian scuttled the signing of that agreement with his unexpected decision to seek his country’s membership in a Russian-led trade bloc.

The Foreign Ministry described the CEPA as a “solid legal basis” for deepening Armenia’s ties with the EU



in a wide range of areas.

“The effective implementation of the Agreement will bring tangible results to our citizens by promoting democracy, political, economic and social stability through extensive reforms and will over time have a positive impact on the welfare of our citizens,” read its statement.

Arman Yeghoyan, the chairman of the Armenian parliament committee on European integration, likewise expressed confidence on Thursday that the accord will produce “qualitative changes” in Armenia’s relationship with the EU.

Yeghoyan said that although the CEPA makes no reference to visa liberalization it will facilitate the eventual lifting of the EU’s visa requirements for Armenian citizens.

Azerbaijan Grossly Violating International Mandates and Requirements for the Repatriation of POWs



YEREVAN -- Armenia's Human Rights Defender Arman Tatoyan said he has sent a detailed report to the UN Human Rights Council stating that the Azerbaijani authorities are delaying the return of the captives and are grossly violating international mandates and requirements.

The report was sent to the UN Human Rights Council under a separate procedure. Only national human rights institutions with international "A" status have this opportunity.

The report specifically refers to the Azerbaijani authorities' abuse of legal procedures and politicizing of the issue of the repatriation of prisoners.

'By doing so, they are causing mental suffering to our society and,

and foremost, to the families of the captives, and by toying with their emotions they are causing targeted raising of tensions,' he said in a Facebook post.

The report has now been submitted, taking into account the dates and timing of the scheduled sessions of the UN Human Rights Council.

So far, 64 Armenians, both civilians and soldiers, and 16 Azerbaijanis have been repatriated from both countries as part of exchanges between the two sides.

Armenia and Azerbaijan earlier agreed to "all for all" swap of POWs. However, more than two months after the fighting stopped, Azerbaijan still holds unknown dozens of Armenian prisoners of war.

4.7-Magnitude Earthquake Shakes Armenia's Capital Yerevan



YEREVAN — A 4.7-magnitude earthquake shook the Armenian capital, Yerevan, on February 13, prompting residents to flee buildings into the streets in fear of an aftershock.

The Seismic Protection Service said it has received reports about minor destruction from various regions of the country. Spokeswoman of the Ministry of Emergency Situations Anna Baghdasaryan told Novosti-Armenia news agency that more aftershocks are expected.

She said the country's all strategic facilities, including the Metro and the Armenian nuclear power plant are intact.

According to Baghdasaryan, it is

difficult to say how many aftershocks will follow. "In any case, we recommend that residents of high-rise residential buildings stay outdoors for a while," she added.

The earthquake was felt in Aragatsotn, Ararat, Shirak, Armavir, Kotayk, Vayots Dzor provinces.

One house in the Erebuni community of Yerevan was damaged, one citizen was slightly injured. Tiles fell off in several places, no victims have been reported yet, Prime Minister Nikol Pashinyan said on his Facebook page.

The European Mediterranean Seismological Center said the quake's magnitude was 4.7 and its epicenter was 13 kilometers south of Yerevan.

Yerevan Mayor Condemns Desecration of Holocaust Memorial in Yerevan



YEREVAN (Armradio) — Yerevan Mayor Hayk Marutyan has condemned the desecration of the monument to Holocaust and Armenian genocide victims.

"Encroachment on any monument is a completely unacceptable and condemnable act that should be excluded from our city," the Mayor said.


"Representatives of different nationalities have lived side by side in Yerevan for centuries, proudly bearing the honorable title of being a citizen of Yerevan along with their nationality, and no motive can undermine that solidarity," he added.

He voiced hope that the law enforcement agencies would respond quickly and adequately.

The "To Live and Not Forget" Holocaust memorial in the Armenian city of Yerevan was desecrated with paint sprayed all over the Hebrew writings.

The memorial was built to honor both the Holocaust and the Armenian Genocide victims and consists of two primary pillars, with "To Live and Not Forget: To the Memory of the Victims of the Genocides of the Armenian and Jewish Peoples" written in Armenian on the right pillar and Hebrew on the left pillar.

Russian Border Guards Set Up Additional Post on Armenia-Azerbaijan Border



YEREVAN -- Russian border guards reportedly set up an additional post on Armenia's border with Azerbaijan at the weekend after what Armenian officials described as gunshots fired by Azerbaijani forces.

Authorities in Armenia's Syunik province said on Monday that Azerbaijani servicemen deployed near Agarak, an Armenian village several kilometers east of the provincial capital Kapan, continuously fired small arms in the air on Saturday for unknown reasons.

According the provincial administration, Russian border guards deployed in the area documented the sporadic gunfire and established an additional outpost at the border section in response to the incident.

The village chief, Hayk Sahakian, told RFE/RL's Armenian Service that there was no further shooting there on Sunday and Monday. Despite the relative calm many, villagers remain concerned about their security, he said, arguing that

the nearest Azerbaijani position is only about 1 kilometer from Agarak.

The office of the Armenian human rights ombudsman, Arman Tatoyan, released what it described as a mobile phone video shot by an Armenian border guard deployed outside Agarak. The short video caught the sound of intense automatic gunfire.

In a statement, Tatoyan said that such gunshots are a regular occurrence in Syunik villages bordering three districts southwest of Nagorno-Karabakh which were retaken by Azerbaijan during and after the autumn war. He condemned the incidents as a security threat to the local population.

"They shoot sporadically," said Sahakian. "When they use tracer bullets we can see that they fire towards the village."

During the six-week war Russia deployed soldiers and border guards to Syunik to help the Armenian military defend the region against possible Azerbaijani attacks.

Entry to Artsakh is Free for Citizens of Armenia. The Changes Concern Foreigners

YEREVAN — The news spread in recent days on social networks that visiting Artsakh is unsafe does not correspond to reality. Some changes have been made to the entry procedure to ensure the safety of citizens.

"I want to note once again that this is false information. Please follow the official information only," – said Head of the consular department of the permanent representation of Artsakh in Armenia Lusine Stepanyan.

Entry procedures have not changed significantly. The changes concern citizens of foreign countries and Diaspora Armenians who are not citizens of Armenia. To visit Artsakh, they must first apply to the Artsakh Ministry of Foreign Affairs for an entry permit.

"Permission, unambiguously, both before and now is given by the Artsakh Ministry of foreign Affairs, visas are issued by us – the representative office in Yerevan. The Artsakh Ministry of Foreign Affairs simply informs the Russian peacekeepers about



the citizens who want to visit Artsakh," – said Lusine Stepanyan.

The visa regime is valid for citizens of foreign countries and Diaspora Armenians who are not citizens of Armenia. Visas will be issued in 3-4 days. There is no visa regime for Russian citizens, they are provided with a registration form to visit Artsakh. Entry is free for citizens of Armenia.

54 Senators Send Bipartisan Letter to Biden

Continued from page 1

ing for the release of Armenian prisoners of war who remain in Azerbaijani captivity despite the conclusion of the war last Fall.

The Senate letter, led by Senator Ron Wyden (D-OR) and Senator Marco Rubio (R-FL), is a manifestation of the bipartisan nature of this issue as well. In a time of great division in Congress, both Democrats and Republicans have continually united around a joint con-

demnation of Turkey's human rights abuses. The Senators hope that the United States will be able to bring an end to these abuses as a key ally to Turkey and a fellow member of NATO.

The Biden administration has continually expressed a desire to strengthen American alliances moving forward. Additionally, President Biden seems especially poised to address Turkey's abuses, due to his close relationship with the Greek Orthodox Church and appointment of Secretary of State Antony Blinken.

Valentine's Day Blood Drive Draws Hundreds



PASADENA – In celebration of Valentine's Day, on Feb. 14, the Gaidz Youth Organization (GYO), Armenian Council of America (ACA), in cooperation with the Red Cross, hosted a blood drive at the AEBU center in Pasadena.

It is widely known that blood drives save hundreds of thousands of lives across many communities throughout the nation. GYO and ACA partnered up with the Red Cross, in an

would be a great idea to show our love for our community by hosting a blood drive," said GYO Co-chair Alison Ghafari. "We are facing a serious crisis amidst the COVID-19 pandemic and blood donations are in great demand. It is our responsibility to serve the community in any way possible and so we decided that this was the best way to spend Valentine's day and express our love and compassion towards humanity," she added.



effort to help underserved communities in Southern California, which have been hit the hardest by the pandemic.

"There is currently a shortage of blood within the Los Angeles County area, and every drop counts," said ACA Board Member Harry Unell. "Our hospitals and medical personnel are already stretched thin, and we feel it is our duty to help in any way we can, especially now, during the pandemic with all the unrest we are experiencing. This event was a great opportunity for us to come together to demonstrate the love we feel for our community and mankind," added Unell.

"Since Valentine's Day is the holiday of love, we thought that it

Ghafari and Unell both stated that the organizations are committed to raising more awareness about the importance of donating blood. They added that there will be more blood drives at the AEBU center in the future.

"Donating blood is a selfless act and rewarding experience for individuals interested in saving lives. I would like to express my deepest gratitude to the Red Cross for helping ACA and GYO put together this successful event, and most importantly, the participants, who spent their Valentine's Day graciously donating blood to save the life of a person in need," Unell added.

For more information, please contact: info@armeniancouncil.org

Armenian Government Plans Construction of Alternative Roads to Syunik Province

YEREVAN— The Armenian government has pledged to build or repair roads bypassing areas along Armenia's southeastern Syunik province that border the Zangelan and Kubatli districts southwest of Karabakh which were mostly recaptured by Azerbaijan during the autumn war in Karabakh.

Armenian army units and local militias completed in December their withdrawal from parts of the districts close to Syunik's capital Kapan and

many other communities. Some of those lands are located along the Soviet-era Armenian-Azerbaijani border which has never been demarcated due to the Karabakh conflict.

The areas in question include a 20-kilometer section of the main highway connecting Kapan to another major Syunik town, Goris. A 4-kilometer section of another provincial highway stretching from Kapan to several Armenian villages was also placed under

Consulate General in Los Angeles Organizes Business Seminar to Promote the Import of Alcoholic and Non-Alcoholic Beverages from Armenia



GLENDALE – On February 10, a virtual business seminar was held to promote the import of alcoholic and non-alcoholic beverages from Armenia to the Western United States. The seminar was organized by the Consulate General of Armenia in Los Angeles with the collaboration of the California-based Armenian American Business Council. This marks the beginning of a series of seminars organized by the Consulate General in Los Angeles, which will be dedicated to promotion of export of various types of goods from Armenia to the U.S.A. and on the expansion of production in Armenia.

The seminar was led by the Consul General of Armenia in Los Angeles Ambassador Armen Baibourtian. Welcoming the participants, Ambassador Baibourtian underlined the importance of the event as a practical step to further enhance the Armenia-California relations in the field of business with an ultimate goal of contributing to the development of the Armenian economy in these challenging times.

The Consul General noted that the enacted seminar will be followed up, and the Consulate General will present all the practical proposals summarized at the seminar to the respective ministries and government agencies in Armenia. Ambassador Baibourtian also noted that the Consulate General will proceed with organizing several planned events after the slowdown of the pandemic aimed at facilitating the access of the Armenian beverages into the American market.

Azerbaijani control.

Under further Armenian-Azerbaijan agreements reached after the ceasefire deal, Syunik residents are still able to travel along those road sections without any restrictions. Their security is to be guaranteed by Russian military posts set up there recently.

Many Syunik residents are wary of using the roads for safety reasons. Their concerns have been aggravated by several reported cases of Azerbaijani border guards and soldiers standing on the contested road sections and watching car traffic through them.

Speaking in the Armenian parliament on Wednesday, Minister for Territorial Administration and Infrastruc-

The seminar was attended by Varazdat Pahlavuni, Counselor of the Consulate General, Naira Karapetyan, Head of the Foreign Trade and Eurasian Economic Union Department of the Ministry of Economy of Armenia, Hasmik Sargsyan from the Department of International Relations of the same Ministry of Economy, Armen Harutyunyan, Chairman of the Armenian-American Business Council, Armen Vardanyan and Sevada Hemelians, members of the board of the Armenian-American Business Council, Karine Sarkissian, Executive Director of the American Chamber of Commerce in Armenia as well as wholesale importers or distributors of Armenia-made alcoholic (wine, brandy, fruit vodka, whiskey) and non-alcoholic (juices, lemonades, water, mineral water) beverages in California such as LAC, Fat&Happy Beverages, WinesofArmenia, Mistral, America, Voskevaz Winery, ArmAs Winery, Prowood USA, Jermuk Group USA, Apollo International, T&T import-export Inc., Export Armenia, IDW, Mr. Martin Inc., Noahs Orchards Distilling Co., and American Global Group.

Among the discussed issues were the efficiency improvement of the state-businessperson interrelationship in the given sphere and the task of increasing the volume of Armenian exported goods to the United States. The Consulate General of Armenia in Los Angeles pledged to continuously follow up with the respective government agencies on the issues raised during the discussion and the outcomes of the business seminar.

Suren Papikyan promised new bypass roads for the mountainous region that also borders Iran.

"As soon as weather conditions allow, we will build them," Papikyan said without elaborating.

Travelers can also navigate between Kapan and Goris through another road located deeper inside Armenian territory. But its principal 42-kilometer section has been barely used since the early 1990s and has fallen into disrepair.

A government-funded reconstruction of 12 kilometers of that road was completed last year shortly before the outbreak of the Armenian-Azerbaijani war.

Online Panel


“Armenia in 3D: Democracy, Security, and Sovereignty in an Uncertain World”

BELMONT, MA — The National Association for Armenian Studies and Research (NAASR) / Calouste Gulbenkian Foundation Lecture Series on Contemporary Armenian Issues and the Society for Armenian Studies (SAS) will present a panel discussion entitled “Armenia in 3D: Democracy, Security, and Sovereignty in an Uncertain World,” on Sunday, February 21, at 1:00 pm (ET).

The panel will feature the co-editors of and two contributors to the volume *Armenia’s Velvet Revolution: Authoritarian Decline and Civil Resistance in a Multipolar World* (I.B. Tauris, 2020): Dr. Laurence Broers, Associate fellow, Russia and Eurasia Programme at Chatham House, and Dr. Anna Ohanyan, Richard B. Finnegan Distinguished Professor of Political Science and International Relations, Stonehill College; and Dr. Kristin Cavoukian, University of Toronto Mississauga, Department of Political Science, and Mr. Richard Giragosian, Founding Director of the Regional Studies Center (RSC), Yerevan, Armenia. The panel will be moderated by Marc A. Mamigonian, NAASR Director of Academic Affairs.

Few events in modern Armenian history have generated as much excitement world-wide as the Velvet Revolution in 2018, led by Nikol Pashinyan. Peacefully ushering out a corrupt regime and promising reforms and increased democratization, Armenia appeared as an exception to a global trend towards authoritarianism.

This distinguished panel will present the publication *Armenia’s Velvet Revolution* as well as discuss the



promise and the peril facing Armenia’s democratic consolidation, in light of the new post-war realities in the country and the region.

The discussion will be livestreamed on YouTube or via Zoom.

To view live on YouTube, no registration is required. Go to NAASR’s channel at the start of the program or watch afterwards if you missed it: <https://www.youtube.com/c/ArmenianStudies>.

To attend on Zoom registration is required. Zoom attendees can submit written questions via Zoom which will be asked as time permits. Zoom Registration link: https://us02web.zoom.us/webinar/register/WN_pQUryntPStyaKSA3N6BZ7Q.

For more information contact NAASR at hq@naasr.org.

Armenia Fund USA Names

Azatui Karaoglyan Executive Director

LOS ANGELES — After a unanimous vote by its board of directors, Armenia Fund named Azatui “Azi” Karaoglyan as executive director.

Karaoglyan is the first woman set to lead the day to day operations of the Armenia Fund USA in its 25 year history. A role model for aspiring leaders, Karaoglyan has a long history with the Armenia Fund. She started as a volunteer, phone banking during annual Telethons since she was just 13 years old. This past fall was her 18th year supporting the Telethon and Karaoglyan’s entire family has also actively contributed to the organization for nearly 20 years.

From the beginning, Karaoglyan increasingly assumed larger roles with Armenia Fund, climbing from part-time worker and database administrator to supervisor. Over the last several months and amidst the devastation which rocked Armenia and Artsakh, she took on new organizational responsibilities which undoubtedly positioned her for her new role as executive director. Karaoglyan graduated from the AGBU Manoogian-Demirdjian School in Los Angeles and California State University, Northridge, where she majored in business management.

“When I speak to our donors, I



consider them members of my own family,” Karaoglyan said. “It is my deepest honor to represent them and it is my duty to ensure that every one of their dollars reaches those in need. You can count on me to get this done.”

“All of us at Armenia Fund USA are proud to elevate Azi to this important role,” said Maria Mehranian, Chairwoman of Armenia Fund USA. “I look forward to working with her to continue to grow Armenia Fund in the years to come.

For more information, visit ArmeniaFund.org.

Armenian American Museum Announces General Contractor Search



GLENDALE -- The Armenian American Museum and Cultural Center of California is seeking a General Contractor for the construction of the landmark center slated for groundbreaking in Summer 2021.

The museum has issued a Request for Qualifications (RFQ) for interested General Contractors at ArmenianAmericanMuseum.org/RFQ.

The RFQ response deadline for interested General Contractors is March 5, 2021.

The museum anticipates the selection and appointment of the General Contractor in Spring 2021.

The Armenian American Museum will rise to a two-level 50,820 square foot museum complex built on a one-level semi-subterranean parking garage. The first level will feature the grand lobby, auditorium, learning center, demonstration kitchen, gift shop, and administrative offices. The second level will be dedicated to the per-

manent and temporary exhibition galleries as well as the collections archives.

The cultural and educational center’s programming plans include producing and hosting powerful, immersive, and thought-provoking permanent and temporary exhibitions, leading meaningful dialogues and discussions through engaging public programs, providing educational programs for adults, youth, kids, and families, preserving Armenian heritage through the museum’s collections and archives, and serving as an iconic venue for memorable experiences, gatherings, and celebrations.

The Armenian American Museum will be constructed in Central Park in Glendale, California. The museum has secured a long-term ground lease for up to 95 years with the City of Glendale for the city-owned property.

For more information, visit www.ArmenianAmericanMuseum.org.

pate returning to work, in crowded offices and call centers.

Part of Krisp’s allure is the ability to run locally and securely on many platforms with very low overhead.

Krisp has been optimizing and reoptimizing its algorithms to run efficiently on both Intel and ARM architectures, and decided to roll out its own servers for training its models instead of renting from the usual suspects.

Armenian Startup Nearly Triples Fundraise with \$9M Expansion After Blockbuster 2020

YEREVAN -- Krisp, an Armenian startup that uses machine learning to remove background noise from audio in real time, has raised \$9M as an extension of its \$5M A round announced last summer, TechCrunch reports.

The extra money followed big traction in 2020 for the Armenian company, which grew its customers and revenue by more than an order of magnitude.

The company appears to have benefited immensely from the shift to virtual meetings and other trends accelerated by the pandemic. 2020 brought the company a 20x increase in active users, a 23x increase in enterprise accounts and 13x improvement of annual recurring revenue.

The rise in virtual meetings — often in noisy places like homes — has led to significant uptake across multiple industries.

Krisp now has more than 1,200 enterprise customers, banks, HR platforms, law firms, call centers — anyone who benefits from having a clear voice on the line, co-founder Davit Baghdasaryan told TechCrunch.

Enterprise-oriented controls like provisioning and central administra-



tion have been added to make it easier to integrate.

Noise cancellation for high-fidelity voice channels makes the software useful for podcasters and streamers, and acoustic correction (removing room echos) simplifies those setups quite a bit as well. Considering the amount of people doing this and the fact that they’re often willing to pay, this could be a significant source of income.

The company plans to add cross-service call recording and analysis; since it sits between the system’s sound drivers and the application, Krisp can easily save the audio and other useful metadata (How often did person A talk versus person B? What office locations are noisiest?). And the addition of voice cancellation — other people’s voices, that is — could be a huge benefit for people who work, or antici-

«Կարմիր ժամուց»-ին Այժմեականութիւնը (Արփիար Արփիարեանի Յիշատակին)

ԱԽԵՏԻՍ ՈԱԶՄԻԿ

1908-ին հայ գրականութիւնը կորսնցուց չորս կարկառուն գրագէտներ: Չորսն ալ ունեցան արտասովոր մահեր: Արփիար Արփիարեան, Միսաք Մեծարեան, Եղիա Տեմիրճիպաշեան եւ Մուրացան:

12 Փետրուարին, գիշերը, Գահիրէի մէջ, եղբայրասպան երեք գնդակներ ուղղուեցան հայ հրապարակագրութեան ամենախնայատիւ գրիչներէն Ա. Արփիարեանի կռնակին: Մահը եղաւ վայրկեանապէս: Ցնցուած էր մտաւորականութիւնը, գայրագին յուզմունքով ալեկոծուած էր հայ կեանքը, ամէնուրեք շշմած էին իր գրականութեան ու գրիչին սիրահարները եւ վերջապէս փոթորկած էր հայ մամուլի աշխարհը, որ կը կորսնցնէր իր արի մարտիկներէն ամենաջողատը:

Այս երրորդ մահափորձն էր իր դէմ, որ կը հասնէր իր նենգ նպատակին: 56-ամեայ գրագէտը իր կենսագրութեան էջերը հարստացուցած էր ազգային հասարակական բուռն գործունէութեամբ: Փոթորկալի կեանքի մը ամենադժուարին հանգրուանները վերապահուած էր անոր: Բացի հրապարակագրութեան մէջ իր բացած յեղաշրջիչ ուղիէն, ան կը թակահարէր հասարակական ոլորտ ներու մէջ ամուր ներկայութիւն մը եղաւ: Իր համախոհ նե րով հաւատաց հայ գանգուածները ուսմամբ լուսաւորելու եւ մատղաշ սերունդը կը թելու նուիրական գործին: Եղաւ ջատագով հայկական երկու հատուած նե րուն միացեալ լեզուին ու պայքարին՝ երբ կ'աշխատակցէր թիֆլիսահայ մամուլին:

Յաճախ հակասական ծայրայեղութիւններու մէջ իյնալով տեւաբար կը մարտնչէր տարբեր երեւոյթներու դէմ, կարծէք պայքարը ըլլար իր հաճելի ժամանցը: Ունենալով սուր գրիչ չէր խնայեր ոեւէ հակառակորդի: Մէկ կողմէ թրքական գրաքննութիւնը, միւս կողմէ հայ պահպանողական տարրը, ապա՝ ներկու սակցական եւ միջկուսակցական գուպարները կոփեցին զինք իւրապատուկ նկարագիրով: Ապա, տնտեսապէս իր ապրած անձուկ պայմանները եւ ծայրայեղօրէն թշուառ կեանքը դուրսն անգամ չխախտեցին իր գաղափարական մարդու սկզբունքները: Շատեր «տէրվիչ» անուանեցին զինք ի տես իր գրկանքներով լի կեանքին: Կուրսները եղան անպակաս եւ տատանումները անհատուած Արփիարեանի կեանքին մէջ: Նոյնպէս եղաւ սիրելի իր շատ մը գրչեղբայրներէն եւ մանաւանդ գրասէր հանրութեան, որոնք անոր ընդմէջէն կը տեսնէին արդարութեան անկոտորում մարտիկը: Հասաւ Հնչակեան կուսակցութեան բարձրագոյն դիրքերուն, ապա՝ Վերակազմեալ Հնչակեան, եւ որմէ նոյնպէս գժտը ւած ապրեցաւ իր սեփական դաւանանքով միշտ հաւատարիմ արդարութեան եւ բարեխիղճ ձայնին, որ թաքնուած էր իր մէջ անզսպելի կիրքով: Արփիարեանն էր ան՝ ինքնատիպ յեղափոխականը, որ ունեցաւ գլխաւորապէս չորս գրչանուններ՝ Հայկակ, Հրազդան, Սկեպտիկ եւ Հրապետ: Սինոպ քաղաքէն մինչեւ Գահիրէ՝ անցնելով Կ. Պոլսէն, Լոնտոնէն ու Վենետիկէն եւ այլ ուստաններէ ունեցաւ հզօր գէնք մը՝ իր

հատու գրիչը եւ հզօր կեցուածք մը՝ գաղափարականութիւնը: Կատաղօրէն հայրենասէր Արփիարեան, աւանդ, գոհն էր իր ստորին ազակիցներուն, խարանը հայոց ճակատին՝ որուն անդամները յաճախ այնքան կը յոխորտան իրենց եղբայրասպան արարքներով եւ մատաղը իր մտրակող գրիչ-թանաքին:

Արփիարեանի յախուռն կեանքը աչքի առաջ ունենալով, իր ժամանակակից, արձակագիր ու գրագէտ Գրիգոր Զօհրապ 1892-ին «Մասիս» թերթին մէջ կը նախագուշակէր. «Ինչպէս պիտի ըլլայ այս կեանքին ծերութիւնը. վերջ ի վերջոյ ո՞ւր պիտի կանգ առնէ զինքը տանող նաւակը:

Ինչ որ ամենէն հաւանականն է, այն է որ քանի մը տարի վերջը իր մեծ իմացականութիւնն ալ այն մշուշին մէջ մտնէ՝ ուրկէ իր գոյութիւնը երբեք դուրս չէ կրցած ելլել»:

Դարձեալ իր ժամանակակիցներէն, գրող եւ փիլիսոփայ-արձակագիր Ինտրա (Տիրան Չրաքեան) կը գրէ. «Իսկ թրքահայ վէպին գլուխ գործոցն է իր «Կարմիր ժամուց»ը: Վիպագրի յատկութիւններ ունի պատմական գրականութեան մէջ եւ պատմագրի յատկութիւններ վիպական երկերուն մէջ: Հատու, ժուժկալ, վառվառու է ոճը: Բայց մերթ անազնիւ: Ճշմարիտ բայց անմաքուր հանճար մըն է:

Խոռովիչ եւ անմոռանալի դէմք մը»:

Ինչպէս իր կենդանութեան, յետ-սպանութեան եւս Արփիարեան մնաց գրականագէտներու եւ ազգային գործիչներու ուշադրութեան կիզակէտին: Իր մասին լոյս տեսան հատորներ, մենագրութիւններ եւ անհամար յուշեր ու յօդուածներ, ինչպէս Սիմէն Յակոբեանի գործը՝ 1922,

Վիեննա, Գառնիկ Ստեփանեանի՝ 1955, Երեւան, Լ. Մուրատեանի՝ 1991, Երեւան: Սակայն, ամենածաւալունը՝ եգիպտահայ իրաւաբան, բանասէր Ստեփան Շահպաղի ուսումնասիրութիւնն է «Արփիար Արփիարեան»՝ 1988,

Պէտրոթ (622 էջ): Հոն կը կարդանք՝ «Արփիարեան պայքարող խմբագիրն էր: Չեմ խորհիր որ ան կարենար ապրիլ առանց պայքարի: Ճիշդ է նաեւ որ առանց պայքարի հրապարակագիրը՝ մտածուածէ, անհատականութիւնէ, անձնական գաղափարներէ գուրկ լրագրող մը կ'ըլլայ:

Արփիարեան՝ իր վերելքներն ու վայրէջքները կը պարտի իր պայքարներուն» (էջ 423): Նաեւ՝ «Արփիարեան՝ շատ կարդացող, հետաքրքիր միտք, սուր միտք, նոյնիսկ շատ սուր միտք, տէր ապահովաբար շտեմարան յիշողութեան մը, խորունկ նայուածքով, աշխատասէր, ինքնասրբաբութեան անընդհատ հակամէտ եւ շնորհիւր իր ինքնայատուկ ու ստոյգ տաղանդին, կրցաւ՝ ինքն իրեն, գեղեցկագէտի իր ուղին գտնել, իրեն համար գուցէ քիչ մը ուշ, բայց վերջապէս գտաւ այդ բնագաւառը» (էջ 499):

Իր աղմկայարույց սպանութիւնն ու անոր ծալքերը եւս մնացին հանրութեան ուշադրութեան կեդրոնին: Իր բարեկամներէն, գրագէտ եւ իրաւաբան Վահան Մալգեան կը գրէ. «Մեղսակիցները, որ, դարանակալ պահուած, կը հսկէին հայաստան եղեռնագործութեան, ծակէ ծակ փախան, ճարպիկօրէն: Իսկ բո՛ւն թելադրիչները եւ կազմակերպիչները օձիքին ձեռք չի տուին, մէջ մէկ անկիւն անյայտացան, Ամերիկայէն մինչեւ Գահիրէ, մինչեւ որ օրին մէկը նորէն բեմին վրայ երեւցան, ճակատաբաց...: Այս քստմնելի ոճիրը երկար ատեն զբաղեցուց եգիպտական մամուլը եւ հանրային կարծիքը պժգանքով դատա փետեց սոյն հրէշային եղբայրասպանութիւնը»:



ըր, որ, դարանակալ պահուած, կը հսկէին հայաստան եղեռնագործութեան, ծակէ ծակ փախան, ճարպիկօրէն: Իսկ բո՛ւն թելադրիչները եւ կազմակերպիչները օձիքին ձեռք չի տուին, մէջ մէկ անկիւն անյայտացան, Ամերիկայէն մինչեւ Գահիրէ, մինչեւ որ օրին մէկը նորէն բեմին վրայ երեւցան, ճակատաբաց...: Այս քստմնելի ոճիրը երկար ատեն զբաղեցուց եգիպտական մամուլը եւ հանրային կարծիքը պժգանքով դատա փետեց սոյն հրէշային եղբայրասպանութիւնը»:

Ապա՝ «Իբրեւ մարդ, իբրեւ ազգանուէր հայ, իբրեւ գրագէտ եւ գործիչ, Արփիարեան որքան բարձր այնքան ալ բարդ էր: Իր փոթորկալից կեանքը եւ իր արդիւնաշատ գործը ունեցան գուցէ թերութիւններ, բայց կարելի չէ չի հիանալ այդ անվեհեր հայուն վրայ, որ՝ իր կեանքին վերջին տարիներուն՝ երկու սուրի մէջ ապրեցաւ, լուրջ թէ գրել, քանզի լաւ գիտէր թէ իր գրիչը պիտի փութացնէր իր մահը» (Վ. Մալգեան, «Ճամբու Մայրը» (Ա. Հատոր, 1954, Քարիզ, էջ 274-280): Ի դէպ, Վ. Մալգեան եւ բանաստեղծ ու գործիչ Վահան Թէքէեան եղան օրուան դամբանախօսները՝ հէգ Արփիարեանի դազողին շուրջ:

Ոմանք թիւր կարծիքով կամ չարամտութեամբ Հնչակեան կուսակցութեան կը վերագրեն անոր սպանութիւնը:

Մինչդեռ Վերակազմեալներու ներքին անհատական հակամարտութեան գոհն էր ան, նենգ ու նախանձոտ տարրերու թիրախը: Ահա թէ ինչ կը գրէ Վահան Թէքէեան 21-28 Նոյեմբերին՝ Գահիրէի «Արեւ» օրաթերթին մէջ՝ պատասխանելով Սիմոն Վրացեանի ուշացած անհիմն գրադարտութեանց «Ամէն մարդ գիտէ՝ թէ «հին» հնչակեանները մաս չունին Արփիարի սպանութեան մէջ, ինչպէս գիտէ նաեւ՝ թէ Արփիար վեց տարիէ ի վեր հեռացած էր կուսակցական կեանքէ, երբ սպանուեցաւ իբրեւ հրապարակագիր, իր «Լուսաբեր»ի մէջ մղած հրապարակագրական պայքարին համար, վերակազմեալ-հնչակեանի մը կողմէ»:

(Վահան Թէքէեան «Երկու Դարիտները. Յիշուցան էջեր», 2017, Իսթանպուլ, էջ 354): Իր նահատակութեան երրորդ տարելիցին, մահարձան մը կը կանգնեցնեն իր բարեկամները անոր հողաթումբին վրայ, որ առ այսօր կայ, ուր կ'այցելեն Արփիարեանով հմայուած ազգայիններ: Աւելի ուշ՝ իր կողքին թաղուեցաւ իր բարեկամներէն, վիպասան եւ երգիծաբան Երուանդ Օտեան:



ներն են՝ Տէր Յուսիկ եւ Հայրապետ էֆենտի: Տէր Յուսիկ յեղափոխականն է, զինեալ պայքարին հաւատացող: Հայրապետը՝ պահպանողականն է, բարեկեցիկ, թրքական օրէնքներուն նախանձախնդիր. ան չի փափաքիր հարցեր յարուցել անկախական գաղափարներով. կը սիրէ համակերպիլ պետական ճշուններուն: Բայց, օր մը, երբ ինք եւս անիրաւօրէն կը տառապի թրքական բանտի ճաղերու տտին, կը հոգեփոխուի եւ կը սկսի հաւատալ պայքարին՝ որպէս միակ ելքը ազատութեան եւ մարդավայել կեանքի: Եւ այնուհետեւ, ամէն կիրակի, եկեղեցուց պնակին մէջ, իր լուծան կը նուիրէ ազատագրական պայքարին, կը դառնայ համակիր ընդդատակ եայ ֆետայական շարժումին: Լուծան կը կոչէ՝ «Կարմիր ժամուց»:

Չեւով մը՝ ինքնաբուխ տուրք հայ ռազմիկին, զինեալին, մարտական խումբերուն տրամադրուած:

Այս է Արփիարեանին պատգամը. ամէն հայ, մանաւանդ հարուստներ, պարտին նիւթապէս մասնակից դառնալ հայկական ռազմութիւն յաջողութեան, կայացման եւ հզօրացման:

Ազգային տուրքի պէս բան մը, սակայն մարտիկներուն ուղղուած: Իսկ այսօրուան հասկացողութեամբ՝ հայկական բանակին տրամադրուած: Երանի՛ այդ օրերէն իսկ որդեգրուած ըլլար այս դրութիւնը. եւ ինչու չէ՝ պարտադիր իւրաքանչիւր հայու համար: Արցախի վերջին պատերազմին պարտութեան գլխաւոր պատճառներէն մին հայոց բանակին ոչարդիականացած վիճակն էր: Թշնամին գերարդիական ուժերով կը յարձակէր, իսկ մեր բանակը ժամանակավրէպ զինատեսակներով: Պատճառը՝ նաեւ նիւթական հակայական միջոցներու չզոյլութիւնն էր: Բանակ պահելը ահուելի գուժարներու հետ է կապուած: Եւ արդեօք «Կարմիր ժամուց»ի դրութեան հաստատման պարագային հայկական բանակը աւելի զօրեղ պիտի չըլլար: Ինչո՞ւ «Կարմիր ժամուց»ի հասկացողութիւն չկրցանք ունենալ եւ չունինք ցայսօր: Սա պարտք է հանդէպ ուժեղ բանակի: «Կարմիր ժամուց» բոլոր հայութեան համար՝ Հայաստան եւ արտերկիր: «Կարմիր ժամուց»՝ յանուն հայրենիքի պաշտպանութեան, հայ գիտուորի սպառազինութեան, բանակին արդիականացման:

Արփիարեան կանխագագ եւ ընկալեց «Կարմիր ժամուց»ին կարեւորութիւնը: Ինք եւ իր պաշտելի ժողովուրդը տառապեցան անոր չզոյլութեան: Աւանդ, կը տառապինք այսօր եւս՝ քանզի կը զլանանք «Կարմիր ժամուց»ը:

Նահատակ Արփիարեան մինչ

Սարի Թաղի Հիւանդանոցը Եւ Ես (Իրական Պատմութիւն)

ՀԵՆՐԻԿ ԱՆԱՍԵԱՆ

- Ձեր փոքրիկը ծանր հիւանդ է Տիկին, նրա մօտ տարածուն Սկարլատինա է (հայերէն՝ Քուլթեշ), կեանքի համար վտանգաւոր հիւանդութիւն, երկարատեւ բուժում է անհրաժեշտ,- ինձ քննելուց յետոյ խտորոշում է բժիշկը՝ մայրիկիս շուարուն հայեացքի ներքոյ, -ինդրում եմ բժշկուհի, արէք ամէն ինչ, ինչ որ հարկաւոր է, ես ամէն ինչի պատրաստ եմ, միայն թէ երեխաս բուժուի,- թախանձազին խնդրում է մայրս:

Ես չորս ու կէս տարեկան էի, երբ յայտնուեցի այդ հիւանդանոցում՝ 1941-ի խոտաշունչ ձմռանը, Նոր Տարուայ նախօրեակին:

Բժշկուհին արդէն առել էր մօտալուտ շօշափելի նուիրատուութեան հոտը: Նրա առջեւ կանգնած էր 30-ամեայ գեղեցկուհի, վայելուչ հագուկապով, ներկայանալի մի կին: Հստակ երեւում էր որ նա տեղացի չէ:

- Ինչպէս ասացի, ձեր երեխան ծանր հիւանդ է,- փորձում է բացատրել իրավիճակը երիտասարդ, գեղադէմ բժշկուհին եւ շարունակում.- այս հիւանդութիւնը հետք է թողնում ենթակայի առողջութեան վրայ եւ այն կարող է երեւան գալ նրա կեանքի որեւէ հատուածում: Ամէն դէպքում դուք ձեզ հանգիստ պահէք եւ աշխատէք շատ չ?երեւալ երեխայի աչքին:

- Եթէ ուզեմ էլ յաճախակի գալ՝ չեմ կարող, որովհետեւ ես վաղ առաւօտից մինչեւ ուշ երեկոյ աշխատում եմ լինինգրադիների ճաշարանում: Ամուսնուս գալ շաբաթ բանակ են տանելու, իսկ աւագ որդիս էլ դասերից յետոյ հարեւանի տան է մնում:

... Ես այսօրուայ նման յիշում եմ այդ դաժան օրերը: Մի տասնամեակու փոքր երեխաներ, բոլորն էլ նոյն հիւանդութեամբ տառապող, մէկ սենեակի մէջ, ահաւոր վատ պայմաններում, քառասուն աստիճան տաքութեան մէջ տապալուծ էինք ստակալի, սահմուկեցուցիչ ցրտին: Իմ մահճակալն էլ անմիջապէս դրան ետեւում էր եւ ամէն անգամ նրա բացուել-փակուելուն՝ սոսկալի միջանցիկ քամի էր առաջանում:

Մի քանի օր անց, ուշ երեկոյեան մայրս եկաւ ինձ տեսութեան: Տեսնելով իր համար բաւականին խորթ պայմանները, մանաւանդ՝ իմ ծանր վիճակը, համբերութիւնից դուրս ելած սկսեց բղաւել:

- Էս ի՞նչ վիճակ է, էս ո՞ւր էք պառկեցրել երեխայիս..., դրան ետեւը, ահաւոր քամու տակ:

- Տիկին, հանգստացէ՛ք, սա միակ տեղն էր, որ կարողացանք մահճակալ տեղաւորել, չէ՞ք տեսնում թէ որքան հիւանդ երեխաներ ունենք,- փորձում է մայրիկիս հանգստացնել բուժքոյրը:

- Չգիտեմ, ինչ ուզում էք արէք, երեխայիս տեղափոխէ՛ք ուրիշ սենեակ:

- Այս ժամին միայն երկու բուժքոյր ենք աշխատում, առաւօտեան կը փոչընձեք ինչ որ բան անել:

- Էս ի՞նչ աղեալ (ուռսերէն է՝ ծածկոց) էք դրել, ասում է մայրս,- սա պարզ, բարակ ծածկոց է, որ միայն ամռանը կարելի է գործածել..., երեխաս տաքութեան մէջ վառում է, այս ի՞նչ վիճակ է...,

... Մոն Դիօ (ֆրանսերէն է՝ Աստուած իմ), այս ի՞նչ բան է, ինչո՞ւ է այսպէս ուռած տղայիս աջ ոտքը..., տակն էլ չէք փոխել:

... Պարզում է, որ մի քանի օր, ոչ ոք չի հետաքրքրուել ինձնով, եւ ես, ահամայ անկողնում եմ միգել, որի պատճառով էլ, աղից եւ խոնաւութիւնից աջ ոտքս վարակուել է վտանգաւոր մանրէով ու ամբողջ վերին մասը թարախակալուել է:

Մայրիկիս զայրոյթը հասնում է գագաթնակէտին: Այդ ուշ ժամին ոչ մի բժիշկ չկայ հիւանդանոցում, ո՞ւմ բողոքել..., ի՞նչ անել:

- Ես տանում եմ երեխայիս,- ամբողջովին յուսահատ, ողորարցունքների (նոր բառ է,- նշանակում է արցունքով ողորուած,- ՀԵՆ. Ա.) միջոց բարձրաճանցում է մայրս:

- Ի՞նչ էք ասում Տիկին,- սարսափած ասում է բուժքոյրը,- ձեր երեխան շատ ծանր հիւանդ է, տնային պայմաններում դուք չէք կարող նրան բուժել, Սկարլատինն էլ մի կողմ, հիմա նրա ոտքն է ահաւոր այտուցուած, , եւ, եթէ շտապ միջամտութիւն չլինի՝ կարող է Գանգրենա (փտախտ) առաջանալ:

- Եւ դո՞ւք էք ասում դա,- արհամարական նկատելի շեշտ դնելով իր խօսքի մէջ՝ շարունակում է մայրս,-բա դուք ո՞ւր էիք մինչեւ հիմա, քանի օր է երեխայի տակը չէք նայել, սաւանը չէք փոխել, էս ի՞նչ անտէր վիճակ է..., չէ՞, ո՞չ, ես չեմ կարող այլեւս երեխայիս վստահել ձեզ: Ես հիմա իսկ տանում եմ երեխայիս...:

Ոչ, Տիկին, դուք չէք կարող տանել երեխային մինչեւ գլխաւոր բժիշկը թոյլ չտայ, իսկ նա կը լինի միայն առաւօտեան, ստիպուած էք այս գիշեր սպասել:

ձար չկար, մայրս ստիպուած էր այդ գիշեր մնալ հիւանդանոցում եւ եղած հնարաւորութիւններով փոքր-ինչ թեթեւացնել իմ վիճակը:

Առաւօտեան, գլխաւոր բժիշկն ու իր արբանեակները մտան հիւանդասենեակ.

- Տիկին,- դիմեց բժիշկը մայրիկիս,- ինձ ասացին, որ դուք երէկ գիշեր ձեզ շատ վատ էք պահել, աղմկել էք, անտեղի վիրաւորել էք մարդկանց: Չէ՞ք տեսնում մեր վիճակը:

Երկիրը պատերազմի մէջ է, դեղամիջոցները՝ անբաւարար, աշխատողները քիչ, մենք էլ ենք մեր գլուխները կորցրել:

- Ներեցէ՛ք պարոն բժիշկ...

- Ես պարոն չեմ տիկին, «պարոն»ը ձեզ մօտ էր, Ֆրանսիայում...

- Լա՛ւ, ընկեր բժիշկ,- նկատելի քմծիծաղով ասաց մայրս,- արդե՞օք ձեր աշխատողները այդքան զբաղ էին, որ չեն կարողացել երեք-չորս օր փոխել տղայիս անկողնու սպիտակեղէնը եւ միզաման տրամադրել, որի բացակայութեան պատճառով փոքրիկս մի քանի օր անընդմէջ, տակն է աղտոտել, որի արդիւնքում էլ ահա, խնդրեմ, նայեցէ՛ք տղայիս աջ ոտքը, եւ ձեր բուժքոյրն էլ ասում է, որ Գանգրենայի վտանգ կայ:

- Ինչո՞ւ է այդպիսի հիմար բան ասել...

Բժիշկն արագօրէն դէն նետեց իմ անկողնու ծածկոցը եւ տեսնելով



իմ ոտքը՝ ապշահար բարձրաճանցնեց.

- Այս ի՞նչ վիճակ է, այսպիսի բան չկար, երբ երեխային բերեցին...

- Այո՛, չկար, հիմա տեսնո՞ւմ էք բժիշկ, որ ձեր աշխատողների անհոգութեան, անսիրտ վերաբերմունքի պատճառով ինչ վիճակի մէջ է յայտնուել իմ զաւակը,- գրեթէ հեկեկալով ասաց մայրս:

- Ոչ ի՞նչ տիկին..., մի յուզուէ՛ք, մենք ամէն ինչ կ'անենք երեխային բուժելու համար,- կարծես քիչ առաջուայ խոժոռադէմ բժիշկը չէր:

- Ես ձեզ չեմ հաւատում բժիշկ, այստեղ կատարեալ անտէրութիւն է, այսքան շատ երեխաներ կան այս սենեակում, օդն էլ խեղդուցիչ, հաւանաբար դեղերն էլ անբաւարար: Ես չեմ կարող երեխայիս ձեզ վստահել: Էլ չեմ խօսում չտաքացուող սենեակի մասին: Դրսում աւելի տաք է, քան այստեղ:

- Տիկին, չմոռանա՛ք, որ մենք պատերազմի մէջ ենք...

- Բայց պատերազմն ի՞նչ կապ ունի այստեղի պայմանների, անմխիթար վիճակի հետ: Միթէ՞ չի երեւում, որ պատերազմից առաջ էլ է նոյն վիճակը եղել..., ո՞չ, ո՞չ, ես չեմ կարող երեխայիս այստեղ թողնել:

- Այդ ի՞նչ էք ասում տիկին, ձեր երեխան ծանր հիւանդ է, տնային պայմաններում դուք չէք կարող նրան բուժել, դուք դա հասկանո՞ւմ էք,- այս անգամ արդէն զայրացած, բառերն իրար ետեից շարելով ասաց բժիշկը:

- Ո՛չ, դարձեալ ոչ, տանում եմ բալիկիս,- յամառում էր մայրս:

- Դուք մոռանում էք, որ բացի Սկարլատինից, Գանգրենա է սպառնում ձեր որդուն:

- Ի՞նչ, ի՞նչ Գանգրենա..., Աստուած իմ, Մոն Դիօ, միեւնոյնն է, ես տանում եմ իմ երեխային:

- Դուք ձեր յամառութեամբ կարող էք կորցնել ձեր երեխային, կրկնում եմ, չափազանց լուրջ է նրա վիճակը, ուշքի եկէ՛ք տիկին,- միանգամայն լուրջ եղրափակեց բժիշկը իր խօսքը:

- Թող լուրջ լինի, միեւնոյնն է, ես տուն եմ տանում իմ տղային: Եթէ պիտի մեռնի, թող իմ տանը մեռնի:

- Այդ դէպքում պարտաւորուած էք ստորագրութիւն տալ, որ ձեր կամքով էք երեխային տուն տանում:

- Խնդրեմ, ես պատրաստ եմ...: Մէկ ժամ չ'անցած ես արդէն մեր տանն էի: Մայրիկիս ընկերուհի դարձած Շրջամկտի նախագահ Տիկին Վարսիկն ամէն ինչ կարգադրել էր ինձ հիւանդանոցից

տուն տեղափոխելու համար:

Խստաշունչ ձմռուայ պայմանները նկատի առնելով, ծնողներս անհրաժեշտ միջոցներ էին ձեռնարկել տունը տաք պահելու համար: Նրանք վաճառել էին իրենց անհրաժեշտ իրերն ու զարդեղէնը եւ գնել էին բաւական սուղ արժող Անտաքիտ կոշուկ ածուխ:

Անձնական բուժման համար մայրս մի փորձուած բժշկուհու վարձեց, որը քսանչորս ժամ ինձ հետ էր անցկացնում եւ բոլոր հնարաւոր միջոցներով եւ դեղորայքով աշխատում էր առաջին հերթին բուժել իրօք փտախտի եզրին հասած աջ ոտքս, որի վերին մասի խոռոչից անդադրում թարախ էր հոսում: Հայրս արդէն չկար, ռազմաճակատ էր մեկնել:

Օրէ՛օր մոռայլ տեսք էր ստանում ինձ բուժող բժշկուհին, ու, մի օր էլ, կարծելով թէ ես քնած եմ, գիշերուայ ուշ ժամին, երբ մայրիկս նոր էր վերադարձել աշխատանքից, կամացուկ նրան ասաց.

- Հենրիկի ոտքի վիճակը գնալով վատանում է, վախենում եմ..., ախր ո՞նց ասեմ, ի՞նչ ասեմ, լեզուս չի պտտում ..., վախենում եմ, որ ստիպուած լինենք ոտքը կտրել, այն էլ՝ ամէնավերին մասից, կարծում եմ Գանգրենայի հոտ է գալիս:

- Ի՞նչ, էդ ի՞նչ ես ասում բժշկուհի..., ոչ, ո՞չ, երբեք, երբեք, անկարելի է, ես չեմ հաւատում: Ես չեմ նահանջելու: Ես թոյլ չեմ տայ, որ իմ երեխայի ոտքը կտրեն: Ասա ինդեմ ո՞վ է այս գործի լաւագոյն մասնագէտը Երեւանում, ի՞նչպէս է նրա անունը:

Դարձեալ օգնութեան է հասնում տիկին Վարսիկը: Օրհնուի նրա գերեզմանը:

Յաջող առաւօտ, գրեթէ լուսաբացին, տիկին Վարսիկի հետ միասին մեր յարկի տակ յայտնուեցին յաղթանակած բժիշկ Եղորտայեանն ու բարետես մի կին, որը, հաւանաբար նրա օգնականն էր:

Դժուար չէր հասկանալ, որ նրանց նախօրոք տեղեակ էին պահել իմ իրական վիճակի մասին, որովհետեւ, առանց աւելորդ հարցուփորձի, բժիշկն անցաւ իր գործին: Դէն նետեց իմ վրայի տաք վերմակը եւ չթաքցնելով զայրոյթը, դիմեց Վարսիկին.

- Ո՞վ է եղել երեխայի բժիշկը, ինդրեմ ասէ՛ք նրա անունը տիկին Վարսիկ:

- Չգիտեմ բժիշկ, երեխայի մայրը՝ Վէրժինէն կարող է պատասխանել ձեր հարցին:

- Լաւ, լա՛ւ, պէտք է, յետոյ կը խօսենք ադ մասին,- ասաց բժիշկը ու շրջուեց իր հետ եկած կնոջ կողմը եւ փոքր ինչ մօտենալով նրան՝ ինչ-որ բան փսփսաց

80-Ամեակ (1938-1940)

Անթիլիասի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Ա. Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տաճարը Եւ Նահատակաց Մատուռը

Պետրոս Արքեպիսկոպոս Սարաճեանի փոխանորդութեան չորս տարիները եղան մեծապէս արդիւնալից, քանի որ իր օրով տեղի ունեցան հանգանակութիւններ եւ կառուցուեցան Անթիլիասի հիմնական շէնքերը՝ Մայր Տաճարը, Նահատակաց Մատուռը, Վեհարանը եւ Դպրեվանքը:

ՂՈԿՏ. ՉՈՒԷՆ Ա. ՔՅՆՅ. ԱՐՁՈՒՄԱՆԵԱՆ

գնահատեցին որպէս «Լիբանանի լաւագոյն կրօնական կոթողներէն մին, հայ անունին պատիւ բերող»:

Յիշարժան Տարեդարձը

Անցեալ տարին փակեցինք եւ սակայն չենք մոռնար այն հերոսական գործը գոր Պետրոս Արքեպիսկոպոս Սարաճեան եւ հոյլ մը նուիրեալներ կատարեցին, որոնք ուղիղ 80 տարիներ առաջ, յետ-եղեռնեան սփիւռքը պայծառացուցին իրենց տեսիլքներու եւ համոզումներու հոյակապ իրագործումով: Այդ երկու տարիներու ընթացքին 1938-1940, անհաւատալի քաջութեամբ եւ եռանդով, Անթիլիասի առժամեայ կալուածը գնուեցաւ ու հիմնական շէնքերը կառուցուեցան ի պատիւ Սարաճեան Արքեպիսկոպոսի եւ բարեկիշատակ բարերարներուն:

Վախճանած էին Աթուռի նորահաստատ հիմնադիր կաթողիկոսները Տ.Տ. Բաբգէն Աթուռակից Կիլիկիայէն ու Տ.Տ. Սահակ Բ Խապայեան 1936 եւ 1939 թուականներուն, երբ կաթողիկոսարանի դեկը յանձնուեցաւ արթնամիտ եւ բացառապէս գործունեայ Հաճնոյ նախկին Առաջնորդին Պետրոս Արքեպիսկոպոսին որ արդէն կաթողիկոսական Ընդհանուր Փոխանորդ կարգուած էր Տ.Տ. Սահակ Խապայեան կաթողիկոսին: Վարելով հանդերձ կաթողիկոսութեան ներքին եւ արտաքին ընթացիկ գործերը, Սարաճեան իր նախագահութեամբ դասաւորեց վերակերտումի անմիջական աշխատանքները թեմակալ եպիսկոպոսներու եւ ակնառու երեսփոխաններու համաժողովներով, առաջին գործը ըլլալով օրինական տէրը դառնալ տրամադրուած կալուածին:

Կալուածն ու Մայր Տաճարը

Սարաճեան Արքեպիսկոպոսի առաջին եւ հիմնական գործը եղաւ գնել Անթիլիասի կալուածը որ տակաւին տրամադրուած էր որոշ սահմանափակումներով: Իր հայրական կոչին շատեր պատասխանեցին, յատկապէս Գահիրէէն Սիւմոն եւ Մաթիլտ Գալզգեան ամուսինները, որոնք նուիրատուութեամբ Անթիլիասի ներկայ կալուածը կարելի եղաւ գնել: Յաւելեալ Ժողովրդական գումար մը եւս հանգանակուելով կառուցուեցան կաթողիկոսարանի վեհարանի եւ Դպրեվանքի առաջին շէնքերը:

Ս. Աթուռին ամենէն կենսական հաստատութիւնը Մայր Տաճարին կառուցումն էր անշուշտ, եւ ի պատիւ Տ.Տ. Պետրոս Սարաճեան կաթողիկոսի պէտք է արձանագրել որ գայն յաջողութեամբ եւ արագընթաց ի գլուխ հանեց, կառուցումը աւարտեց եւ օծումը կատարեց 1940 թուականին, ու նոյն տարին ընտրուեցաւ կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիոյ, յաջորդելով Տ.Տ. Սահակ Բ Խապայեան կաթողիկոսին: Հոյակապ տաճարը, որուն ճարտարապետն էր Մարտիրոս Ալուանեան, օծուեցաւ յանուն Սուրբ Գրիգոր Լուսաւորչի, ընդարձակ, գեղակերտ, բարձրազմբէթ իր զոյգ գանգակատուններով, որ այն ատեն

Նահատակաց Մատուռը

1939-ի սկիզբները կաթողիկոսարանի Մայր Տաճարի կողքին կառուցուեցաւ ապրիլեան հայ նահատակներու մատուռը՝ ճարտարապետութեամբ կիպրահայ Վահրամ Քիւրքճեանի: Յուշարձանը խաչաձեւ քառակուսի մատուռ մըն է երեք երկաթեայ դռներով եւ խորանով ուր պատարագ կը մատուցուի տարին անգամ մը: Խորանին ներքեւ եւ խաչաձեւ պատերուն ներսի չորս անկիւնները զետեղուած են անիւնները հայ նահատակներուն որոնք զոհ գացին 1915-ի ցեղասպանութեան, մասամբ ապակիներու ետեւ, հաւաքուած Տէր Զօրէն եւ այլ աքսորավայրերէ: Ոսկերտիքի հաւաքման գործը կատարած է հաճընցի Յարութիւն Յովակիմեան, խնդրանաքովը Սարաճեան Արքեպիսկոպոսին: Մատուռին հիմնարկէքը կատարուած է 1938 դեկտեմբերին Ս Յակոբայ Մծբնայ Հայրապետի տօնին, նախագահութեամբ Սրբազան Հօր որ իր քարոզին մէջ ըսած է, «Այս մատրան մէջ ափոփուելիք մնացորդներուն մէջ կան մեզմէ բոլորին ալ կամ ծնողաց, եղբօր, քրոջ, կամ ազգականներու նշխարները: Անոնք արիւն թափեցին յանուն մեր ազգութեան, յանուն մեր կրօնքին»: Նշխարները նոյն տարուոյ ապրիլ 23-ին գետեղուեցան հանդիսաւոր արարողութեամբ:

Վեհարանն ու Դպրեվանքը

Երկարականի ընդարձակ շէնք մըն է կաթողիկոսարանի վեհարանը, ուղղակի հանդիպակաց Մայր Տաճարին, որոնց մուտքերը դէմ դիմաց են արեւելք-արեւմուտք ուղղութեամբ: Վեհարանը կ'ընդգրկէ ընդարձակ դահլիճ մը, վերանորոգուած եւ բարեզարդուած վերջին տասնամեակներուն, երբ վանքի ընդհանուր համալիրը արտաքին սալաշատակումով եւ ներքին յաւելեալ սրահներով պանծալի վեհարանի վերածած են:

1938 տարուոյ ընթացքին կառուցուած է նաեւ Դպրեվանքի առաջին շէնքը, կաթողիկոսարանի հիւսիսային անկիւնը, քարաշէն եւ երեքյարկանի, ուղղանկիւն-քառանկիւն յատակագիծով, որուն առաջին յարկը բաժնուած է սերտարանի եւ գրադարանի, իսկ երկրորդ յարկը դասարաններու, տեսչարանի եւ ուսուցչարանի: Երրորդ յարկը ամբողջութեամբ յատկացուած էր ուսանողներու խմբական ննջարանի:

Մեր ուսանողական տարիներուն յիսունական թուականներուն ականատես եղանք այս անգամ Դպրեվանքի երկրորդ շէնքի հիմնադրութեան եւ կառուցումին՝ ճարտարապետութեամբ Հայկաշէն Ուզունեանի: Շէնքը ունի յաւելեալ դասարաններ արդիական գրադարան մը եւ թանգարան մը: Դպրեվանքի զոյգ շէնքերը միացնող անցման կամուրջը կը դիւրացնէր առօրեայ գործընթացը, հաւասար



րապէս դասաւորելով գրադարանային եւ լսարանային աշխատանքները: Մեր ձեռքով քար մը զետեղեցինք նորաշէն դպրեվանքի հիմերուն մէջ որպէս մնացուցիչ շատակ շէնքի կառուցման:

Վերանորոգ Մխիթարանք

Եթէ Պետրոս կաթողիկոս Սարաճեան միայն չորս ամիս գահակալեց, որպէս շինարար Հայրապետ մնաց Կիլիկեան նորահաստատ կաթողիկոսարանի պատմութեան մէջ: Իսկ Երանաշնորհ Սահակ Բ Խապայեան կաթողիկոս, բոլորին հայրն ու հայրապետը տեսնելէ ետք ահռելի տառապանքն ու աքսորը, ահն ու սարսափը

Կիլիկիոյ հայութեան, արեւմտեան Եւրոպայի ցուցաբերած հիասթափութիւնը, Օսմանցի թուրքերու անպատեհ միջամտութիւնները, իր աչքերը փակելէ առաջ մեծագոյն մխիթարութեամբ կը տեսնէր վտարանդի Աթուռին Անթիլիասի կայքին վերընձիւղումը եւ կաթողիկոսարանին ազգապատկան ու անպարտ գոյատեւումը:

Որպէս Դպրեվանքի միջին սերունդի ներկայացուցիչներէն մին, տողերս գրողը պարտք համարեց վերապրեցնել յետ-եղեռնեան սոյն հերոսապատում վերագործելը որ առանց չափազանցութեան լուսատու փարոս մը հանդիսացաւ սփիւռի հայութեան:

ՄԱՍԻՍ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՏՐՕՆ

Yes, I wish to subscribe to Massis Weekly
 Enclosed a check for (one year)
 * \$50,00 * \$100,00 (first class) for USA
 \$ 125,00 (Air Mail) for Canada.
 \$ 250,00 (Air Mail) Overseas.

Name: -----

Address: -----

City: ----- State: ----- Zip Code: -----

Country: -----

Tel: ----- Email: -----

Թուրքիա Այցելութիւն

Հայոց լեզու, դու մեր անկողնայտելի գանձը եղար, Մեր անընկճելի հայրենիքը:

Մեր ժողովուրդը կորցրեց գահ եւ թագ, զօրք եւ իշխանութիւն, ակեր եղան

Մեր բերդերն ու քաղաքները, ակեր եղան մեր ինչքն ու գոյքը, Բայց դու մնացիր միայն կանգուն, մնացիր յաղթական:

ՅԱՅՈՒՄԻ ԻՍԿԱՆՈՒՄԻ ՄԵՐ ԺՈՂՈՎՈՐԴ, Բայց դու ծիրանով ծածկեցիր Նրա հոգին, թշնամին ջախջախեց նրա սրունքը, դու

Թելեր տուիր նրան՝ ժողովուրդին:

Աւետիք Իսահակեան

ՊՕՂՈՍ ԱՐՄԵՆԱԿ ԱԳԻՍԵԱՆ

1968 թուականին, Թուրքիա այցելած խորհրդային Հայաստանի մի խումբ մտաւորականների Յակոբ Դիլաչար Մարթայեանի հետ հանդիպումներից յետոյ, խումբը այցելել է Թուրքիայի այլ լիշար-ժան վայրեր: Խմբի անդամ Մ. Աղայեան հետաքրքիր տեղեկութիւններ հաղորդել իրենց ժամանակի Թուրքիա բնակած հայերի եւ այլ տարբեր հարցերի մասին: Պատմութիւն է, նրա բոլոր ժամանակների տուեալները հետաքրքիր ու ուսանելի են:

1968 թուականի Սեպտեմբերի 9-ին խումբը ժամանել Անկարա, գնացել Սովետական Միութեան դեսպանատուն: Քաղաքում շինարարական բուռն աշխատանքներ եղել, Աթաթուրքի անունը կրող պողոտայում կառուցուել Եւրոպական տեսակի բարձր շէնքեր, մնացած փողոցների մի մասը նեղ եղել, նրանց մայթերին էլ առեւտրական կէտեր: Նկատել էին, որ Անկարայում ու ամբողջ երկրում Աթաթուրքի պաշտամունքը զգալի եղել, քաղաքում ամէնուր նրա արձանները ու նկարները: Նրա կատարած տնտեսական, քաղաքական, կենցաղի, մշակույթի բարեփոխումները նպաստել էին երկրի զարգացումը նոր ուղու վրայ դնելու: Աթաթուրքի պաշտամունքը, ինչպէս խորհրդային Միութիւնում անհատի պաշտամունքը, կաշկանդել էր երկրի առաջընթացը: Քեմալ Աթաթուրք: Աթաթուրք ազգանունը, Յակոբ Դիլաչար Մարթայեանի առաջարկած Սոստամֆա Քեմալի ազգանունն էր, որը նա սիրով ընդունած եղել:

Օտար կայսերապաշտական երկրների թելադրանքը արգելակել էր երկրի արդիւնաբերական զարգացումը: Խումբի Անկարա գտնուելու ատէն այնտեղ այցելել էր Գերմանիայի կանցլերը, աշխատանքի հրահրել 500 հազար բանուորները: Այդ ժամանակից էր սկսել Թուրք բանուորների գաղթը Գերմանիա:

Մ. Աղայեան գրել, թուրքերի դեկավար վերնախավը ազգայնամոլ ու պանթուրքական մոլեռանդ գաղափարների քարոզիչներ էին: Նրանք, խորհրդային իշխանութեան նկատմամբ հակաքարոզչութիւն կատարում: Մ. Աղայեանը, խումբի մինչ այլ վայր այցելութիւն կատարելը, այցելել մի խանութ, գրուցել սեփականատիրոջ հետ, նա ասել էր, որ խորհրդային երկրում ոչնչացնում են մուսուլման ազգերը եւ որ իրենք կազատագրէին նրանց, կը միաւորուէին բալկաններից մինչեւ Միջին Ասիա: Երկրում ծաւալուած Պանթուրքական ազգամուլութեան քարոզ, այն աննպաստ ազդեցութիւն գործել երկրի առաջընթացին, որին նպաստել էին մամուլը ու այլ հրապարակումները:

Պատմաբանների հետ իրենց հանդիպումների ատեն, նրանք յայտնել էին, որ իրենց պատմու-

թիւնը չորս հազար տարիների խորքից գալիս: Անկարային մօտիկ Խեթական Խաթունա քաղաքի ակերակներ այցելութեան ատէն, զբօսաշրջիկների խումբի դեկավարը իմանալով որ ինքը պատմաբան է, նրան խնդրել էին յայտնել իր կարծիքը: Մատուրեան ասել, որ երկրի պատմաբանները նենգափոխում են պատմութիւնը, օսմանեան ցեղերի միջին դարերում հանդէս գալը ու Բրուսայում իրենց պետականութեան ստեղծումը:

Այցելել էին Ստամբուլ: Հանդիպել էին Հայ գործիչների հետ, եղել հայկական դպրոցներում, մամուլի խմբագրութիւններում: Մ. Աղայեանի յուշերի գրքակի խմբագիր Գ. Մատոյեանը իր հետ բերած մշակույթի նախարարութեան նուէրը՝ արծաթեայ տախտակի վրայ դրուագուած Ստամբուլահայ նշանաւոր մշակույթային գործիչ, գրող, բանասէր՝ Թորոս Ազատեանի դիմանկարը յանձնէր էր նրա այրի-

Հոռոմ, Բիւզանդիոն, Ստամբուլ: Յունական դիցաբանութեան համաձայն, Վրաստան-Կախեթում գտնուող «Ոսկեգեղ» աշխարհին տիրանալու համար նաւարկած Յոնք արգանաւորներին խմբից Բիւզանդիոն երկրի վերադարձին Սեւ ծովը ու եզգեական ծովերը իրար միացնող Պոսֆորի նեղուցի ափերին հիմնադրել բնակավայր: Նրան իր անունով Բիւզանդիոն անուանել: Յետագային, նրա թրքացած անունով Ստամբուլ կոչուել: Իր շրջակայ բնութեամբ աշխարհի գեղեցիկ ու հետաքրքիր քաղաքներից մէկն է: Հոռոմ, Հոռոմեական արեւմտեան կայսրութեան մայրաքաղաք, ակադեմիկն էր նրա հիմնադրումը: Երկուորեակներ Ռոմուլոսին ու Ռեմոսին դիւել էր Գայլը: Ռոմուլոս սպաննել էր եղբայր Ռեմոսին եւ 753 թուականին իր անունով հիմնադրել Հոռոմ քաղաքը: Աշխարհ չի յիշատակում Արմինա-Հայաստանի թագաւոր՝ Արգիշտի Արամայիսը մ.թ.ա. 782 թուականին Մեծամորում կառուցել Արգիշտիի ինչ-Արմաւիր քաղաքը: Աշխարհ չի յիշում թոյլ երկրներին, ակադեմիկապետութիւններին, Հայաստան, առանց ներքին շորերի մնա՛, արարի՛ր նոր գէնք, զօրացի՛ր, եղիր եղբայր քու ցեղի մարդկանց հետ, «Ինչ կա սիրու քան գանցկալի եղբայր անուն»: Փորձում են յօշոտել քեզ: Հոռոմի կեդրոնում հիմնադրուել պապական քաղաք Վատիկանը, մեծ հեղինակութիւն վայելում՝ որպէս Պետրոս ու Պօղոս առաքեալների նահատակութեան վայր: Հոռոմ, միջնադարի վերածնունդի քաղաք, նշանաւոր իր ճարտարապետական կոթողներով ու արուեստի ստեղծագործութիւններով:

Կոնստանդին կայսր: Ներքին խռովութիւններից յաղթանակած Կոնստանդին կայսրը, 330 թուականին, իր հին փառքը կորցրած կայսրութեան մայրաքաղաք Հոռոմը փոխադրել Պոսֆորի ափերի Բիւզանդիոն քաղաք՝ Հոռոմի արե-

ւելեան կայսրութիւն: 359 թուականին իր անունով կոչել քաղաքը՝ Կոստանդնուպոլիս: Այն կառուցուել էր եօթը բուրներ զրայ, ունեցել եօթը դարպասներ: 476 թուականին, արեւմտեան հռոմէական կայսրութեան մայրաքաղաք Հոռոմը, Եւրոպայի հիւսիսի «Կոթ»-երի արշաւանքներից յետոյ դադարել մայրաքաղաք լինել, ակարտուել պատմութեան հին դարերի ժամանակահատուածը, սկիզբը միջնադարի, իսկ 1453 թուականին թուրքերի կողմից Կոստանդնուպոլիսը նուաճուելուց յետոյ միջնադարի վերջը, հիմա էլ քայլում ենք «Նոր Դարի» ճամբաներով: Այն

Ստամբուլում ծանօթացել էին հայերի կեանքին: Պայքար շաքաթաթերթի խմբագրի հետ այցելել Շիշլիի հայկական գերեզմանատուն: Ժամանակին Կ.Պոլսոյ թաղամասերում եղել էին հայկական եկեղեցիներ ու գերեզմանատներ: Շիշլի գերեզմանատունը խնամքով է պահուում, նմանուած ծաղկանոց թանգարանի, հանդիպել այցուցների, որոնք գալիս էին խնամում իրենց ննջեցեալների շիրիմները ու գերեզմանաշարժանները:

Ստամբուլում գործում էր 35 հայկական եկեղեցիներ, որտեղ համախմբուած էին համայնքների անդամները: Այնտեղ արգելուած էին



բարով չի եկել, չէ՛, պարտուել է Հայը, այն էլ ինչ պարտութիւն, փլել էր բանակը, փճացել ուղղական սպառազինութիւնը, զոհուել են հազարաւոր պէիս ու անմորուս տղաներ, չեղա՛ւ, ժողովուրդի անմիաբանութիւն, վե՛րջը, Աստուած փրկի, չէ՛, միաւորուեն՝ Կարմիր, Կապուտ Նարնջագոյն դրօշը ծածանած, նոր գէնքերով կուռի դուրս գալ...: Նոր դարերի մարդիկ ասաւոր պատերազմներ սանձագերծել, միլիոններով իրար սպաննել, սպաննեցին հին դարերից եկած բնիկ Արմին-Հայ ցեղը, տիրեցին նրա հողին, լեռներին, Նոյի տապանով Արարատին ու նրանց ինչքին: 1453 թուականին Կոստանդնուպոլիս նուաճելու ատէն Մէհմետ II Ֆաթիհ սուլթանը իր զօրքին ասել՝ քաղաքը երկու օր ձեզ, պատերը ինձ, ձին հեծած մտել տաճար, այն վերածել մզկիթի: Այս Սոֆիա տաճար, կառուցուած 532-537 թուերին: Նրա գմբեթը երկրաշարժից երկու անգամ փլուել էր: Բազրատունեաց պատանի Գազիկ թագաւորի Կոստանդնուպոլիս այցելելու ատեն, նրա շքախմբում Տրդատ ճարտարապետն էր, քառասուն մեթր անսոյն թուիչքով նոր գմբեթ կառուցել, մինչեւ հիմա կանգուն է, նրա պատերին գարնուած ուրիշ կրօնի աղօթքներ: Հանրապետական Թուրքիայի ժամանակ Պալեստինների կառուցած Այասոֆիա տաճարը, Դոլմա-բազէ, Թոք-Գաբու, Ելլըզ-Բոշք պալատները վերածուել թանգարանի: Այս Սոֆիան հիմա նորէն իսլամի աղօթատեղի է: Քաղաքի պաշտպանական մարտերում վերջին կայսրի հետ մարտնչել նաեւ Հայկական զօրախումբը, լուռ էր արեւմուտքի քրիստոնէայ աշխարհը: Միջին դարերի կոթողներից, Հայ ճարտարապետ Սինանի կառուցած մզկիթներից ու այլ շինութիւններից ոչ մէկը չի նմանուել Այս Սոֆիայի տաճարի վեհութեանը: Մագուսով հայ ճարտարապետ Սինան, նրան թրքական ծագում էին վերագրել, մասունքները ստուգող մարդաբաններ Սինանի գանկը թրքական ծագումի պատկանելը չէին հաստատել... պահ տրուած գնտակորը՝ անհետացել...:

կուսակցութիւնները գործունէութիւնը: Հայկական գաղութների նման Թուրքիայում արտագաղթ եղել կանատա, Ամերիկայի Միացեալ Նահանգներ ու այլուր: Գաղութի որոշ ընտանիքներ խորհրդային հիւպատոսարանին խնդրել՝ օգնել իրենց Հայաստան ներգաղթելու:

Ստամբուլ, հայերի հոգեւոր ու քաղաքական մշակույթի եւ ակադեմիկապետականների պաշտօնների կայացուցիչներ, ինչպէս՝ Պեշիկշեհան, ու Դուրեան, Մեծարենց ու Զարիֆեան, Սիամանթո ու Վարուժան, Պարոնեան, Գրիգոր ու Երուանդ Օտեաններ, Զօհրապ ու Սեւակ, Արփիարեան-Բաշայեան-Զարդարեան, Ինտրա-Չօպանեան, Թէքէեան ու Չուխաճեան, Աղամեան-Փափագեան-Սիրանուշ-Հրաչեա Ներսիսեան, ինչքան թուեմ, այն գիշեր՝ աստղերի նման Ստամբուլը լուսաւորող 240 մարդկանց՝ Հայտար Փաշա երկաթուղային կայարանից տարել, իրենք էլ չգիտէին ուր: Նրանց հետ էլ աստուածային կոմիտաս վարդապետը, որը սուլթանի դուստրին երաժշտութիւն ուսուցանել: 1474, 1478 թուերին պալատական բժիշկ Ամիրդովլաթը գրել էր «Գիրք Ռամկօրէն» եւ «Անգիտակից Անգիտակից Անպէտ» բժշկական գրքերը, որ բուժուէին պալատի մարդիկ:

1461 թուականին, Ստամբուլում հաստատուել Հայոց պատրիարքարանը, այն էլ միաժամանակ թեմին է պատկանում: Այն կազմակերպել ու վերականգնել եկեղեցիները, նրանց կից համայնքները, գործարկել պատրիարքարանին կից Ս. Փրկիչ ազգային հիւանդանոցը: Կառուցուել էին Գարակոյզեան ու Գալֆային որբանոցները, Պատրիարք Ս. Խաչ դպրեմանքը, որտեղ սովորում գաւառներից հաւաքագրուած ազգի մանուկներ, ստացել հայերի կրթութիւն: Ստամբուլում գործել 33 դպրոցներ, որոնցից 5-ը 11 դասարանով լիցէյներ, նրանցից յայտնի էին տղաների Կեդրոնական վարժարանը եւ աղջիկների Եսայեան վարժարանը, այն ակար-

Աստղ Մըն Ալ Շիջեցաւ Դայ Գրականութեան Երկնակամարէն Ողբ. Դոկտ. Գէորգ Քրիստինեանի Բարի Յիշատակին

ԽԱԶԻԿ ՃԱՆՈՅԵԱՆ

Չորեքշաբթի Դեկտեմբեր 23 2020-ին, պսակաձեւ ժառանգ մեզմէ խլեց Հայաստանի եւ Սփիւռքի մեծանուն գրող, գրականագէտ, խմբագիր եւ բառին խորագոյն իմաստով բարի եւ ազնիւ անձնաւորութիւն մը՝ Ողբ. Դոկտ. Գէորգ Քրիստինեանը:

Հայաստանի եւ Սփիւռքի մէջ մտաւորականներու նօսրացած շքահայրէն մէջ, իր ուրոյն տեղը ունի Ողբ. Դոկտ. Գէորգ Քրիստինեան: Ան 92 տարիներու Աստուածապարզեւ իր կեանքը լիութիւն արժեւորեց մեր «փոքր Ածուին» գրական հակայ ժառանգ մը ձգելով: Մենք, գրող կամ գրականագէտ չենք բարին մասնագիտական իմաստով, բայց որպէս մոլոր ընթերցող մեծ սէր ունինք քննական մօտեցումով ընթերցողներ կատարելու: Դոկտ. Քրիստինեանի ովկիանոսածաւալ գրական ժառանգէն քանի մը հատորներ նուիրած էր մեզի եւ մենք մեծ հաճոյքով կարդացած ենք այդ գիրքերը, խոր տպաւորութիւն ունենալով հեղինակին գրիչէն եւ մարդկային նկարագիրներէն:

Ողբ. Քրիստինեանի գրական նութեան մէջ մենք տեսած ենք համայնագիտարանի հարստութեամբ օժտուած գրող մը: Բայց այսօր մեր նպատակը անոր գրական եւ հրատարակարական ժառանգը ներկայացնել չէ, այլ մեր սրտի խօսքը ըսել Ողբ. Դոկտ. Գէորգ Քրիստինեանի յաւիտենական մեկնումի տխուր առիթով, որպէս ծաղկեպսակ իր շիրիմին վրայ գետեղելու համար:

«««
Հանգուցեալ Դոկտ. Քրիստինեանի բուն անունն է Գէորգ Գասպարեան, իսկ մենք գինք մտերմաբար կը կոչէինք մըսթըր ձորձ, կամ՝ Տոն Խորիկ:

Հանգուցեալը ճանչցած ենք «Նաւասարդ Գրական Ամսագրի» շրջանակին մէջ: Ժամանակին Կլենտոնի մէջ լոյս կը տեսնէր «Նաւասարդ» գրական միակ թերթը ողջ ԱՄՆ-ի շրջանին մէջ: Այս թերթի խմբագիրն է Հալէպ ծնած, Պէյրութ հասակ առած ծանօթ գրող հանգուցեալ Արմէն Տօնոյեան: Այդ գրական թերթին շուրջ հաւաքուած էին հայ երեք կուսակցութիւններէ, երեք յարանուակցութիւններէ, Հայաստանէն եւ գանազան երկիրներէ եկած եւ Լոս Անձելըս հաստատուած գրողներ, անոնցմէ մին եւ մշտապէս այցելողն էր հանգուցեալ Քրիստինեան, ես որպէս այս թերթի վարչութեան անդամ, փոխ ատենապետ եւ ապա երկու տարի եւս ատենապետ միշտ ալ թերթի խմբագրատուն կը հանդիպէի, որ իմ գրասենեակիս ալ մօտ էր, հոն էր որ առաջին անգամ տեսանք եւ ծանօթացանք պարթեւա-լատինական, ֆիզիքականով շատ ներկայանալի, Հայաստանի ջուրը խմած եւ օդը շնչած Ողբ. Գէորգ Քրիստինեանին: Իմ առաջին խօսքս եղաւ իրեն ըսելով. «Դուք Ձեր ֆիզիքականով, ճիշտ քաղաքը եկած էք, քանի որ հոս Հալիվուտի քաղաքն է եւ դուք ձեր հասակով եւ դէմքով եւ ֆիզիքականով շատ լաւ ֆիլմի դերասան կրնաք ըլլալ Հալիվուտի մէջ»:

«Նաւասարդը» փակուելէ ետք,
Շար.ը էջ 18



յաճախ սկսանք տեսնուիլ Կլենտոնի Պերճ Տէր Սահակեանի Գրատուն Պերճին մէջ: Հոն եւս գրողներու եւ մտաւորականներու ժամադրավայր մըն էր, մնայուն այցելուներէն էր Ողբ. Դոկտ. Գէորգ Քրիստինեան: Ան մեր յաճախորդը ըլլալով, ժամացոյցի ճշդապահութեամբ ամէն ամիս գինք պիտի տեսնէինք, ինքնաշարժի ապահովագրութեան վճարումը ընելու համար եւ Պերճ գրատունը երթալու ատեն: Այդ ծանօթութիւնները պատճառ եղան որ մենք Ողբ. Քրիստինեանի գրութիւնները հայ մամուլին մէջ տեսնելու ատեն, պէտք է որ կարդայի զանոնք:

Մեր յարաբերութիւնները շարունակուեցան մինչեւ իր կարճատեւ հիւանդութիւնը անոր մեզմէ յաւերժ բաժնուիլը:

Ամէն ամիս Ողբ. Դոկտ. Քրիստինեանին տեսնելու առիթ կ'ունենայի եւ շատ հաճելի եւ քաղցր «գրոյցներ» կ'ունենայինք: Հանգուցեալը շատ կ'ուրախանար եւ կը քաջալերէր գրականութեան աշխարհ մուտք գործող նորեկ գրողները, անոնց մասին քաջալերական գրութիւններով, շինիչ եւ բարեւար յօդուածներով իրենց գրականութիւնը աւելի յաջողցնելու կ'աշխատէր:

Գալիֆորնիոյ գրական բոլոր միութիւններու մէջ վարչական եղած է, փոխ ատենապետ եւ ատենապետի պաշտօններ վարած է: Որպէս մեծահոգի մարդ, միշտ ալ գրական միութեան ձեռնարկներու կ'աշխատէր երիտասարդները, նոր գրողները քաջալերել եւ թոյլ կուտար անոնց ելոյթ ունենան եւ քաջալերուին գրական աշխարհին մէջ:

Բնաւ չենք յիշեր, որ օր մը Ողբ. Դոկտ. Քրիստինեան, ունէ գրողի կամ գրականագէտի գործերը նաեմացնող արտայայտութիւններ ունենայ: Բան մը որ մեծապէս տպաւորած է զիս եւ մեծ յարգանք յառաջացուցած է իմ մօտ այս պատուական գրողին հանդէպ:

Նորեկները քաջալերող, սխալները մեղմութեամբ եւ քնքշութեամբ շտկող «պապա» գրող մը եղած է ան, որուն համար արժանացած է բոլոր գինք ճանչցողներու սիրոյն եւ յարգանքին:

Արդարեւ Աստուծոյ եւ բնութեան հանդէպ մեղանշած պիտի ըլլանք, եթէ գանգատինք, դժգոհինք եւ ցաւինք Ողբ. Դոկտ. Գէորգ Քրիստինեանի մահուան առիթով, որովհետեւ Աստուած շատ շուտ եղած էր հանգուցեալի հանդէպ,

Ամանորը Մուսա Լերան Գիւղերուն մէջ



ՄԻՍԱՔ ԴԵՐԿԵԼ

Ժողովրդական աւաղու իւններու նկատմամբ յատուկ հետաքրքրութիւնով ձեռնարկած ենք յօդուածաշարքի մը, որ պիտի փորձենք ներկայացնել որոշ ժամանակագրութեան մը հետեւելով: Պարտինք նշել թէ յաւակնութիւն չունինք նիւթը ազգագրական մասնագիտութեամբ մշակելու:

Աւանդութիւնները կամ սովորութիւնները ընդհանուր շրջանակի մը մէջ նմանութիւններ ներկայացնելով հանդէպ կրնան տարածքաշրջանին տարբերութիւններ ալ պարզել: Աւանդութիւնները շատ անգամ ունին կրօնաբարոյական բնոյթ: Կը վերագրուին հոգեւոր պատումներու: Այս ծիրէն ներս առաջին յօդուածով կ'ուզեմ անդրադառնալ Մուսա Լերան հայկական գիւղերու մէջ Ամանորի եւ Մուրե Մննդեան աւանդութիւններուն:

Հայերս Ամանորը անուանած ենք «Կաղանդ» բառով: Լատիներէնի մէջ տարեմուտի իմաստներ կայացնող «Գալենտա» բառէն հայացուած Կաղանդը Մուսա Լերան բարբառին մէջ վերածուած է «Կաղանդ»-ի: Կաղանդը հոգեւոր նշանակութեան աւելի օրացուցային յատկութիւն մը ունի, որ իր անդրադարձը կը գտնէ ճաշատեսակներու մէջ եւս: «Ձիթի Բիկիլը» (ձէթով բոկեղ), «Պանրուհուց» (Պանիրով հաց), «Կաթնըճուց» (Կաթով հաց), «Ձիլիլէլիլը» խմորի քաղցրաւենիկ մը: Կաղանդի յատուկ ուտեստեղէններ են:

Մուսա Լերան երբեմնի եօթը հայաբնակ գիւղերէն այսօր գոյութիւնը կը պահէ միայն Վաքըֆը: Հոն տակաւին կը շարունակուի Ամանորի յատուկ ծիսական բնոյթով աւանդութիւն մը: 1 Յունուարի արեւածագին նախապէս հաւաքուած փշոտ ցախերով խարոյկը կը բռնկուի: Մասնակիցները ձեռքերնին ունին թափնիի ճիւղեր, որով կը հարուածեն կրակը իբրեւ անցնող տարուայ ձախորդ օրերը: Սովորութեան համաձայն խարոյկը վառելու պատիւը տարեցներուն կը վիճակի: Երբ բոցերը հետզհետէ կը յանգին գիւղի տարեցները մանկանց կը բաժնեն զանազան միւրգեր: Ինչպիսիկ են չորացուած թուզ, խաղող, ընկույց, պիստակ եւ այլն: Նշենք այսօր այս մանր նուէրները ձեւափոխուած են

իրենց տեղը գիջելով շուկայէն գնուած կրկնեփ, կոֆրեթ, տուրմ եւ նման խորտիկներու: Երիտասարդները կը պահեն քիչ առաջ այդ կրակը ձեռած ճիւղերը եւ նոյն օրուայ երեկոյեան տունները շրջելով կը հաւաքեն Կաղանդի նուէրները: Այդ ճիւղերը գէնք են նաեւ: Այցելած տունի բնակիչները պէտք չէ իմանան թէ ով է դուրը թակողը: Անոնք պարտական են երկար պարանի մը ծայրը կապուած տոպրակը լեցնելով: Իսկ եթէ փորձեն յայտնաբերել այցելուն, ետ կը շարտուին ճիւղերու հարուածներով: Մանուկները ու պատանիները ապա իրարու հետ կը բաժնեն գոյացած աւարը:

«Տունէն Չատակ»
Հայ Առաքելական Եկեղեցւոյ Հինգ տաղաւարներու առաջինն է Մուրե Մննդը, որ ի տարբերութիւն համաշխարհային քրիստոնէութենէ հայոց մօտ կը տօնուի 6 Յունուարին, Յիսուսի մկրտութեան հետ նոյն օրը:

Մուսա Լերան հայերը իրենց աւօրեայ խօսակցութեան մէջ «Չատակ» բառը հոմանիշ կը համարեն տօնի: Բնորոշելու համար ալ կը գործածեն նախածանց բառ մը: Այսպէս «Տունէն Չատակ»ը Չատակի Տօնը կ'անուանեն նաեւ «Պատակ Չատակ» (Պատիկ Չատիկ), մեծը վերապահելով Յարութեան խորհուրդին: Այս տօնն ալ բացի իր եկեղեցական ծիսակատարութենէ ունի նաեւ ազգագրական ծիսակատարութիւններ: 5 Յունուարի երեկոյեան գիւղի մանուկներն ու պատանիները տունները շրջելով կ'երգեն «Խորհուրդ Մեծ» շարականը:

Անցեալին միայն մանչերուն մասնակցութեամբ կատարուող «Խորհուրդ Մեծ»-ի երգեցողութիւնները այսօր բնակչութեան նուազումի հետեւանքով կը կատարուի երկուստ:

6 Յունուարի առաւօտուան Ս. Պատարագի աւարտին կը կատարուի ջրօրհնէք: Այդ արարողութիւնն ալ ունի իր աւանդութիւնը, քանի որ ամէն տարի պատանի մը պիտի ընտրուէր իբրեւ Յիսուս Քրիստոսի կնքահայրը:

Կնքահայր կ'ընտրուէր այն պատանին, որուն հայրը մեծագոյն նուիրատուութիւնը ըրած կ'ըլլայ եկեղեցւոյ անտուկին:

«ԱՊՕՍ»

«Կարմիր ժամուց»-ին Այժմեականութիւնը

Շարունակուած էջ 13-էն

«Կարմիր ժամուց»-ով հետամուտ էր իր ազգին պաշտպանութեամբ եւ մարտունակութեամբ, անդին

տողուններ մահացու զնդակներ կ'արձակէին բոլոր ժամանակներու անվէհեր գրող-մարտիկ Արփարեանի ուղղութեամբ...: «ԱՐԱՐԱՏ» ԼԻԲԱՆԱՆ

Պրագիլիոյ Սէջ Ձգալի Պարապուրիւն Առանց Բարեկենդանի (Carnival)



Ռիօ Տը Ժանէյրօյն ստացուած լուրերը խիստ յուսահատական էին այս տարի: Քանի որ համաշխարհային համբաւ վայելող տարեկան արտակարգօրէն շքեղ եւ իւրօրինակ բարեկենդանի (Carnival) տօնակատարութիւնները չեղեալ նկատուած էին պետական շրջանակներու կողմէ, որուն պատճառը քորոնա ժահրի սահմանափակումներն էին: Արդարեւ ցարդ Պրագիլիոյ մէջ քորոնա համաճարակէն վարակուած է 9.8 միլիոն հոգի եւ մահացած աւելի քան 250,000: Այս առթիւ ոչ միայն Ռիօ Տը Ժանէյրօյն, այլեւ Պրագիլիոյ բոլոր քաղաքներուն եւ շրջաններուն մէջ, արգիլուած էին բարեկենդանի տօնախմբութիւնները, շքերթներն ու զեղագարդ սայլակներով ու տարակներով տողանցքները, ներառեալ տօնական շքեղութեամբ պնտուած նաւապտոյտները եւ այլ ձեւի միջոցառումները:

Այս բոլորին աւելցնելով զգալիօրէն տուժեցին երկրի համատարած «Սամպա» պարային դպրոցները, որոնք կը պատրաստուէին այս տարուան աշխարհի մեծագոյն «Սամպա Փարթի»ին: Քորոնայի պատճառով պարտադրուած շրջափակումն ալ մեծ վնասներու ենթարկեց երկրի տնտեսութիւնը: Նշենք նաեւ որ բարեկենդանի առթիւ եւ նախատեսուէր որ այս տօնահանդէսներու բերումով, զբօսաշրջիկներէն պիտի գոյանար 560 միլիոն տոլարի եկամուտ մը եւ գործ պիտի հայթայթէր աւելի քան 70,000 հոգի, որոնք տենդագին կը նախապատրաստուէին եւ մեծ ներդրում ունէին 44 տարիներէ ի վեր շարունակուող աւանդական բարեկենդանին:

«Սամպա» վարժարաններու տէրերն ու պատասխանատուները, բոլոր կերպով քննադատեցին Պրագիլիոյ հանրապետութեան նախագահ եւ ծայրայեղ աջակողմեաններու դեկավար Ժայռ Պոլսօնարօն, իր վարած տնտեսական վնասակար քաղաքականութեան համար: Ինք կը նկատուի երկրէն ներս տեղի ունեցող դժբախտ պատահարներու գլխաւոր պատասխանատուն: Յատկապէս քորոնա համավարակի տարածման արգելիչ միջոցներու չէր նախաձեռնած, որուն իբրեւ հետեւանք, երկիրը հասած էր ներկայ աղիտալի վիճակին: Աշխատաւորներէն մին՝ Տաս Չակաս ալֆօն դրութեան մասին արտայայտուելով ըսաւ. «Տարիներէ ի վեր Սամպա քաղաքին մէջ աշխատելով, ապրուստս կը հոգայի, ամսական ստանալով 500 տոլար, բարեկենդանի շքերթին համար կը շինէինք զեղագարդ սայլակներ: Այս գործը ինծի համար ամէն ինչ էր: Իսկ հիմա անակնկալօրէն իմ եկամուտս ցնդեցաւ...»:

Շքերթի պատասխանատուներէն Լէոնէյն ըսաւ թէ ես 50 գործաւոր կ'աշխատեցնէին մօտս, կրցայ քանի մը ամիս ձեռով մը վարձատրել գիրենք: Բայց ի վերջոյ արձակեցի զանոնք եւ մօտս պահեցի միայն երկու հոգի: Մարդիկ յաճախ կ'ըսեն. «Ո՛հ, ինչ լաւ է զարնավալը...: Ոչ ճիշդ չէ: Անիկա միայն հաճոյանալու համար չէ: Այլ նաեւ մեր ապրուստի միջոցն է, ապրելակերպը...»:

Հիմա մեծ կորուստի մը առջեւ ենք... Ես երբեք չէի կրնար երեւակայել կեանք մը առանց բարեկենդանի: Հիմա կը զգամ այս անսահման պարապուրիւնը:

Ողբ. Դոկտ. Գեորգ Քրիստիան

Շարունակուած էջ 17-էն

անոր երկար եւ պատուաբեր եւ արգասաբեր կեանք մը շնորհած էր: Առողջ եւ կայտառ էր մինչեւ 92 տարեկանին ինքնաշարժ կը վարէր, մեր գրասենեակը որ երկրորդ յարկի վրայ էր առանց դժուարութեան կ'ելլէր, յոգնութեան ոչ մէկ նշան ցոյց տալով, բայց ասկէ աւելի ու մանաւանդ այդ տարիքին նոյնիսկ իր բարեկամներուն եւ ընկերներուն հանդէպ անոնց ուրախ կամ տխուր առիթներուն կ'երթար իր շնորհաւորական եւ մխիթարական խօսքերով կը սփոփէր եւ կ'ուրախացնէր անոնց:

Քանի մը տարի առաջ թեմիս Բարեխնամ Առաջնորդ՝ Գերշ. Տ.

Յովնան Արք. Տէրտէրեանի բարեսուսութեամբ հանգուցեալ Դոկտ. Քրիստիանեան արժանացաւ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ.ի Ս. Սահակ եւ Ս. Մեսրոպ բարձր շքանշանին եւ Սրբատառ Կոնդակին: Անշուշտ մենք ալ ներկայ էինք այդ սրտաշարժ արարողութեան:

Քանի մը օր ետք, երբ ան մեր գրասենեակը եկաւ, խօսեցանք այդ շքանշանին եւ արարողութեան մասին: Հանգուցեալը շատ ուրախ եւ հպարտ էր, իր աչքէն արցունքի կաթիլները հոսելով ըսաւ. «Ինչ օգուտ տիկինս Ռոզան չտեսաւ այդ հոյակապ արարողութիւնը», մենք ալ շատ յուզուած ըսինք իրեն. «Տիկինդ Ռոզան հոգիով եկեղեցին էր եւ վերէն կը հետեւէր այդ

Թուրքիոյ Ուժանիւթի Տագնապը

Շարունակուած էջ 8-էն

զով հարուստ տարածաշրջանին շուրջ ծագած վէճը պահ մը նոյնիսկ մտավախութիւն կը յառաջացնէ, որ ՆԱԹՕ-ի անդամ երկու երկիրները կրնան պատերազմ յանգիլ:

Ատրպէյճան կը դառնայ Թուրքիոյ կազմի մեծագոյն մատակարարը

Թուրքիա եւ Ատրպէյճան ռազմավարական գործընկերներ դարձած են Ատրպէյճանի վերանկախացումէն ետք, եւ այս երկու երկիրները նաեւ ստեղծած են մշակութային, ցեղային եւ ազգակցական սերտ կապեր: Փոխադարձ շահերու վրայ հիմնուած համագործակցութիւնը կ'ընդգրկէ տարբեր մարզեր, ներառեալ՝ ուժանիւթի մարզը:

Ուժանիւթի մարզէն ներս, Ատրպէյճան սկսաւ առանցքային դերակատարութիւն ունենալ 1994-ին, երբ իր միջազգային գործակիցներուն հետ «Դարու Պայմանագիր»ը ստորագրելէ ետք՝ սկսաւ արտահանել ու շահագործել Կասպից ծովու ջրաբնածխային աղբիւրները եւ զանոնք փոխադրել համաշխարհային շուկաներ: Պաքու-Թիֆլիս-ձեյհան քարիւղատար խողովակը (2005) եւ Պաքու-Թիֆլիս-Էրզրում (2006) կազատարը աւելի եւս ամրապնդեցին Ատրպէյճանի դերը իբրեւ ուժանիւթ արտադրող եւ արտածող երկիր: Ատրպէյճանի կազմի պաշարները կը գնահատուին շուրջ 2,6 թրիլիոն խորանարդ մեթրով, եւ երբ գոյութիւն ունեցող Պաքու-Թիֆլիս-Էրզրում կազատարը անբաւարար նկատուեցաւ Ատրպէյճանի կազմի պաշարներուն փոխարէնութեան համար, ծնունդ առաւ Հարաւային Կազախի Միջանցքի (Southern Gas Corridor) գաղափարը՝ նախաձեռնութեամբ Եւրոպական Միութեան, որ կ'ուզէ նուազ կախեալ ըլլալ ռուսական կազէն:

3500 քմ երկարութեամբ միջանցքը բաղկացած է չորս հատուածներէ. «Շահ Տենիզ-II» ծրագիրը, Հարաւային Կովկասի Կազատարին ընդարձակումը (SCPX), Անդրանատոլիական կազատարը (TANAP) եւ անոր վերջնական մասը՝ Անդրատրիաթիք կազատարը (TAP), որ կ'անցնի եօթը երկիրներէ՝ Ատրպէյճան, Վրաստան, Թուրքիա, Պուլկարիայ, Յունաստան, Ալպանիա եւ Իտալիա:

Ատրպէյճանի Թուրքիոյ կազմի գլխաւոր մատակարարը դառնալու հանգամանքը սկսած է աշխարհաքաղաքական մեծ անդրադարձ ունենալ տարածաշրջանին վրայ: Բայց նաեւ անիկա մաս կը

կազմէ վերջին տարիներուն ռուսական կազէն կախուածութիւնը մեղմացնելու Թուրքիոյ ճիգերուն: Յունուարէն Մայիս, 2020ին, Թուրքիա «Շահ Տենիզ»էն ներածած է 4,527 միլիառ խորանարդ մեթր ատրպէյճանական կազ: 20,4% համեմատութեամբ աւելի, քան 2019-ին նոյն ժամանակահատուածը: Միւս կողմէ, 2020-ի Մայիսին Ռուսիայէն ներածուած կը ճատուած է գրեթէ 62%-ով՝ 2019-ի նոյն ամսուան հետ բաղդատած: 2020 Մայիսին, Ատրպէյճան պաշտօնապէս դարձած է Թուրքիոյ կազմի գլխաւոր մատակարարը:

Բացի այն իրողութենէն, որ ատրպէյճանական կազը աւելի աժան է եւ, հետեւաբար, լաւ այլընտրանք բաղդատած այլ աղբիւրներէ ստացուած կազին, 2019-ին TANAP-ի գործարկումը նոյնպէս մեծ դեր ունեցած է արտածման դիւրացման եւ Թուրքիոյ կողմէ ստացուած կազի քանակի յաւելումին: 6,5 միլիառ տոլար արժողութեամբ ծրագիրը, ըստ էութեան մաս կը կազմէ 40 միլիառ տոլար արժող Հարաւային կազախի միջանցքին: TANAP կրնայ տարեկան փոխադրել մինչեւ 16 միլիառ խորանարդ մեթր կասպեան կազ, որուն 10 միլիառ խորանարդ մեթրը կ'երթայ Եւրոպա, իսկ 6 միլիառ՝ թրքական շուկայ:

Ատրպէյճան սկսած է մեծապէս օգտուիլ այս զարգացումէն? Բարելաւելու համար իր դիրքը իբրեւ տարածաշրջանին մէջ կազմի մեծագոյն մատակարարը եւ աւելի եւս սերտացնելու իր յարաբերութիւնները Թուրքիոյ հետ: Միւս կողմէ, Թուրքիա շահագրգռուած է ատրպէյճանական կազի անխափան հոսքով եւ, ինչպէս շրջանային կամ միջազգային այլ պետութիւններ, կը թուի պատրաստ ըլլալ պաշտպանելու իր կազամատակարարման շղթան՝ թէ քաղաքականապէս եւ, ըստ երեւոյթին՝ նաեւ գինուորապէս:

Նկատի առնելով որ Թուրքիա նպատակ ունի տարածաշրջանին մէջ դառնալու ուժանիւթի կեդրոն մը եւ ոչ միայն ծառայելու որպէս տարանցումի երկիր, անոր յարաբերութիւնները Ատրպէյճանի հետ հետզհետէ աւելի կ'ամրապնդուին: Ատրպէյճանական կազը կը շարունակէ կարեւոր դեր ունենալ թրքական արտաքին զարգացող ռազմավարութեան մէջ: Տակաւին, շատ հաւանաբար երկուքն ալ ձգտին աւելի խորացնելու իրենց ռազմական համագործակցութիւնը՝ պաշտպանելու համար իրենց ենթակառուցները:

Քաղուածաբար՝ www.civilnet.am
9 Փետրուար 2021

արարողութեան»: Ասիկա ցոյց կու տայ հանգուցեալի սէրը եւ կապուածութիւնը իր թանկագին կողակիցի Ռոզային հետ, որուն ոչ միայն բանաստեղծական գոհարները նուիրած էր անոր, այլ ամէն վայրկեան իր միտքէն եւ մտածումէն չէր հեռանար իր սիրունատես հրեշտականման տիկինը:

Թող Աստուած մեր սիրելի Գէորգ Քրիստիանեանի հոգին իր

տիկնոջ հետ միացնէ իր երանաւէտ դրախտին մէջ, իսկ իր զաւակներուն Յակոբին եւ Գոհարին հանդերձ ընտանեօք եւ բոլոր հարազատները շարունակեն ապրիլ միշտ հպարտութիւնը ունենալով որ իրենք Գէորգ Քրիստիանեան բարեհամբաւ, ազգասէր եւ մեծ հայրենասէրի ժառանգորդներն են:

Հողը թեթեւ ըլլալ վրադ թանկագին վարպետ:

Ձեր Ծանուցումները Վստահեցէք
«Մասիս» Շաբաթաթերթին
Massis2@earthlink.net

ՑԱՒԱԿՑԱԿԱՆ

ԱՆԱՀԻՏ ԳԹԸՖԵԱՆԻ մահուան առթիւ կիրիլեան Բարեսիրական Միութեան Վարչութիւնը իր խորագրայն ցաւակցութիւնը կը յայտնէ հանգուցեալի ամուսնոյն՝ Սահակ Գրթֆեանին, զաւակներուն եւ ընտանեկան համայն պարագաներուն:
Առ այդ \$100 կը նուիրէ «Մասիս»ին:

ՑԱՒԱԿՑԱԿԱՆ

ԱՆԱՀԻՏ ԳԹԸՖԵԱՆԻ մահուան առթիւ Տէր եւ Տիկ. Կարօ եւ Անի Պէքարեաններ ցաւակցութիւն կը յայտնեն հանգուցեալի ամուսնոյն՝ Սահակ Գրթֆեանին, զաւակներուն եւ ընտանեկան պարագաներուն:
Առ այդ \$100 կը նուիրեն «Մասիս»ին:

ՑԱՒԱԿՑԱԿԱՆ

ԱՆԱՀԻՏ ԳԹԸՖԵԱՆԻ մահուան առթիւ Տէր եւ Տիկ. Պետրոս եւ Լենա Խոտանեաններ իրենց ցաւակցութիւնները կը յայտնեն հանգուցեալի ամուսնոյն՝ Սահակ Գրթֆեանին, զաւակներուն եւ ընտանեկան պարագաներուն:
Առ այդ \$100 կը նուիրեն «Մասիս»ին:

ՑԱՒԱԿՑԱԿԱՆ

ԱՆԱՀԻՏ ԳԹԸՖԵԱՆԻ մահուան առթիւ Տէր եւ Տիկ. Վարդան եւ Կարինէ Գոճապապեան իրենց ցաւակցութիւնները կը յայտնեն հանգուցեալի ամուսնոյն՝ Սահակ Գրթֆեանին, զաւակներուն եւ ընտանեկան պարագաներուն:
Առ այդ \$100 կը նուիրեն «Մասիս»ին:

ՑԱՒԱԿՑԱԿԱՆ

ԱՆԱՀԻՏ ԳԹԸՖԵԱՆԻ մահուան առթիւ Տէր եւ Տիկ. Զաւէն եւ Խաթուն Ունճեաններ իրենց ցաւակցութիւնները կը յայտնեն հանգուցեալի ամուսնոյն՝ Սահակ Գրթֆեանին, զաւակներուն եւ ընտանեկան պարագաներուն:
Առ այդ \$100 կը նուիրեն Հ.Մ.Մ.ին

ՑԱՒԱԿՑԱԿԱՆ

ՎԱՐԴՈՒՀԻ ԼԱԶԻՆԵԱՆ-ԵԱՂԸՆԵԱՆԻ մահուան առթիւ Տէր եւ Տիկ. Յարութ եւ Անի Գասպարեաններ իրենց ցաւակցութիւնները կը յայտնեն հանգուցեալի ընտանեկան պարագաներուն, մասնաւորաբար Կարօ, Լեւոն եւ Յովիկ Լաչինեաններուն:
Առ այդ \$100 կը նուիրեն «Մասիս»ին:

Սարի Թաղի Զիւանդանոցը Եւ Ես

Շարունակուած էջ 14-էն

ականջին:
Ես, ամբողջովին անտեղեակ կատարուող գործողութիւններից, սասկալի բարձր
Զերմութեան ազդեցութեան տակ, եւ, մանաւանդ աջ ոտքի ասաւոր ցաւի պատճառով ինձ զգում էի անբացատրելի մի անյայտութեան մէջ: Ես գառանցում էի, եղաւ մի պահ, որ աչքերս միջնեցին ու ընկալ երազների աշխարհը:
Զգիտեմ թէ տասնօրեայ անքնութիւնից եւ ստուապելի ցաւերից յետոյ քանի ժամ էի քնել, բայց երբ աչքերս բացեցի, տեսալ կողքիս կանգնած մայրիկիս եւ ինձ խնամող բժշկուհուն:
Անբերակալի իմ հանգստութիւն էր իջել վրաս, կարծես թէ անցել էր ոտքիս ցաւը, բայց զգում էի, որ անկողինս, մանաւանդ աջ ոտքիս շրջանը խիստ խոնավ էր:
- Մամա~, - ոչ առաջուայ նման նուազուան ձայնով, - էս անկողինս ինչո՞ւ է թաց, մանաւանդ աջ կողմը:
- Հիմա տղաս, հիմա~ կը նայեմ..., - Քնարի~ կ'մօտ արի, մօտ, - դիմեց մայրս խնամող բժշկուհուն.
- Մօտ, աւելի մօտ, տես, տես~ս..., Հենրիկի ոտքի ուռածութիւնն իջել է: Ամբողջ թարախը դուրս է եկել, հրաշք է, հրաշք:
Պարզուեց, որ բժիշկ Եղորդեանը մէկ ասեղով ինձ անչարժութեան էր մատնել ու անցել իր գործին: Վիրահատական դանակի մէկ հարուածով հսկայական ճեղք

էր բացել աջ ոտքիս վերին մասում, որտեղից, առուակի նման անդադրում թարախ էր հոսել:
- Որքան որ հնարաւոր էր մաքրեցի թարախը, բայց դեռ անազին կայ, մէկ-երկու օր դեռ պէտք է, որպէսզի ամբողջովին մաքրուի, - ասաց բժշկուհին Քնարը:
Յաջորդ օրը այցելութեան եկաւ բժիշկ Եղորդեանը.
- Սկզբում երեխան կաղալու է, - քննելուց յետոյ, ժպիտը դէմքին ասաց պրոֆեսորը, - մի վախենաք, նոյնիսկ եթէ մի երկու տարի տեւի կաղալը, յետոյ ամէն ինչ կ'անցնի, բայց Սկալը տարիներ մի հետք կը թողնի, էն էլ՝ Աստուծոյ գործն է, ո՞վ գիտի ե՞րբ եւ ինչ տեսակ: Ամէն դէպքում չ'արժէ դրա մասին մտածել, դուք լաւ, առողջ երեխայ ունէք:
... Իսկապէս էլ եկաւ այդ ժամանակը, Եղորդեանն իրաւացի էր:
1988-ի Յունուարի 28-ին հայրս մահացաւ Լոս Անջելէսում: Հիմնականում մէկ-երկու ամսում իր մօտ առաջացած Դեղնախտ հիւանդութիւնից: Ամերիկեան օրէնքների համաձայն, նման դէպքերում ստուգման են ենթարկուում մահացածի ընտանիքի բոլոր
Անդամները: Ստուգումից պարզուեց, որ ես իմ մէջ եմ կրում ով գիտէ ո՞ր ժամանակներից, մի վիրուս, մանրէ, որը ինչ որ ժամանակ «գլուխ» էր բարձրացնելու:

Թուրքիա Այցելութիւն


Շարունակուած էջ 16-էն

տելուց յետոյ հաճախում համալսարաններ: Իւրաքանչիւր դպրոց ունէր Հայ տնօրէնը ու թուրք փոխ տնօրէնը: Բոլոր դպրոցները պետութեան հսկողութեան տակ էին: Դպրոցները ունէին իրենց հիմնադիրները: Այնտեղ աշխատանքի նշանակուած ուսուցիչները կառավարութեան ներկայացուցիչներ էին, որոնք տեղեակ էին պահում տեղի անցուդարձերի մասին: Ստանբուլից բացի եկեղեցիներ գործում էին Կեսարիայում, Դիարբեքիւրում, Իսկենտերինում եւ նաեւ յետոյ բացուած Մուսա Լեւան Վազրֆի գիւղում: Սեւանի մի քարագործ վարպետ, իմանալով Մուսա Լեւում բացուած էր եկեղեցի, երկու խաչքար քանդակել, այն տարել Վազրֆի, ինքն էլ այն ամրացրել խորաբաց եկեղեցու դռանը, ա՛յ քեզ հաւատացեալ Հայ մարդ...:
Թուրք պետականութեան անցելի պատմութիւնում մեծ դերակատարութիւն էին ունեցել Հայ գործիչներ: Թուրքական հանրագիտարանում դրուատանքի խօսքեր ասուել նրանց մասին: Նախորդ դարի կեսերի Ելեւմուտի նախարար Պեգճեան Ամիրա՝ Գագա Արթին, որը հիմնադիրն եղել Գում Գաբու-ի մայր վարժարանի եւ Ետիկուլէ-ի Ս. Փրկիչ ազգային հիւանդանոցի: Սուլթան մտահոգ էր, Արթինին ցոյց տուել Բոսֆորում կառանած ուսակական ուղմանակերը, գանձարանը դատարկ: Գագա Արթին սուլթանին ասել երկիրը ճգնաժամից փրկելու համար «Ֆերման» արձակել: Խորհրդակցել ամիրաների հետ, ոսկի էին ներդրել գանձարան, ոսկու արժէքով հինգ «ղուշ»-անոց պղինձեայ դրամներ հատել, շուկայ տարածել: Քաղաք այցելութեան ատէն սուլթան հանդիպել Գագա Արթինին, նրան հրամայել հայերից գտնել մի գորաւոր ըմբիշ, որ կարողանար զգեստնել բոլորին յաղթած ըմբիշին: Մենարտ էր, Սուլթան ներկայ եղել, մի քանի հնարքներից յետոյ Հայը ոտքերը դրել նրա իրանին, ձեռքերով սեղմել պարանոցը, սուլթան կանչել «խեղդել»: Բամբասել էին Գագա Արթինին, սուլթան այցելել նրան, համոզուել, այն

գրպարտութիւն էր, հրամայել նրա մահուան ատէն յուղարկաւորութեան թափօրը անցնէր պալատի իր պատշգամբի առաջով, որ նրան յաւերժութիւն ճամբելու համար մի պահ կանգնէր: Վառուդապետները Տատեաններն էին, Պալեան ճարտարապետներ, կառուցել էին բազմաթիւ պալատներ, որոնցից Դոլմա Բահչէ պալատը աշխարհաճանաչ շինութիւն է: Երկրի արտաքին գործերի նախարար Գաբրիել Նորատունկեան, երկար ատէն կանխել էր Թուրքիայի առաջին համաշխարհային պատերազմին մասնակցելը, մեկուսացուել էր, Երիտ թուրքեր պատերազմ յայտարարել դաշնակիցների դէմ, որի մասին սուլթանը թերթերից է իմացել: Խումբի այցելութեան ատէն կառավարութիւնում, մէջլիսում հայեր չկային, բանակում ծառայում էին որպէս շարքային:
Ստամբուլում կային Հայ հարուստներ, գործարանատէրեր, խոշոր առեւտրականներ, բայց մեծամասնութեամբ միջակ առեւտրականներ ու արհեստաւորներ էին: Զանազան ընկերութիւններում ու մասնաւոր աշխատանքում գործում էին Հայ իրաւաբաններ, բժիշկներ, շինարար ճարտարապետներ, ծառայողներ, որոնք օգտակար աշխատանք տարել թաղային խորհուրդներում: Ստամբուլում հուշակուած եղել ոսկերիչները: Հայ աղքատների ու մուրացիկներ չկային ընդհանրապէս արտասահմանեան երկրներում հայ մուրացիկներ չկային, տեղում գործում էին «Աղքատախնամ միութիւններ» խնամելու տարեցներին: Հրատարակուած էին Հայերէն՝ «Ժամանակ» ու «Մարմարա» օրաթերթերը, որոնք կարելու դերակատարութիւն ունեցել Ստամբուլահայ կեանքում: Ականատես եղել, որ հայերը քաղաքային ու ինչպէս էին թերթ ընթերցում, Պարոնեան ասել էր՝ «Հայեր նաեւ «այնտեղ» թերթ են ընթերցում», ինչ պատահեց հայերին: Միացեալ նահանգներում թերթ ընթերցող Հայ բարեկամները շատ նուազած են, ի մասնաւորի ուրիշ ազգերի մարդիկ փոխադրակառքերում մամուլ կամ գիրք ընթերցում, այն էլ ուշադիր:

Այսինքն ասուեց այն՝ ինչ կանխատեսել էր պրոֆեսոր Եղորդուկեանը գրեթէ 80 տարի առաջ:
...Ըստ պրոֆեսորի կանխատեսման, եկաւ այդ ժամանակը եւ Ամուրիկացի բժիշկներն ասացին, որ այդ մանրէն իմ մէջ եմ կրել ամբողջ կեանքում, սկսած Երեւանի Սարի Թաղի Սուր Վարակիչ հիւանդանոցից, որտեղ, այդ սոսկալի տարիներին, ով գիտի ի՞նչ

ասեղներով են սրակումներ ու ներարկումներ արել, որ վարակել են ինձ ծանր հիւանդութեամբ:
- Ի՞նչ թաքցնեմ, այդ մանրէն իր աւերը գործեց, բայց շնորհիւ UCLA հիւանդանոցի՝ իրապէս փայլուն պրոֆեսորների, նրանք դժուարից էլ դժուար վիրահատութեամբ նոր կեանք պարգևեցին ինձ:
Շնորհակալ եմ նրանց:


NATIONAL NOTARY ASSOCIATION
NOTARY PUBLIC
MEMBER
Garine Depoyan
626-755-4773
554 N. Chester Ave Pasadena, Ca. 91106
ghdepoyan@gmail.com

«Ռոման» Յաղթեց «Ուդինեզեի» 3-0 Մխիթարեանը Մասնակցութեամբ



Իտալիոյ ֆութպոլի առաջնութեան 22-րդ հանգրուանին «Ռոման» մրցեցաւ «Ուդինեզեի» հետ:

Հոռմի Ողիմպիական մարզադաշտին վրայ կատարուած խաղի ընթացքին «Գալլերը» խաղի հաշիւը բացին 5-րդ վայրկեանին: Աչքի ինկաւ Ժոնեդան վերետուն: 25-րդ վայրկեանին «Ուդինեզեի» դարպասապահը խախտեց խաղի կանոնները Մխիթարեանի նկատմամբ եւ նշանակուած 11 մեթրանոց հարուածը անվրէպ բերդ ուղարկեց դարձեալ ժողովան վերետուն:

Երկրորդ խաղակէսին խումբերը կը փոխանակէին գրոհներ, սակայն դարպասի գրաւում չարձանագրուեցաւ: Միայն հանդիպման աւելացուած ժամանակի ընթացքին «Ռոման» նշանակեց երրորդ կողմը: Դիպուկ հարուածով աչքի ինկաւ Պեդրոն:

Հայաստանի ֆութպոլի ազգային խումբի աւագ Հենրիխ Մխիթարեանը «Ռոման» մեկնարկային կազմին մէջ էր եւ մասնակցեցաւ ամբողջ խաղին:

Այս յաղթանակէն յետոյ «Ռոման» Սերիա Ա-ի մրցաշարային աղիւսակում բարելաւելով իր դիրքը այժմ 3-րդն է: «Գալլերը» ունին 43 միաւոր: Առաջատարը 49 միաւորով «Միլանն» է:

«Ինթեր» Յաղթեց «Լացիոյին» Եւ Բարձրացաւ Առաջին Տեղ

Իտալիոյ առաջնութեան 22-րդ հանգրուանին «Ինթեր» Միլանի մէջ մրցեցաւ հոռմէական «Լացիոյի» հետ եւ առաւելութեան հասաւ 3:1 արդիւնքով:

Երկու կողմի եւ կողային փոխանցման հեղինակ դարձաւ «Ինթերի» պեղծիգացի յարձակող Ռոմելո Լուկակուն, որ նշանակեց իր մարզական կեանքի 300-րդ կողմը: Իտալացի Անթոնիո Գոնթէի գլխաւորած խումբի երրորդ կողմը նշանակեց արժենթինցի յարձակող Լաուտարո Մարտինսը:

«Ինթեր» 50 կէտով գլխաւորեց մրցաշարային աղիւսակը եւ 1 միաւոր առաջ է երկրորդ տեղը ընթացող «Միլանէն»: «Լացիոն» 7-րդ տեղը կը գրաւէ՝ 40 միաւորով:

«Ռեալը» Յաղթեց «Վալենսիային» Բենգեմայի Եւ Կրոսի Կոլերուն Շնորհիւ

Սպանիոյ ֆութպոլի առաջնութեան 23-րդ հանգրուանի ընթացքին Մատրիտի «Ռեալը» սեփական հարկի տակ հիւրընկալած էր «Վալենսիան»:



Շաբթուայ կենտրոնական խաղին «արքայական ակումբը» յաղթեց կարիմ Բենգեմայի եւ Թոնի Կրոսի գնդակներուն շնորհիւ: Երկու կողմերն ալ մատրիտցիները նշանակեցին առաջին խաղակետում:

Այս յաղթանակէն յետոյ «արքայական ակումբը» Լա Լիգայի մրցաշարային աղիւսակին վրայ երկրորդն է եւ ունի 49 կէտ: Առաջին տեղը 54 միաւորով կը գրաւէ Մատրիտի «Աթլետիքոն»։ Երկրորդը 46 կէտով կ'եզրափակէ «Պարսելոնան»:

«Պարսելոնայի» Յաղթանակը՝ 5:1

Սպանիոյ առաջնութեան 23-րդ հանգրուանին «Պարսելոնան» սեփական դաշտին վրայ խաղցաւ «Ալաւէսի» հետ: Հոլանտացի Ռոնալդ Կումանի գլխաւորած խումբը յաղթանակ տարաւ 5:1 հաշուով:

Երկու կողմի հեղինակ դարձան գաթալոնական խումբի փորձուկացի յարձակող Ֆրանսէշկո Տրինկատով եւ արժենթինցի յարձակող Լիոնել Մեսին:

«Պարսելոնան» 22 խաղէն յետոյ 46 միաւորով երկրորդն է, «Ալաւէսը» 16-րդն է՝ 22 միաւոր:

«Մանչեսթըր Սիթի» - «Թոթենհեմ»՝ 3:0

Անգլիոյ առաջնութեան 24-րդ հանգրուանին «Մանչեսթըր Սիթին» գաթալոնացի Խոսեպ Կուարտիլայի գլխաւորութեամբ սեփական դաշտին վրայ մրցեցաւ փորձուկացի Ժոզէ Մոուրինիոյի ղեկավարած «Թոթենհեմի» հետ:



Մանչեսթրեան խումբը ոչ մէկ խնդիր չունեցաւ եւ յաղթանակ տարաւ 3:0 հաշուով: Տուպլի հեղինակ դարձաւ Գերմանացի կիսապաշտպան Իլկայ Կիլնտոգան, աչքի ինկաւ նաեւ սպանացի կիսապաշտպան Ռոտրիկո Էրնանտեսը:

«Մանչեսթըր Սիթին» 53 միաւորով կը գլխաւորէ մրցաշարային աղիւսակը: «Թոթենհեմ» 8-րդն է՝ 36 կէտով:

«Մանչեսթըր Եունայթըտը» Զյաղթեց Յետնապահներէն «Ուեստ Պրոմիչին»

Անգլիոյ ֆութպոլի առաջնութեան 24-րդ հանգրուանին «Մանչեսթըր Եունայթըտը» արտագնայ խաղի ընթացքին մրցեցաւ «Ուեստ Պրոմիչի» հետ:

Դաշտի տէրերը առաջինը բացին հանդիպման հաշիւը: Խաղի մեկնարկէն անմիջապէս ետք 2-րդ վայրկեանին, աչքի ինկաւ Տիակնէն: Առաջին կէսի վերջին վայրկեաններուն «Մանչեսթըր Եունայթըտէն» Ֆերնանտեսը հաւասարեցուց հաշիւը:

Երկրորդ խաղակէսին դարպասի գրաւում չարձանագրուեցաւ եւ առաջատարներէն «կարմիր սատանաները» չկարողացան յաղթել յետնապահներէն մէկուն՝ «Ուեստ Պրոմիչին»:

Այս հանգրուանէն յետոյ «Մանչեսթըր Եունայթըտ» 46 միաւորով երկրորդն է:

«Լիվերփուլ» Կը Շարունակէ Պարտուիլ

Անգլիոյ ֆութպոլի առաջնութեան գործող ախոյեան «Լիվերփուլ» կը շարունակէ պարտութիւններու շարքը Փրեմիեր լիգայի մէջ: 24-րդ հանգրուանին «Լիվերփուլ» հիւրընկալուած էր «Լեսթերին» եւ պարտութիւն կրեց 3:1 արդիւնքով: «Լիվերփուլ»-ի միակ կողմը նշանակեց եգիպտացի Մուհամատ Մալահը:

Այս հանգրուանէն ետք «Լիվերփուլ» կը շարունակէ մնալ 4-րդը:

Ազատ Յովհաննիսեանը Նոքաւորի Ենթարկեց Մրցակցին Եւ Տարաւ 5-րդ Յաղթանակը



Հայաստանը ներկայացնող բռնցքամարտիկ Ազատ Յովհաննիսեանը հերթական յաղթանակը տարած է պրոֆեսիոնալ ռինկի վրայ:

ԱՄՆ Գալիֆորնիա նահանգի Ինտիո քաղաքին մէջ կայացած բռնցքամարտի երեկոյի ժամանակ հայ մարզիկը 10 ռաունտնոց մենամարտին հանդիպած է 32 տարեկան մեքսիքացի փորձառու բռնցքամարտիկ Էնրիկէ Պերնաչի հետ: Ազատ Յովհաննիսեան 8-րդ ռաունտին մրցակցին նոքաութի ենթարկած է եւ տարած է 5-րդ անընդմէջ մաքուր յաղթանակը փրոֆեսիոնալ ռինկի վրայ:

Միքայէլ Միքայէլեանը 8-րդ Տեղը Կը Գրաւէ Դահուկավագրի Աշխարհի Առաջնութեան

Հայաստանի դահուկորդ Միքայէլ Միքայէլեանը յաջողութեամբ աւարտած է դահուկավագրի մինչեւ 23 տարեկաններու աշխարհի առաջնութեան ազատ ոճի 15 կմ մրցավագրը:

Ինչպէս կը տեղեկացէ Հայաստանի դահուկասպորտի ֆեդերացիայի գլխաւոր քարտուղար Գագիկ Սարգսեանը, առաջնութեանը մասնակցած են 30 պետութիւններու 71 դահուկորդ: Միքայէլ Միքայէլեանը 36:17.10 արդիւնքով գրաւած է 8-րդ տեղը: Անցած տարուայ համեմատ ան 3 աստիճանով բարելաւած է իր դիրքը: